

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	2
Մակրոտնտեսական ցուցանիշներ	3
Ֆինանսական միջոցներ	4
Աուդիտ	11
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր	11
Արդյունաբերություն	17
Քաղաքաշինություն	22
Տրանսպորտ, ճանապարհաշինություն գործունեության բնագավառ	24
Ջրամատակարարում	26
Բնակարանային եւ ենթակառուցվածքների	26
Գազամատակարարում	28
Էներգամատակարարում, Կապ	28
Գյուղատնտեսություն	29
Բնապահպանություն	29
Հողաշինություն և հողօգտագործում	32
Առևտուր և սպասարկում	35
Տարածքային կառավարում	37
Տեղական ինքնակառավարում	40
Կրթություն	38
Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	45
Առողջապահություն	54
Սոցիալական ապահովություն	57
Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանություն	65
Արտաքին կապեր, միջազգային կազմակերպություններ	77
Փոխհարաբերություններ մարզպետարանի և պետական մարմինների միջև	80
Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր	83
Քաղաքաշինություն և արտակարգ իրավիճակներ	84
Զորակոչ և զորհավաքային նախապատրաստություն	90
Օրինականության պահպանում	91
Աշխատանք կադրերի հետ և աշխատանքային կարգապահություն	92
Մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները	93
Մարզպետարան մուտք գործած գրությունների ընթացքը	95

Ն Ա Խ Ա Բ Ա Ն



Ընդհանուր տեղեկություններ

Աշխարհագրական դիրքը՝	Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝	ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝	Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝	3799 քառ. կմ
Բնակչության թիվը՝	217.8 հազար մարդ, այդ թվում՝
➤ քաղաքային	128.9 հազար մարդ,
➤ գյուղական	88.9 հազար մարդ,
Մարզի համայնքների թիվը՝	56, որից՝
Խոշորացված համայնքներ -11	
➤ Մարզկենտրոնը	ք. Վանաձոր
➤ Կառավարման ձևը	տարածքային կառավարում
Ազգային կազմը	
➤ հայեր	97.0 %,
➤ ռուսներ	1.5 %,
➤ հույներ	1.0 %,
➤ այլ ազգություններ	0.5 %:

Սահմանամերձ բնակավայրերը՝ 5 (Զիլիգա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ) 2017 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը:
- Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը:
- Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը:
- Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:
Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2017թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝
- Պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը:
- Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը և հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի գազաֆիկացումը:
- Արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին:
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում և աջակցումը:
- Տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:
- Կապի նոր ծառայությունների բացմանը աջակցումը և սպասարկման որակի բարելավման խթանումը:
- Մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման աջակցումը:
- Բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:
- Առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը:
- ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:
- Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը:
- «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Խոշորացման արդյունքում Թումանյանի, Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների թվով 61 համայնքների միավորման արդյունքում ստեղծվել են 10-ը խոշորացված համայնքներ՝ Ալավերդի, Ախթալա, Օձուն, Շնող, Ստեփանավան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Տաշիր, Մեծավան, Սարչապետ:
- 2017 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի ընտրություններ 13 համայնքներում, որից 10-ում խոշորացված համայնքների ղեկավարների և ավագանիների, 2-ում համայնքի ղեկավարի, 1-ում ավագանու անդամների:
- Աշխատանքներ են իրականացվել համայնք-մասնավոր հատված համագործակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ 01.01.2017թ. դրությամբ 9-ը համայնքները մասնավորի կառավարմանը փոխանցել էին 17 ծառայություններ, 31.12.2017թ. դրությամբ

համապատասխանաբար՝ 30 համայնք և 53 ծառայություններ: Մասնավոր հատվածի կառավարմանը փոխանցված ծառայությունները մեծամասամբ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի ծառայություններն են:

• Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 56 մրցույթներ, որոնցից կայացել են 19-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 25 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 24-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 16-ը:



2017թ. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

(մլն. դրամ)

	2017թ. /փաստացի/	Աճը 2016թ. նկատմամբ, %	Տեսակարար կշիռը հանրապետական ծավալում, %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	146408.6	98.6	8.8
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը*	78900.0	115.8	8.7
Շինարարության ծավալը	17785.4	106.0	4.3
Մանրածախ առևտրի շրջանառությունը	37635.6	94.7	2.8
Ծառայությունների ծավալը	18214.7	115.5	1.3
Ընդամենը մարզում	298944.3	103.8	5.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը (մլն ԿՎտ/ժ)	162.6	77.1	2.1 (ՀԷԿ-ի 7.1%)
Միջին ամսական անվանական աշխատավարձը (դրամ)	155810	105.8	-
Արտաքին ապրանքաշրջանառությունը (հազ դոլար), այդ թվում՝	285907.1	106.2	4.5
ա/ արտահանում	198766.9	102.1	8.9
բ/ ներմուծում	87140.2	116.2	2.1

2017թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների համախառն արտադրանքը (ծավալը) կազմել է 298.9 միլիարդ դրամ (հանրապետականի 5.2%-ը) կամ աճը 2016թ. նկատմամբ կազմել է 103.8%:

Համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) 2016թ. մարզում կազմել է 225.0 մլրդ դրամ (հանրապետականը՝ 5079.9 մլրդ դրամ), մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 1000026 դրամ (հանրապետականը՝ 1697835 դրամ) կամ հանրապետականին զիջում է 1.7 անգամ: 2016թ. Լոռու մարզի ՀՆԱ-ի տեսակարար կշիռը հանրապետական ընդհանուր ցուցանիշում կազմել է 4.4%: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով մարզում ազգային միջին տոկոսի նկատմամբ կազմել է 59%, 2009թ. 42%-ի և 2015թ. 63%-ի դիմաց:

Մեկ շնչին ընկնող տնտեսական ցուցանիշները ՀՀ-ում և Լոռու մարզում 2017թ.

(մշտական բնակչության թիվը 1.01.2018թ. ՀՀ – 2972.9 հազ. մարդ, առանց ք.Երևանի – 1896.5 հազ. մարդ, Լոռի – 217.8 հազ. մարդ)

	Չափի միավոր	ՀՀ	Լոռի	Լոռի ±	Լոռի %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	դրամ	558712.1	672215.8	+113503.7	120.3
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	դրամ	305022.0	362259.0	+57237.0	118.8
Շինարարության ծավալը	դրամ	139888.1	81659.3	-58228.8	58.4
Մանրածախ առևտրի շրջանառությունը	դրամ	449306.3	172798.9	-276507.4	38.4
Ծառայությունների ծավալը	դրամ	488921.8	83630.4	-405291.4	17.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	ԿՎտ/ժ	2611.2	746.6	-1864.6	28.6
Արտաքին ապրանքաշրջանառությունը	դոլար	2126.1	1312.7	-813.4	61.7
ա/ Արտահանում	դոլար	752.8	912.6	+159.8	121.2
բ/ Ներմուծում	դոլար	1373.3	400.1	-973.2	29.1
Համայնքների սեփական եկամուտներ (փաստ.)	դրամ	12906.0	8380.1	-4525.9	64.9
ա/ Ընդամենը	դրամ	9543.5	8380.1	-1163.4	87.8
բ/ Առանց Երևան քաղաքի					

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

2017թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2017թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 96.6%-ով կամ նախատեսված 7333.3 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 7086.7 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6406.9 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 1852.8 մլն. դրամ:

(հազար դրամ)

h/h	Եկամուտների անվանումը	2016թ. Բյուջե			2017թ. Բյուջե			2017թ-ի աճը 2016թ-ի նկատ.	2017թ-ի փաստ. նկատ. (%)
		այլան	փաստ.	կատ %	այլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	354326.1	295319.0	83.3	357876.1	312926.7	87.4	17607.7	106.0
2	Գույքահարկ	653600.7	701677.6	107.4	711676.9	738979.3	103.8	37301.7	105.3
3	Պետական տուրք	45950.0	41553.7	90.4	45850.0	50950.1	111.1	9396.4	122.6
4	Տեղական տուրք	107918.9	107263.2	99.4	110787.2	116456.8	105.1	9193.6	108.6
5	Գույքի վարձ. վճար	232033.4	213498.5	92.0	217662.3	221675.1	101.8	8176.6	103.8
6	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	7075.0	4502.5	63.6	24005.0	21529.2	89.7	17026.8	478.2
7	Տեղական վճարներ	296226.0	254172.0	85.8	335802.0	330598.2	98.5	76426.2	130.1
	որից աղբահանության վճար	239975.0	197888.6	82.5	241956.8	226199.8	93.5	28311.2	114.3
8	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	3504.5	2918.9	83.3	4852.4	7254.5	149.5	4335.6	248.5
9	Մուտքեր տուգանքներից	3960.0	2347.4	59.3	2640.0	1315.5	49.8	-1031.9	56.0
10	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	1500.0	300.0	20.0				-300.0	0.0
11	Այլ եկամուտներ	41101.0	44500.9	108.3	56509.4	51164.5	90.5	6663.6	115.0
12	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	4537482.6	4441760.1	97.9	4301461.5	4301461.5	100.0	-140298.6	96.8
13	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ				230364.9	7677.8	3.3	7677.8	
14	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	80969.5	80864.7	99.9	80857.0	80688.4	99.8	-176.3	99.8
15	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	52555.2	54055.6	102.9	170209.4	164806.1	96.8	110750.5	304.9
	ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից		-8171.3			-552.1		7619.2	6.8
	Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ	6418202.9	6236562.7	97.2	6650554.1	6406931.6	96.3	170368.8	102.7
16	Տարեսկզբի ազատ մնացորդ	26050.4	26050.4	100.0	29829.7	29829.7	100.0	3779.3	114.5
	Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր	6444253.3	6262613.1	97.2	6680383.8	6436761.3	96.4	174148.1	102.8
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կտրավարման այլ մակարդակներից	7051.6	7051.6	100.0	9508.6	8639.2	90.9	1587.6	122.5


2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	59212.0	57966.9	97.9	88716.0	86627.3	97.6	28660.4	149.4
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	77503.9	43050.5	55.5	144662.5	105937.0	73.2	62886.6	246.1
4	Այլ մուտքեր	70.0	70.0	100.0	500.0	500.0	100.0	430.0	714.3
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	143837.5	108138.9	75.2	243387.0	201703.5	82.9	93564.6	186.5
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	643268.9	643268.9	100.0	554155.1	554155.1	100.0	-89113.8	86.1
Ֆոնդային բյուջեի մուտքեր		787106.4	751407.8	95.5	797542.1	755858.6	94.8	4450.8	100.6
Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ		1745695.6	1667753.6	95.5	1867661.3	1852849.9	99.2	185096.4	111.1
Ընդամենը բյուջեի եկամուտներ		6484536.5	6301651.2	97.2	6749278.6	6502698.1	96.3	201046.9	103.2
Ընդամենը բյուջեի մուտքեր		7153855.8	6970970.5	97.4	7333263.4	7086682.9	96.6	115712.4	101.7

Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 96.3%-ով՝ նախորդ տարվա 97.2%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 82.9%-ով՝ նախորդ տարվա 75.2%-ի դիմաց:

Համայնքների սեփական եկամուտները 2016թ. կտրվածքով կազմել է 1667.8 մլն դրամ, 2017թ. կտրվածքով կազմել է 1852.8 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2016թ-ի նկատմամբ կազմել է 111.1%, բացարձակ աճը 2016-ի նկատմամբ՝ 185.1 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 114.7%, Գուգարքի տարածաշրջանի համայնքներում՝ 108.9%, Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 113%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 109.9%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 114.2%:

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 45.6%, ապա Թումանյանի տարածաշրջանը 19.7%, Սպիտակր տարածաշրջանը՝ 12.7%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 12.1%, Տաշիրի տարածաշրջանը՝ 9.9%:




2017թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 13 համայնքներում (համայնքների 23.2%-ը, այդ թվում՝ Սպիտակում՝ 5 համայնք, Գուգարքում՝ 8 համայնք, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը՝ բոլոր խոշորացված համայնքներում սեփական եկամուտները գերազանցել են նախորդ տարվա միավորված ցուցանիշները:

Սեփական եկամուտների գծով 2017թ. համար նախատեսվել են 1867.7 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 1852.8 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 99.2%, 2018թ. համար նախատեսվել է 2258.7 մլն. դրամ, կամ աճը 2017թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 120.9%, փաստացիի նկատմամբ 121.9%: Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2017թ. համար կազմում է 8038 դրամ, 2018թ. համար նախատեսվել է 10216 դրամ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե խոշորացված համայնքների տվյալները միավորենք ապա 2016 թ-ին սեփական եկամուտները մինչև 60% կատարել էին 1 համայնք, 2017 թ-ին այդպիսի համայնք չկա, նույն ժամանակաշրջանում 60-80% կատարում են ապահովել համապատասխանաբար 7 և 5 համայնքներ, 80-100% համապատասխանաբար 26 և 23 համայնքներ, 100%-ից ավել՝ 22 և 28 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը նվազել է 3-ով, 80-100%-ից ավել նվազել՝ 3-ով, իսկ 100%-ից ավել աճել՝ 6-ով: Փոքր համայնքների ցածր կատարողականները մեծ համայնքների ցուցանիշներում փոքր տեսակարար կշիռ ունեն, արդյունքում խոշորացված համայնքների կատարողականներն ավելի բարձր են ստացվում ըստ համայնքների վերլուծություններ կատարելիս:

Եկամուտների հավաքագրման գործընթացում կան բազմաթիվ օբյեկտիվ ու սյուբեկտիվ գործոններ, որոնցից որպես հիմնական կարելի է համարել համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու աշխատանքը: Ուստի և համայնքների խոշորացման գործընթացում որպես հիմնական գործոն ենթադրվում է համայնքների աշխատակազմերի կադրերի որակական աճը:



2017 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 16.9%, գույքահարկինը՝ 39.9%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 12.0%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 17.7%, 42.1% և 12.8-ի դիմաց, ինչը խոսում է այն մասին, որ 2017թ. սեփական եկամուտների տեսակարար կշիռում ավելացել է այլ եկամուտների,

մասնավորապես, տեղական վճարների բաժինը, որը պայմանավորված է հիմնականում ծնողական վճարները որպես տեղական վճար համայնքի բյուջեում ներառելով:


2017թ. հողի հարկի 357.9 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 312.9 մլն դրամ, կամ 87.4%, (2016թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 106.0%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից ավել է 17.6 մլն. դրամով: Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2017թ. համար կազմում է 1415 դրամ, 2018թ. համար նախատեսվել է 1658 դրամ:

Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 65.3% , իսկ Ստեփանավանի տարածաշրջաններում 87.4%, Թումանյանի տարածաշրջանում 92.9%, Գուգարքի տարածաշրջանում 96.4%, Սպիտակի տարածաշրջանում 94.3%:

Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի 80%-ը գերազանցում է 43 համայնքներում, որից 100%-ը 26 համայնքներում:

Հողի հարկի հավաքագրումը 2016թ. համեմատությամբ նվազել է 20 համայնքներում, կամ համայնքների 35.7%, այդ թվում՝ Թումանյանի տարածաշրջանում՝ 1, Գուգարքի տարածաշրջանում՝ 8, Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններում՝ 2 ական, Սպիտակի տարածաշրջանում՝ 7 համայնքներ:

Հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



Գույքահարկի գծով 2017թ. համար նախատեսվել է 711.7 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 739.0 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 103.8%, (2016թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 105.3%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 37.3 մլն. դրամ:


Մարզի 1 բնակչի հաշվով գույքահարկի հավաքագրման ցուցանիշը 2017թ. համար կազմում է 3342 դրամ, 2018թ. համար նախատեսվել է 3603 դրամ:

Գույքահարկի հավաքագման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 103.8%, Գուգարքի տարածաշրջանում՝ 103.4%, Սպիտակի տարածաշրջանում՝ 108.3%, Թումանյանի տարածաշրջանում՝ 100.4% , Տաշիրի տարածաշրջանում՝ 112.3% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 99.3%:


Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 51 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 31 համայնքներ:

Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Սպիտակում՝ 111.2%, Ստեփանավանում՝ 110.3%, Գուգարքում՝ 106.0%, նվազել՝ Թումանյանում՝ 98.9%, Տաշիրում՝ 98.7%, :

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



2017թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 217.7 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել 221.7 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 101.8%, (2016թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 103.8%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 8.2 մլն. դրամ: Մարզի 1 բնակչի հաշվով այս ցուցանիշը 2017թ. համար կազմում է 1002 դրամ, 2018թ. համար նախատեսվել է 1015 դրամ:



Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 105.1%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 99.4%-ի դիմաց, փաստացի հավաքագրումը աճել է 9.2 մլն. դրամով: 2017թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 4 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է 111.1%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 9.4 մլն. դրամով:

„Մաքուր Հայաստան,, ծրագրի կատարումն ապահովելու նպատակով մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնաձախսաձեռնման եղանակով կատարելու և անհրաժեշտ մակարդակի գանձումներ ապահովելու նպատակով մարզի բոլոր համայնքներում, բացի շատ փոքր համայնքներից, առաջարկվել է նախատեսել աղբահանության գծով վարձավճարներ և ապահովել դրանց գանձումը: Ըստ համայնքների կողմից ներկայացված 2018թ. բյուջեների, աղբահանության գծով վարձավճարները նախատեսվել է 327.3 մլն. դրամ , 2017թ. Նախատեսված 241.9 մլն. դրամի կամ փաստացի 226.2 մլն. դրամի դիմաց: Նախատեսվել է աճ 2017թ. պլանի նկատմամբ 35.3 %, իսկ փաստացիի նկատմամբ 44.7 %:

2017թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 4301461.5 հազ.դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2017թ-ի համար նախատեսվել են 6680.4 մլն. դրամ, 01.01.2018թ. դրությամբ փաստացի վճարվել է 6157.0 մլն. դրամ, կամ 92.2 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 797.5 մլն. դրամ, որից վճարվել է 515.7 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 64.7%-ով:

հազար դրամ					
Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2458625.8	2328404.1	94.7	37.8
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2080.0	864.0	41.5	0.0

3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՆՎՏԱՆԳ. ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	206595.7	188463.3	91.2	3.1
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	643218.1	625873.0	97.3	10.2
	այդ թվում աղքատացում	541357.2	528880.7	97.7	
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	325722.5	298835.9	91.7	4.9
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	2490.0	1660.0	66.7	0.0
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	584982.4	540282.0	92.4	8.8
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1961160.6	1866696.4	95.2	30.3
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	223946.8	198593.9	88.7	3.2
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	271562.0	107317.0	39.5	1.7
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	144662.5	105937.0	73.2	1.7
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6680383.8	6156989.6	92.2	93.8
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	249280.5	184066.0	73.8	35.7
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	110231.4	1576.9	1.4	0.3
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	116086.7	103567.3	89.2	20.1
	այդ թվում աղքատացում	33180.8	27274.9	82.2	
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	196897.8	145049.4	73.7	28.1
5	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	44368.8	21869.3	49.3	4.2
6	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	80529.7	59645.7	74.1	11.6
7	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	147.1	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		797542.1	515774.6	64.7	7.9
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		7333263.4	6566827.2	89.5	

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2017թ. համար նախատեսվել են 7333.3 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 6566.8 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 89.5%: 2017թ. համար 1 բնակչի հաշվով ծախսերի միջին մարզային ցուցանիշը կազմում

է 29700 դրամ, Համայնքների բյուջեների վարչական մասի կատարված փաստացի 6157.0 մլն. դրամ ծախսի մեջ համայնքապետարանների պահպանման ծախսերը կազմում են 2328.4 մլն. դրամ կամ 37.8%, 1 շնչին ընկնող ապարատի պահպանման ծախսի միջին մարզային ցուցանիշը կազմում է 10531 դրամ:

Մարզի 56 համայնքների 2017թ.բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1874.5 մլն դրամ, որը կազմում է ծախսերի մոտ 30.4%-ը, կամ ապարատի պահպանման ծախսերի 80.5%-ը: Համայնքներում վարչական ծախսերի ընդհանուր ծավալում բարձր է մնում աշխատանքի վարձատրության հոդվածով կատարվող ծախսերի տեսակարար կշիռը:

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 81634.0 հազար դրամ, որից՝ Վանաձոր համայնք՝ 81080.0 հազ. դրամ, Ազնվածոր՝ 247.0 հազ. դրամ, Ձորագյուղ՝ 307.0 հազ. դրամ:

Ըստ ոլորտների ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 30.3%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 52.5%, կամ բյուջեների վարչական մասի 15.9%-ը: Ընդ որում 2017թ. մարզում համայնքային բյուջեներից ֆինանսավորվող նախադպրոցական կրթության հիմնարկների թիվը 69 է, որոնք սպասարկում են 26 համայնքների, այս համայնքներում 1 երեխայի կտրվածքով տարեկան միջին ծախսը կազմում է 234.3 հազ. դրամ կամ տատանվում է 119.2 հազ. դրամից մինչև 438.1 հազ. դրամ, ընդ որում ամենաբարձրը Դարպաս համայնքում է 438.1 հազ. դրամ, Գուգարքում՝ 424.5 հազ. դրամ, Եղեգնուտում 396.3 հազ. դրամ Մեծավանում՝ 366.3 հազ. դրամ, Վանաձորում՝ 215.7 հազ. դրամ, Թումանյանում՝ 253.7 հազ. դրամ, Սպիտակում՝ 293.5 հազ. դրամ, Օձունում՝ 183.8 հազ. դրամ, Մարգահովիտում 207.5 հազ. դրամ, Ստեփանավանում՝ 287.3 հազ. դրամ, Ալավերդիում՝ 264.6 հազ. դրամ, Ախթալայում՝ 206.8 հազ. դրամ, Տաշիրում՝ 196.7 հազ. դրամ:

Աղբահանության գծով համայնքային բյուջեներով որպես ընթացիկ ծախս 2017թ. նախատեսվել է 541.4 մլն. դրամ, փաստացի կատարվել է 528.9 մլն. դրամ, 2018թ. բյուջեներով նախատեսվել է 623.9 մլն. դրամ, կամ ծախսի աճ է նախատեսվել 15.1% պլանի նկատմամբ և 18% փաստացիի նկատմամբ: 2017թ. փաստացի ծախսածածկումը կազմել է 42.8%, 2018թ. համար նախատեսվել է 52.2%:

Աղբահանության գծով մարզում խոշորացումից հետո ծախսեր իրականացրել են 37 համայնքներում, որի համար 2017թ. ծախսվել է 556.2 մլն. դրամ, որից վարչական բյուջեով՝ 528.9 մլն. դրամ, ֆոնդային բյուջեով՝ 27.3 մլն. դրամ: Աղբահանության գծով ընթացիկ ծախսը կազմել է վարչական բյուջեի ծախսերի ընդհանուր գումարի 8.6%ը, կամ մարզում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 2392 դրամ:

Աղբահանության համար վարչական բյուջեով կատարված 2017թ. փաստացի ծախսը Վանաձորում կազմել է 259.7 մլն. դրամ (կատարողականը՝ 98.3%, տեսակարար կշիռը՝ 12.1%), Ալավերդիում՝ 78.0 մլն. դրամ (կատարողականը՝ 99.9%, տեսակարար կշիռը՝ 14.7%), Ստեփանավանում՝ 52.4 մլն. դրամ (կատարողականը՝ 100.0%, տեսակարար կշիռը՝ 12.6%), Սպիտակում՝ 25.7 մլն. դրամ (կատարողականը՝ 97.1%, տեսակարար կշիռը՝ 7.1%), Ախթալայում՝ 14.2 մլն. դրամ (կատարողականը՝ 93.7%, տեսակարար կշիռը՝ 8.6%) և Թումանյանում՝ 15.0 մլն. դրամ (կատարողականը՝ 100.0%, տեսակարար կշիռը՝ 14.0%):

Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2017թ. կազմել է 198.6 մլն. դրամ կամ վարչական ծախսերի 3.2%-ը: Մարզի 56 համայնքներից սոցիալական ծրագրեր (հիմնականում սոց. օգնությունների տեսքով) իրականացվել են 54 համայնքներում, բացառություն են կազմել Ձորագետավան և Անտառաշեն համայնքները, այս

համայնքներում գումարների սղության պատճառով բյուջեով նախատեսվել է միայն ապարատի պահպանման ծախսեր:



ԱՌՈՒԴԻՏ

2017թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է 78 աուդիտ, որից մարզային ենթակայության կրթական՝ 49 կրթական ՊՈԱԿ-ներում /ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում/, իսկ առողջապահական 26 ընկերություններում /«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականություն/ և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժին, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժին, Հողաշինարարության և հողօգտագործ-ման բաժին բաժին) /ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող գործառույթներ/:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի 3 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տրված երկու ՊՈԱԿ-ի տնօրեն ենթարկվել են կարգապահական տույժի՝ ստացել է «խիստ նկատողություն», իսկ ևս երկուսը՝ «նկատողություն»: Արձանագրվել է 51.5 մլն. դրամի տարաբնույթ խախտումներ, որից շուրջ 4.24 մլն. դրամը վերականգնման կամ վերաձևակերպման գումար է/նախորդ տարի՝ 10.09մլն. դրամ/, որից ավելի քան 1.5 մլն. դրամը ենթակա է պետբյուջե վերադարձման/նախորդ տարի՝ 2.1 մլն. դրամ/:

Նախկինում Աուդիտի ընթացքում արձանագրվել են հետևյալ խախտումները՝

1. Տնօրենների կողմից տրված հրամաններում բացակայում են իրավական հիմքերը կամ ՀՀ օրենքներին և ՀՀ կառավարության որոշումներին համապատասխան հոդվածներին հղումները:

2. Դպրոցի կառավարման խորհրդի ձևական գործունեությունը.

3. Դպրոցներում իրականացվող դասաժամերի ոչ պատշաճ ձևով հաշվառումները.

4. Աշխատողներին տարաբնույթ վճարումների կարգի և չափերի /կապված վարձատրության, արձակուրդի, ինչպես նաև տոնական և հիշատակի օրերի հաշվարկման հետ/ խախտումները.

5. Նախահաշիվների, ծախսային և հաշվապահական հաշիվների, դրամարկղային գործառնությունների վարման, եկամտահարկի, ժամանակավոր անաշխատունակության նպաստների հաշվարկման հետ կապված խախտումներ.

6. Գույքի դուրս գրման, տարբեր միջոցների անհարկի վատնման, շինարարական աշխատանքների ծախսային մասերում կատարված խախտումները.

7. Մի շարք դեպքերում գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքին ոչ համապատասխան, իսկ առանձին դեպքերում խախտվել են նաև «Հաշվապահական հաշվառման մասին» «Շահութահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և այլ ՀՀ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջները:

Անցած 5 տարիների գործունեության արդյունքում կարող ենք փաստել, որ 2013թ. համեմատ 2017թ. պատկերը կտրուկ լավացել է, նվազագույնի են հասցված նախկին

խախտումները և թերությունները, մասնավորապես՝ ուսուցիչ-ների բաց թողած և փոխարինած ժամերի մատյանների վարման, գործավարության, աշխատանքի հաճախումների մատյանների վարման, աշխատակիցների անհարգելի բացակայություններ և մի շարք այլ գործառույթների գծով գրեթե խախտումներ չեն արձանագրվում:

Ելնելով դրանից Աուդիտի բաժինը, հիմք ընդունելով իր հնգամյա գործունեությունը, նախատեսում է հետագա աշխատանքներում ներառել այն գործառույթները, որոնք վերադաս ստուգող մարմինների /մասնավորապես՝ ՀՀ վերահսկիչ պալատ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն և այլն/ ուշադրության կենտրոնում են՝ դրանով իսկ առավել հստակեցնել և կառավարելի կարելի է դարձնել մարզում հետագա ստուգումների ընթացքը՝ բացառելով խախտումները և թերացումները:

Մարզպետի կողմից գրություններ են հասցեագրվել աուդիտի ենթարկված կազմակերպությունների տնօրեններին: Ներքին աուդիտի բաժնի կողմից արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր: Ներքին աուդիտի բաժնի աշխատակիցների կողմից իրականացվում է ամենօրյա խորհրդատվական աշխատանք, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ համապատասխան թեմատիկ խորհրդակցություններ: Ստեղծված է գործունեության գրագետ և փոխվստահության միջավայր՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2016 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի գերակայությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2014-2017թ.թ. սոցիալ – տնտեսական զարգացման ծրագրի» հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումը:

ՄԶԾ-ի հիմնական նպատակը ՀՀ երկարատև կայուն տնտեսական աճին նպաստող խնդիրների առաջադրումն ու մարզի համաչափ զարգացման ապահովումն է: Առաջնահերթ նպատակների շարքում է աղքատության հաղթահարումը և տարածքային համաչափ զարգացումը: Մարզպետարանում, որպես մարզային զարգացման որակյալ ու հիմնավորված ծրագրեր կազմելու գործընթացների համակարգող ու դրանց իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներն ապահովող մարմնում, 2016թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ըստ ոլորտային աշխատանքային խմբերի (Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն, Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում, Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր, Առողջապահություն և սոցիալական ապահովություն, Քաղաքաշինություն, Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում), Տարածքային կառավարում, տեղական

ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն) մշակվել է ՄԶԾ-ի 2016թ. Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ),

- Մարզպետարանի ռեսուրս կենտրոնում թարմացվել են ՄԶԾ-ի կազմման համար կարևորագույն էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանները (մարզի ՏԻՄ-երի կողմից կազմված և հաստատված համայնքների քառամյա զարգացման ծրագրերի, համայնքային բյուջեների հիման վրա):
- Ընթացիկ տարում ՄԶԾ-ով նախատեսված աշխատանքները ենթարկվել են վերլուծության մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, կազմվել է ՄԶԾ-ով 2016թ. նախատեսված միջոցառումների մոնիտորինգի և գնահատման հաշվետվություններ կիսամյակային և տարեկան կտրվածքներով
- Իրականացվել է հանրային իրազեկում մարզային լրատվամիջոցների միջոցով, ինչպես նաև 2016թ. ՏԱՊ-ն ու ՄԳ հաշվետվությունները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում

Լոռու մարզի 2017-2025թթ. տարածաշրջանային զարգացման ռազմավարություն (Մարզոճագմ ծրագրի մեկնարկ)

2016թ.-ին մեկնարկվեց Լոռու մարզի 2017-2025թթ. տարածաշրջանային զարգացման ռազմավարության (ՏՀՌ կամ Ծրագիր) մշակման աշխատանքները: Այն մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը տրամադրում է մարզում երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն ձևավորվում է ազգային ռազմավարական շրջանակների հետ սերտորեն, և մասնակցային եղանակով ներգրավվում բոլոր շահագրգիռ կողմերին:

Մշակված ռազմավարության ծրագրի նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը 2017թ.-ին:

Ըստ ԵՄ փորձագիտական խմբի մշակված մեթոդաբանության, ՏՀՌ-ի մշակման համար հաշվի են առնվելու հետևյալ հիմնական ասպեկտները՝

1. ՏՀՌ-ները պետք է մշակվեն 2016-2025թթ. Հայաստանի Տարածաշրջանային Զարգացման Ռազմավարության հետ սերտորեն, և սերտորեն աջակցեն ՀՏՀՌ-ում առկա նպատակներին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի կարիքները, կարողությունները և զարգացման ուղղությունները:
2. ՏՀՌ-ները պետք է հաշվի առնեն այլ ազգային փաստաթղթեր, ինչպիսիք են Հայաստանի Զարգացման Ռազմավարությունը, ոլորտային ռազմավարությունները, և այլ կառավարական ծրագրեր, և պետք է խորհրդակցեն համապատասխան նախարարությունների և գործակալությունների հետ:
3. ՏՀՌ-ները պետք է կառուցվեն հիմնվելով փաստերի վրա, և միջմարզային տարբերությունների և միջմարզային կառուցվածքային բազմազանությունների վերաբերյալ խորը գիտելիքներից ելնելով: Պետք է ունենալ բոլոր դերակատարների համապատասխան ներգրավվածություն և աջակցություն՝ տեղական մարմիններ, բիզնես համայնքներ, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ և այլն:

4. Քանի որ ՏՀՌ-ն դառնում է հիմք Տարածաշրջանային զարգացման ծրագրավորման և ֆինանսական հոսքի համար, շատ կարևոր է, որ դրանք իրատեսականորեն ներկայացնեն մարզում առկա իրավիճակը և ռազմավարական խնդիրները:

Համայնքների զարգացման ոլորտ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2016թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման 5-ամյա ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա:

2016 թվականին մարզի բոլոր համայնքների (բացառությամբ՝ Վանաձոր և Գյուլագարակ համայնքների) ավագանիները հաստատել են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերը: Դրանք կազմվել և հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մշակված նոր մեթոդաբանության համաձայն, որը սահմանում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ, Ծրագիր) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, գործընթացը և նպատակաուղղված է համայնքների կայուն զարգացումն ապահովող չափելի արդյունքների սահմանմանը և միջոցառումների նախանշմանը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Փոքր և միջին ձեռներեցության զարգացման ոլորտ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2016թ. ՄՀԾ-ով առաջարկվել է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

2016թ. Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ՀԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2016թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ թիրախային աջակցությունները՝

✓ Խորհրդատվական եւ տեղեկատվական աջակցություն	1505
✓ Աջակցություն սկսնակ գործարարներին /ԱՍԳ/	25
✓ Ֆինանսական աջակցություն սկսնակ գործարարներին	1
✓ Կանանց ձեռներեցության զարգացման ծրագիր - «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության	19

անցկացում
✓ ՀԴՄ-ների փոխհատուցում

45

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտ

ՀՀ ՏԿԶ նախարարության նախաձեռնությամբ հաջողությամբ շահագործվել է ՏԿԶՆ էլեկտրոնային կառավարման տեղեկատվական բաց համակարգը, բաղկացած ՀՀ ՏԿԶ նախարարության եւ 10 մարզերի ինտերնետային կայք-էջերից: Այն օժտված է ինովացիոն տեխնոլոգիաների բոլոր հնարավորություններով: Այս կայքերը թույլ են տալիս ազգաբնակչությանը համացանցի միջոցով ուղիղ կապ հաստատել մարզպետարանի հետ: Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքն է՝ www.lori.mtaes.am:

Էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի շահագործումը եղել է մարզպետարանի ներքին փաստաթղթաշրջանառության ամենօրյա, ինչպես նաեւ էլեկտրոնային ինֆորմացիայի փոխանակման աշխատանքների իրականացման արդյունք՝ մարզպետարանի և ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչական մարմինների աշխատակազմերի միջև, որտեղ տեղադրված է նմանատիպ համակարգ:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, մարզպետարանը համագործակցում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, ինչպես նաև ՏՏ ոլորտի և իրենց գործունեության մեջ ՏՏ ոլորտը կիրառող մարզի առաջատար ձեռնարկությունների («Ինստիգեյթ» ՓԲԸ-ի Վանաձորի մասնաճյուղ, «Ա2» ՍՊԸ, «Գործարարության զարգացման և օժանդակման կենտրոն» և այլն) հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում որպես հաջողված արդյունք կարելի է նշել ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Համաշխարհային բանկի շուրջ 6.0 մլն դոլար ֆինանսական աջակցությամբ 2014թ.-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնումը, որի գլխավոր օպերատոր է նշանակվել Հայաստանի Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ): Կենտրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2016թ.-ի աշնանը ՀՀ Նախագահի անմիջական մասնակցությամբ:

Ծագիրն ուղղված է նպաստելու Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև մարզի սկսնակ ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին բիզնես աջակցության ու խորհրդատվության տրամադրմանը:

Ներկայումս Կենտրոնում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտական ոլորտների ուսումնական լաբորատորիաները, Համատեղ աշխատանքային տարածք՝ սկսնակ թիմերի համար:

Կենտրոնում հիմնվել է նաև CNC համակարգով մետաղամշակման գերժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա, որը բացառիկ հնարավորություն կընձեռի ճարտարագիտական ոլորտում (ներառյալ՝ ճշգրիտ ճարտարագիտություն, մեքենաշինություն, մաքուր տեխնոլոգիաներ) նախատիպերի մշակման, փորձարկման և նոր արտադրանքների ու լուծումների մշակման համար՝ ինչը կխթանի նորարարությունների զարգացումը Հայաստանում, հնարավորություն ընձեռնելով գյուտարարներին, տեխնոլոգիական ընկերություններին և գիտնականներին զգալիորեն արագացնել գյուտի/նոր արտադրանքի մուտքը շուկա:

Այս և եռաչափ տալիքներով հազեցած լաբորատորիաները, ինչպես նաև համապատասխան մասնագետների առկայությունը ՎՏԿ-ում թույլ է տալիս կազմակերպել կարևոր ճարտարագիտական առարկաների համատեղ դասընթացներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, որորնց որակը և բովանդակությունը համապատասխանում է տվյալ ոլորտին ներկայացվող համաշխարհային շուկայի ժամանակակից պահանջներին:

Շարունակական աշխատանքներ են տարվում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ ՎՏԿ-ում համալսարանի ուսումնական ծրագրերի մի մասի իրականացման ուղղությամբ, ինչը կապահովի ուսանողների հասանելիությունը ոչ միայն կենտրոնի ժամանակակից ենթակառուցվածքներին և լաբորատորիաներին, այլև ժամանակակից կրթական բովանդակությանը՝ կարևոր խթան հանդիսանալով կրթության որակի բարձրացման համար:

Կենտրոնում կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ և սեմինարներ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- համակարգչային ճարտարագիտություն (Lab View, տրամաբանական սինթեզ, թվային նախագծում, թվային փորձարկում, թվային ազդանշանի մշակում),
- Web ծրագրավորում (Java Script, PHP, HTML, տվյալների բազա),
- մոբայլ ծրագրավորում (Java ծրագրավորում),
- ընդհանուր դասընթացներ (ալգորիթմների տեսություն, C#, .net, C Fundamentall, Objective C, դիսկրետ մաթեմատիկա, գործարար անգլերեն):

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի շրջանակում հանրապետությունում առաջին անգամ մեկնարկել են 9-12 դասարանների դպրոցականների համար առցանց դասընթացներ՝ օգտագործելով «SoloLearn» ուսումնական հարթակը:

Կենտրոնում նախաձեռնվել է «ՏեխԴպրոց» ակումբը, որի հիմնական նպատակներն են դպրոցականների շրջանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների նկատմամբ հետաքրքրության խթանումը, դպրոցականների մոտ թիմային աշխատանքի և մտածելակերպի զարգացումը, դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելը:

Ճարտարագիտական ոլորտը խթանելու նպատակով կազմակերպվել են համակարգչային նախագծման AutoCAD և SolidWokrs ծրագրերի դասընթացներ ուսանողների և գործող մասնագետների համար:

2016թ.-ին կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացներին և սեմինարներին մասնակցել են շուրջ 2000 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ:

Ձեռներեցության զարգացման նպատակով շարունակական աշխատանքներ են իրականացվել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի ուսանողների, ՀԱԴՀ-ի Վանաձորի մասնաճյուղի և Վանաձորի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների հետ՝ տեխնոլոգիական թիմեր ստեղծելու ուղղությամբ:

Կենտրոնում ձևավորված համատեղ աշխատանքային տարածքում տեղակայված են Կենտրոնի աքսելերացիոն ծրագրում ներառված սկսնակ թիմերը:

Առաջին անգամ Հայաստանում Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամը, Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի շրջանակում հայտարարել է նաև Ինժեներական, Մաքուր և բարձր տեխնոլոգիաների, Էներգիայի նոր աղբյուրների մշակման և Էներգոխնայողության ոլորտների աքսելերացիոն ծրագիր՝ տեղական գյուտարարների, ճարտարագետների և ուսանողների համար: Ծրագիրը խրախուսում է ճարտարագիտական նոր արտադրանքի և տեխնոլոգիաների զարգացումը՝ աջակցելով գյուտարարներին, գյուտերի հիման վրա նորարար արտադրանքներ մշակող ձեռներեցներին, ճարտարագետներին, սթարթափներին: Աքսելերացիոն ծրագիրը հաջողությամբ անցած թիմերը հետագայում

հնարավորություն կստանան մասնակցել առաջիկայում կազմակերպվող Ճարտարագիտական, բարձր և մաքուր տեխնոլոգիաների ոլորտների դրամաշնորհային ծրագրերին: Ծրագրին մասնակցում են թիմեր ոչ միայն Վանաձորից, այլ նաև հանրապետության մյուս քաղաքներից:

Շարունակվել է Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի (COAF) կողմից նախաձեռնված Սմարթ կենտրոնի ստեղծման աշխատանքները հանրապետական մայրուղուց ոչ այնքան հեռու, գեղատեսիլ Դեբեդի հովտում: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2017թ-ի աշնանը: Այս կենտրոնն իր բովանդակությամբ եւ տեսակով Հայաստանում առաջինն է, որը նոր հնարավորություններ կստեղծի մարզի գյուղական միջհամայնքային կապի ամրապնդման, փորձի փոխանակման, դպրոցականների կրթությունը նորարարական տեխնոլոգիաներով կազմակերպելու համար: Հիմնադրամի կողմից մարզի 6 համայնքներում ստեղծվել են ստեղծագործարաններ:

«ՍՄԱՐԹ մարզ» նախաձեռնության շրջանակներում, մարզպետի անմիջական հանձնարարությամբ մարզի հանրակրթական դպրոցներում մեկնարկվել է ՍՄԱՐԹ դասասենյակների ստեղծման ծրագիրը: 2016թ.-ին ընտրվել են մարզի տարբեր համայնքների 13 դպրոցներ, սկսվել են դասասենյակների վերանորոգման աշխատանքները:

2016թ.-ին նախաձեռնվեց Վանաձորում ԹՈՒՄՈ կենտրոնի ստեղծման աշխատանքները: Հողհատկացման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ձարգացման ծրագրեր

Ըստ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է **8,593,179.0** հազար դրամ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **4,670,210.4** հազ. դրամ, այդ թվում՝
 - ✓ Սեփական միջոցներ՝ **2,106,410.0** հազար դրամ,
 - ✓ Վարկային միջոցներ՝ **2,563,800.0** հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **23,625.00** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **332,743.6** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **2,575,000.00** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **991,600.00** հազար դրամ:

2016թ. փաստացի իրականացվել է 21,126,466.0 մլն դրամի աշխատանքներ, որից՝

- ❖ **6,915,488.4** մլն-ը ՀՀ պետ. բյուջեի հատկացումներով, այդ թվում՝ **2,362,688.4** մլն դրամը վարկային միջոցներից **4,552,800.0** մլն դրամը սեփական միջոցներից
- ❖ **11,357,300.0** մլն դրամը՝ մասնավոր ներդրողների միջոցներից,
- ❖ **1,043,172.8** մլն դրամը՝ ֆինանսավորման այլ աղբյուրներով,
- ❖ **1,275,675.0** մլն. դրամը՝ միջ. կազմակերպությունների և դոնորների միջոցներով,
- ❖ **534,829.2** մլն դրամը՝ համայնքային ֆոնդային բյուջեների միջոցներով:

Կատարողականը փաստացի պլանավորված ՏԱՊ-ի նկատմամբ կազմել է 245.9 %

ՀՀ Լոռու մարզի 2016թ. զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

(մլն. դրամ)

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2016թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում	Իրականացված է 2016թ., այդ թվում
-----	------------------	--	---------------------------------

		Ընդամենը	2016թ. Պետական բյուջեից	Ընդամենը	2016թ. Պետական բյուջեի ֆինանս.
1.	Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված	3,774,925.0	1,176,300.00	12,231,124.0	1,226,800.0
2.	Սոցիալական ոլորտներ	2,569,104.0	1,577,504.0	2,954,770.0	1,359,982.0
2.1.	Կրթություն	1,391,600.0	400.0	1,064,500.0	300.0
2.2.	Մշակույթ և սպորտ	77,504.0	77,504.0	125,800.0	125,800.0
2.3.	Առողջապահություն	1,100,000.00	1,100,000.00	1,680,788.0	850,000.0
2.4.	Սոց. ապահովություն	0.00	0.00	83,682.0	83,682.0
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	149,006.4	149,006.4	161,671.4	148,606.4
3.1.	Գյուղատնտեսություն	96,500.00	96,500.00	109,165.00	96,100.0
3.2.	Բնապահպանություն	52,506.4	52,506.4	52,506.4	52,506.4
4.	Քաղաքաշինություն	60,000.0	60,000.0	615,000.0	531,700.0
5.	Ենթակառուցվածքներ	1,987,500.00	1,707,400.0	5,087,857.6	3,648,400.0
5.1.	Ճանապարհաշին.	696,500.0	416,400.0	4,146,400.0	3,646,400.0
5.2.	Ջրամատակարարում	1,291,000.0	1,291,000.0	606,361.6	2,000.0
5.3.	Գազամատակարարում	589,000.0	0.00	36,634.8	0
5.4.	Էներգամատակարարում	268,890.0	0	298,461.2	0
6.	Արտակարգ իրավիճակներ	52,643.6	0.00	76,043.0	0.0
	Ընդամենը	8,593,179.0	4,670,210.4	21,126,466.0	6,915,488.4

**2017թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

Ֆինանսական աղբյուրներ	2017թ.	2016թ.	աճը %
Պետ. բյուջե	19652.5	6915.5	284.2
Համայնքային	438.0	534.8	81.9
Մասնավոր	13613.8	11357.3	119.9
Միջազգային	848.5	1275.7	66.5
Այլ	92.4	1043.2	8.9
Ընդամենը	34645.2	21126.5	164.0

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է՝ 146408.6 մլն դրամ, 2016թ. 131000.9 մլն դրամի դիմաց: Համադրելի գներով թողարկվել է 129184.6 մլն դրամի արտադրանք, նախորդ տարվա 98.6%-ը (9 ամսում 96.5%, առաջին կիսամյակում՝ 92.2%, առաջին եռամյակում՝ 87.9%): Համադրելի գներով նվազումը կազմում է 1816.2 մլն. դրամ, որը հիմնականում բացատրվում է «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ում (93.5%), «Թեղուտ» ՓԲԸ-ում (95.4%), ինչպես նաև Էլ. էներգիայի արտադրությունում (83.2%) արտադրանքի ծավալների նվազմամբ: Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետական ծավալում կազմում է 8.8 % (4-րդ ցուցանիշը), 2016թ.՝ 9.2%: Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 147861.8 մլն դրամ (աճի ինդեքսը՝ 113.1%), որից՝ ԱՊՀ երկրներ՝ 1130.8 մլն դրամ (աճը՝ 122.7%, տեսակարար կշիռը իրացման ծավալում 0.8%) և այլ երկրներում 93098.4 մլն դրամ (համապատասխանաբար՝ 117.6% և 63.0%): Արտասահմանյան երկրներ առաքված արտադրանքի տեսակարար կշիռը իրացված արտադրանքի ընդհանուր ծավալում հանքագործական արդյունաբերությունում կազմում է 68.6%, մշակող արդյունաբերությունում՝ 70.3%, այդ թվում՝ մետալուրգիայում՝ 100%, հագուստի արտադրությունում՝ 95.0%, էլեկտրական սարքավորումների արտադրությունում՝ 93.1%, խմիչքների արտադրությունում՝ 8.3%, սննդամթերքի արտադրությունում՝ 2.7% և այլն: Ընդհանուր առմամբ մարզի արդյունաբերության պատրաստի արտադրանքի իրացման մեջ արտահանման տեսակարար կշիռը կամել է 63.8%: Մարզի արդյունաբերական արտադրանքի 79.8%-ը բաժին է ընկնում 6 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին, 20.2%-ը փոքր և միջին ձեռնարկություններին, որոնց աշխատողների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմում է 58.9% և 41.1%, համապատասխանաբար միջին հանրապետական 66.2% և 33.8% ու 56.9% և 43.1%-ի դիմաց: Այսինքն, մարզում խնդիր է մնում փոքր և միջին ձեռներեցության զարգացումը՝ որպես նոր աշխատատեղերի ստեղծման և դրա միջոցով աղքատության նվազեցման լծակի, դրանց արտադրանքի տեսակարար կշիռը հասցնելով առնվազն 40%-ի:

Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2017թ. արդյունքներով ունեն այսպիսի տեսք՝

- հանքագործական արդյունաբերություն՝ 77009.6 մլն դրամ, ծավալի աճը՝ 99.4% և տեսակարար կշիռը 52.6% (2016թ.՝ 50.9%);
- մշակող արդյունաբերություն՝ համապատասխանաբար՝ 58113.4 մլն դրամ, 101.4% և տեսակարար կշիռը՝ 39.7% (2016թ.՝ 38.5%);
- Էլ.էներգիայի արտադրություն՝ համապատասխանաբար՝ 10078.8 մլն դրամ, 83.2% և 6.9% (2016թ.՝ 9.7%);
- ջրամատակարարում, թափոնների մշակում և այլ ճյուղեր՝ համապատասխանաբար՝ 1206.8 մլն դրամ, 100.4% և 0.8%, (2016թ.՝ 0.9%):

Փաստորեն 2016թ. համեմատությամբ մշակող արդյունաբերությունը և ջրամատակարարումն ունեցել են ծավալների աճ, իսկ հանքագործական արդյունաբերությունը և Էլ.էներգիայի արտադրությունը՝ ծավալների նվազում: Առաջիկա տարիներին ևս, համաձայն մարզի 2017-2025թթ. ռազմավարական ծրագրի, հանքագործական, թեթև և սննդի արդյունաբերության դինամիկ զարգացումը կլինի մարզի գերական ուղղությունը: Առաջիկայում դրան կնպաստի նաև պլանի մեծ պահանջարկը համաշխարհային շուկայում, ինչպես նաև պլանի

գնի աճը (ներկայումս ավելի քան 7000 դոլար նախկին 4800 դոլարի դիմաց), ԵՄ և ԵԱՏՄ երկրների մեծ շուկայի պահանջարկը մեզ մոտ արտադրվող հագուստեղենի և սննդի նկատմամբ:

2017թ. արդյունքներով մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի ունի հետևյալ տեսքը՝ հանքագործական արդյունաբերություն՝ 22.8%, մշակող արդյունաբերություն՝ 5.6%, էլ.էներգիայի արտադրություն՝ 3.9% և ջրամատակարարում և այլ ճյուղեր՝ 4.8%:

2017թ. մարզի մշակող արդյունաբերության մեջ ընթացիկ գներով ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

Հազ. դրամ

Հ/հ	Ճյուղի անվանումը	2017թ.	2016թ.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Տեսակարար կշիռը, %	
						2017թ.	2016թ.
1	Քիմիական արդյունաբերություն	390810.0	365427.0	106.8	+25383.0	0.7	0.7
2	Թեթև արդյունաբերություն	5579742.0	2984911.0	170.5	+2594831.0	9.6	5.9
3	Սննդի արդյունաբերություն	15422167.0	14859661.0	103.8	+562506.0	26.5	29.5
4	Մեքենաշինություն և սարքաշինություն	715223.0	576320.0	109.9	+138903.0	1.2	1.1
5	Փայտամշակում և կահույքի արտադրություն	44929.0	36371.0	123.3	+8558.0	0.08	0.07
6	Մետալուրգիա	34763414.0	30336072.0	93.5	+4427342.0	59.8	60.1
7	Այլ ճյուղեր	1197077.0	1260343.0	95.3	-63266.0	2.2	2.7
	Ընդամենը	58113362.0	50419105.0	101.4	+7694257.0	100.0	100.0

2017թ., բացառությամբ մետալուրգիայի և այլ ճյուղերի, մշակող արդյունաբերության մնացած ճյուղերն ապահովել են արտադրության ծավալի աճ:

2017թ. մարզի 13 արտադրական ձեռնարկություններ արտադրանք չեն թողարկել: Ընդհանուր առմամբ վիճակագրական հաշվետվություն ներկայացրած մարզի 146 արտադրական ձեռնարկություններից ընթացիկ գներով արտադրության ծավալի նվազում են ունեցել 43-ը (ձեռնարկությունների 29.4%-ը), առավել մեծ նվազում ունեն Վանաձորի «ՉինՎան» ՍՊԸ-ն՝ 34.1%, «Բառովիչ» ՍՊԸ-ն՝ 60.3%, Ստեփանավանի «Պլազմա» ՍՊԸ-ն՝ 32.2%, «Ֆիմպլաստ» ՍՊԸ-ն՝ 14.9%, Տաշիրի «Կալինինո կաթ» ՍՊԸ-ն՝ 59.7%, «Ալեգի» ՍՊԸ-ն՝ 60.6%, Թումանյանի «Արկ-Պլաստ» ՍՊԸ-ն՝ 28.2%, Գուգարքի «Բեկոր» ՍՊԸ-ն՝ 25.6% և այլն:

Մարզի էլ. էներգիա արտադրող 27 ձեռնարկություններից 26-ը բնեղեն արտահայտությամբ իջեցրել են արտադրության ծավալները (ընդհանուրը 48.5 լն. ԿՎտ/ժամ), նվազում չի ունեցել միայն «Լոռի-1» հողմային էլեկտրակայանը (117.3%):

Անցած տարի տարբեր պատճառներով արտադրանք չեն թողարկել Վանաձորի «Անաշախ» ՍՊԸ-ն, Ստեփանավանի «Արամ կոմերցիոն կենտրոն» ԱԿ-ն, Գուգարքի «Սմբո» ՍՊԸ-ն, «Արտուշ Գրիգորյան» ՍՊԸ-ն և այլն:

2017թ. առաջին անգամ արտադրանք են թողարկել կամ վերականգնել են նախկին արտադրությունը Վանաձորի «Ավտոգեն Վան», «Դարբբագս կարի ֆաբրիկա», «Լևարալմաշ» ՍՊԸ-ները, Գուգարքի «Աշոտ-Նաիրի եղբայրներ» ՍՊԸ-ն, իսկ «Թեղուտ» ՓԲԸ-ն սկսել է մոլիբդենի խտանյութի արտադրությունը:

Տարվա արդյունքներով մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն «Թեղուտ» ՓԲԸ-ն՝ 47.9%, «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 23.7%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 4.6%, «Դարբբագս կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 1.6%, Վանաձորի «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 1.5%, «Սպիտակի թոչնաբուծական կոմբինատ» ՍՊԸ-ն՝ 1.4%, «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ն՝ 1.1%, «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ն՝ 0.6%, «Բետոն» ԱԿ-ն և «Սարտոն» ՍՊԸ-ն՝ 0.5% և այլն:

Ըստ տարածաշրջանների 2017թ. թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ունի այսպիսի տեսք.

Հազ. դրամ				
Հ/հ	Տարածաշրջանը	2017թ.	Աճը 2016թ. նկատմամբ, %	Տեսակարար կշիռը, %
1	Սպիտակի	2679231.0	130.4	1.8
2	Տաշիրի	1616822.0	105.8	1.1
3	Գուգարքի	3448009.0	81.4	2.4
4	Ստեփանավանի	589913.0	74.1	0.4
5	Թումանյանի	129037789.0	110.9	88.1
6	ք.Վանաձոր	9036797.0	148.0	6.2
	Ընդամենը	146408561.0	98.6	100.0

Վերջին տարիներին զգալիորեն նվազել է Վանաձոր քաղաքի արտադրական պոտենցիալը: Նախկինում իր արդյունաբերական արտադրանքի ծավալով հանրապետությունում 2-րդ տեղ զբաղեցնող քաղաքում, որի 32 արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին 30 հազարից ավելի մարդ, իսկ համախառն արտադրանքը կազմում էր ներկա մարզի արդյունաբերական արտադրանքի 58.3%-ը և առաքվում էր աշխարհի 40-ից ավելի երկրներ, զարգացած էին քիմիական, մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերությունները, այսօր թողարկում է մարզի արդյունաբերական արտադրանքի միայն 6.2%-ը (հանրապետության արտադրանքի 0.5%-ը), իսկ արտադրությունում աշխատողների թիվը կազմում է ընդամենը 2700 մարդ: Վանաձորի արտադրանքի ընդհանուր ծավալում թեթև արդյունաբերությանը բաժին է ընկնում 61.7%-ը, մեքենաշինությանը՝ 6.3%-ը և այլն: Վանաձորում բարձր է միգրացիան, գործազրկությունը, աղքատությունը, որի արդյունքում մշտական բնակչության թիվը 1987թ. շուրջ 172.0 հազար մարդուց նվազել է և 2016թ. կազմել է 80.7 հազար մարդ: Գրանցված գործազուրկների թիվը Վանաձորում հասնում է 4139 մարդու:

2017թ. արդյունքներով արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը մարզում է կազմել է 7275 մարդ, 2016թ. նույն ժամանակաշրջանի 6382 մարդու դիմաց կամ աշխատողների թիվն ավելացել է 893 մարդով կամ 114.0%-ով: Աշխատողների թիվն ավելացել է հիմնականում մշակող արդյունաբերությունում՝ 1017 մարդով (135.8%), այդ թվում՝ հազուստի արտադրությունում՝ 805 մարդով, փայտամշակումում՝ 77 մարդով,

մեքենաշինությունում՝ 50 մարդով, մետալուրգիայում՝ 27 մարդով, ջրամատակարարումում այն նվազել է 103 մարդով, էլ.էներգիայի արտադրությունում՝ 9 մարդով:

Աշխատանքի արտադրողականությունը անցած տարի մարզի արդյունաբերությունում կազմել է 20124.9 հազ. դրամ (միջին հանրապետականը՝ 20249.6 հազ. դրամ), նախորդ տարվա 20526.6 հազ. դրամի դիմաց (98.0%):

2017թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից բնեղեն արտահայտությամբ արտադրվել է կոնվերտորային պղինձ (սև պղինձ) 12051.0 տոննա (աճը՝ 93.3%), մոլիբդենի խտանյութ՝ 1123.0 տոննա, պղնձի խտանյութ՝ 125.1 հազ. տոննա (աճը՝ 87.4%), լաքաներկանյութեր՝ 107.9 տոննա (աճը՝ 94.6%), ավտոգենային սարքավորումներ 30.6 հազար հատ (աճը՝ 104.4%), էլեկտրաշարժիչներ՝ 1578 հատ (աճը՝ 100.8%), երկաթբետոնյա իրեր և կոնստրուկցիաներ՝ 11767.0 տոննա (աճը՝ 100.2%), կարի արտադրանք (բաճկոններ)՝ 501.3 հազ. հատ (աճը՝ 110.5%), պանիր՝ 551.1 տոննա (աճը՝ 110.4%), հաց՝ 2.8 հազ. տոննա (աճը՝ 97.0%), ոչ ալկոհոլային խմիչքներ՝ 2.2 մլն. լիտր (աճը՝ 107.5%), էլ.էներգիա՝ 162.6 մլն ԿՎտ/ժամ (աճը՝ 77.1%) և այլն:

«Թեղուտ» ՓԲԸ

Ընկերության արտադրանքի (70.2 մլրդ դրամ) տեսակարար կշիռը հանրապետության հանքագործական արդյունաբերության ընդհանուր ծավալում 2017թ. կազմել է 20.8%, իսկ մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 47.9%, նախորդ տարվա 48.2%-ի դիմաց: 2017թ. ընկերությունն առաջին անգամ սկսել է մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Ընկերության կողմից արտադրված պղնձի խտանյութի տեսակարար կշիռը հանրապետականի ծավալում կազմել է 26.4%, մոլիբդենի խտանյութինը՝ 10.2%: Անցած տարի հանքաքարի արդյունահանումը կազմել է 7.98 մլն. տոննա:

2017թ. ՀՀ պետական բյուջե հարկերի ձևով ընկերությունը վճարել է շուրջ 12.0 մլրդ դրամ և կայուն կերպով տեղ է գրավում հանրապետական խոշոր հարկատուների առաջին տասնյակում: Ընկերությունն իր հարկային պարտավորությունները բարեխղճորեն է կատարել նաև մարզի համայնքների նկատմամբ (Շնող, Ախթալա)՝ 2017թ. ընթացքում նրանց վճարելով 73.2 մլն. դրամի հարկ և վճար:

Ընկերությունում 2017թ. իրականացվել են ավելի քան 13.0 մլն. ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումներ: Պլանավորված կապիտալ աշխատանքների հիմնական ուղղություններն են հանդիսացել հանքային տեխնիկայի նորոգման աշխատանքները՝ 2.5 մլն. դոլար, հարստացուցիչ ֆաբրիկայում կապիտալ բնույթի աշխատանքների գծով ծախսերը՝ շուրջ 1.8 մլն. դոլար, պոչային տնտեսության գծով ծախսերը՝ 1.95 մլն. դոլար, հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերը՝ 1.87 մլն. դոլար և այլն:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թիվը կազմել է 1172 մարդ: 2018թ. հունվարի 12-ից ընկերությունը դադարեցրել է պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը՝ պլանային կանխարգելիչ վերանորոգման աշխատանքների նպատակով: Պլանային աշխատանքները կարող են տևել 2 և ավելի ամիս, քանի որ այդ ժամանակահատվածում պետք է լուծվի նաև պոչամբարի մեջ լցվող պոչանքների տեխնոլոգիական պարամետրերը նոր ստանդարտներին համապատասխանեցնելու խնդիրը:

Չնայած ընկերությունը պլանավորել է 2018թ. կապիտալ ծախսերի գծով ներդնել 12.0 մլն. դոլար, իսկ մակաբացման գծով շուրջ 1.1 մլն. դոլար, սակայն այս տարին դժվար կլինի «Թեղուտ» ՓԲԸ-ի համար, քանի որ բացի վերոնշյալ արտադրական և տեխնոլոգիական խնդիրներից, ընկերության վրա դրված է նաև բանկերի առջև վարկային պարտավորությունների ծանր բեռը: Ընկերությունն առաջ կտանի նաև կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն.տ/տարի հանքաքարի արդյունահանման նախագիծը:

«Էյ-Սի-Փի» ՓԲԸ

Ընկերության կողմից կատարված կապիտալ ծախսերը 2017թ. կազմել է շուրջ 1.0 մլն. ԱՄՆ դոլար: Ընկերության կողմից արտադրված կոնվերտորային պղինձը (12.1 հազ. տոննա) լրիվ առաքվել է արտասահմանյան երկրներ, պետական բյուջե է փոխանցվել շուրջ 960 մլն. դրամ հարկ: 2018թ. պլանավորված կապիտալ ծախսերի գումարը կազմում է 1.0 մլն. դոլար: Բացի այդ, 2017թ. տարեվերջին չինական ընկերության գործընկերների հետ ընկերությունը ստորագրել է համաձայնագիր բազային տեխնոլոգիաների ընտրության ավարտի և Հայաստանում գտված պղնձի և պղնձե իրերի հայ-չինական համատեղ արտադրության ստեղծման վերջնական նախագծի պատրաստման վերաբերյալ՝ հիմնականում չինական ֆինանսավորմամբ: Բայց դեռևս կան չլուծված տեխնոլոգիական խնդիրներ՝ կապված հայաստանյան շուկայի առանձնահատկությունների հետ:

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ

2017թ. արտադրության վերսկսման, նրա տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերման համար ընկերությունը փաստացի կատարել է 500մլն. դրամի ներդրումներ, նաև որի արդյունքում պղնձի հանքանյութի արտադրության ծավալները նախորդ տարվա նկատմամբ աճել են 171.2%-ով կամ 5649 տոննայով:

2018թ. նախատեսվող ներդրումների ծավալն ընկերությունում կազմում է շուրջ 2.5 մլն. ԱՄՆ դոլար, որի շնորհիվ ակնկալվում է շուրջ 100 նոր աշխատատեղերի ստեղծում:

«Ռադ սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ

Իրանական ընկերությունը 2017թ. Վանաձորում հիմնադրել է գազաբալոնների և կարբոնի գործարան: Ընդհանուր ներդրումը կկազմի շուրջ 32.5 մլրդ դրամ, սկզբնական շրջանում կաշխատեն շուրջ 400 մարդ: Գործարանը կարևոր դեր կխաղա Վանաձորում գործազրկության կրճատման, մարդկանց սոցիալական վիճակի բարելավման համար:

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**

2017թ. քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության, բնակարանային եւ ենթակառուցվածքների ոլորտում մարզում նախատեսված 22972.1մլն դրամից իրականացվել է շուրջ 22398.2մլն դրամի շինարարական աշխատանքներ / Հավելված-1/:

2016թվականի 8874.3 մլն դրամի դիմաց, աճը կազմել է 152%, այդ թվում, քաղաքաշինության ոլորտում նախատեսված 7265.3մլն դրամից փաստացի իրականացվել են 6904.6մլն դրամի շինարարական աշխատանքներ: 2016թվականի 3873,2 մլն դրամի դիմաց, աճը կազմել է 78%:

Քաղաքաշինության ոլորտում նախատեսված 6904.6մլն դրամի շինարարական աշխատանքներն ըստ ֆինանսավորման աղբյուրների ունի հետևյալ պատկերը՝

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ – 2431.2մլն դրամի, որից

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե– 1462.6մլն դրամ
- ՀՀ մշակույթի նախարարություն – 63.0 մլն դրամ
- ՀՀ պաշտպանության նախարարություն– 240.0 մլն դրամ
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն- 39.6 մլն դրամ
- ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարություն- 169.4 մլն դրամ
- ՀՀ ազգային արխիվ- 50.0 մլն դրամ

- Լոռու մարզպետարան – 333.5 մլն դրամ
 - Դպրոցների խնայված միջոցներով «Սմարթ» դասարանների կառուցում-73.1 մլն դրամ
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ/ՀՏՀՀ/ – 852.3 մլն դրամ
- Այլ ֆինանսական միջոցներով- 3262.1 մլն դրամ, որից՝
- Դոնոր կազմակերպությունների և մասնավոր ներդրողների կողմից-3550.9 մլն դրամ
 - Համայնքների բյուջեների հաշվին իրականացված աշխատանքներ-70.2 մլն դրամ

6904.6մլն դրամի շինարարական աշխատանքները ըստ ոլորտների բաշխվել են հետևյալ կերպ՝

h/h	Ըստ ոլորտների	Ընդամենը մարզում	ՀՀ պետական բյուջե	Այլ ֆինանսավ.	ՀՏՀՀ
1	Բնակարանաշինություն	321.8	321.8	0.0	0.0
2	Կրթական օբյեկտներ	1798.4	213.3	952.9	632.2
3	Մշակութային եւ սպորտային օբյեկտներ	463.2	207.7	125.0	130.5
4	Առողջապահական օբյեկտներ	1562.7	1307.1	166.0	89.6
5	Այլ օբյեկտներ	2758.5	381.3	2377.2	0.0
	Ընդամենը	6904.6	2431.2	3621.1	852.3

Քաղաքաշինության ոլորտում առավել խոշոր օբյեկտներն են.

- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցում՝ 1. Հիվանդանոցային մասնաշենք՝ իրականացվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Ծրագրային գումար՝ 4 մլրդ485. 5մլն.դրամ: 2. Ծննդատան մասնաշենք՝ իրականացվել է«Տաշիր» ԲՀ-ի ֆինանսավորմամբ: Ծրագրային գումար՝ 1մլրդ 150 մլն.դրամ: Շինարարության սկիզբը՝ 2014թ, ավարտը՝ 2017թ:
- Վանաձորի թիվ 18 դպրոցի վերակառուցման աշխատանքներ ՝ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 1մլրդ150մլն դրամ նախահաշվային արժեքով: Աշխատանքները սկսվել են 2014թ.-ին /շարունակական/:
- «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցում՝ 816.0 մլն դրամ: Աշխատանքները սկսվել են 2015թ.-ին և ավարտվ են 2017թ.:
- Դեբեդ համայնքում ««ՍՄԱՐԹ»» կենտրոնը կառուցվում է «Հայաստանի մանուկներ հիմնադրամի» /COAF/ ֆինանսավորմամբ՝ 3.0 մլն դոլար արժեքով: Շինարարական աշխատանքները սկսվել են 2015թ.:
- «Ալավերդի և Սպիտակ քաղաքներում նոր մանկապարտեզի շենքերի կառուցում» իրականացվում է «Տաշիր»ԲՀ-ի շուրջ 1,0մլրդ դրամի ֆինանսավորմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2016թ -ին /շարունակական/:
- Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում՝ իրականացվում է ՀՏՀՀ-ի կողմից՝ 798,0 մլրդ դրամի Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2017թ. և կավարտվեն 2019թ:
- Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցում՝ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Պայմանագրային գումար՝ 135.0մլն.դրամ, որից 39,2մլն.դրամը 2017թ.: Շինարարության սկիզբը՝ 2016թ, ավարտը՝ 2018թ:

VII ՀՐԱՏԱՊ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների իրականացման համար ՀՀ կառավարության 17.02.2017թ. թիվ 153-Ն և 11.05.2017թ թիվ 503-Ն որոշումներով Լոռու մարզպետարանին քաղաքաշինության ոլորտի շինարարական աշխատանքների համար հատկացվել է 369 759 900 դրամ: Մրցույթների արդյունքների հիման վրա կապալառու կազմակերպությունների հետ կնքվել են 246 238 800 դրամի պայմանագրեր, խնայվել է 123 521 100 դրամ:

Օբյեկտների ցանկը հավելված 1-ում:

Նշված միջոցներով 17 համայնքներում իրականացվել են ներքոհիշյալ շինարարական աշխատանքները՝

1. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում - 8 համայնքում, 14 շենքեր 81,8 մլն դրամի
2. Համայնքային կենտրոնների վերանորոգում - 2 համայնքում, 23,7 մլն. դրամի
3. Փողոցների լուսավորության համակարգի կառուցում - 1 համայնքում, 5.0 մլն. դրամի
4. Մշակութային օբյեկտներ - 3 համայնքում, 61,0 մլն. դրամի
5. Ջրամատակարարում և ջրահեռացում՝ 2 համայնքում, 40,4 մլն. դրամի
6. Գազամատակարարում՝ 1 համայնքում, 6.2 մլն. դրամի
7. Կրթական՝ 1դպրոց-4,0 մլն. դրամի
8. Առողջապահական՝ 1բուժկետ-1,5 մլն. դրամի
9. Այլ օբյեկտներ - 2 օբյեկտ, 22,7 մլն. դրամի/ սելավատար և կամուրջ/

Դպրոցներում «Սմարթ» դասարանների վերանորոգում

2016թ-ից Վանաձորում գործում է միջազգային չափորոշիչներին համապատասխան տեխնոկենտրոն: Նախատեսվում է ավարտին հասցնել Դեբեդ գյուղի հարակից տարածքում «Սմարթ» ուսումնական կենտրոնի կառուցումը, իսկ Վանաձորում կառուցվելու է Երևանի «Թումո » կենտրոնի մասնաճյուղ: 2017թ. մարզը Լոռու մարզպետի կողմից հայտարարվել է «Սմարթ» մարզ, որի կայացմանը նպաստելու է նաև դպրոցներում «Սմարթ» դասարանների հիմնումը:

2017թ., մարզպետի հանձնարարությամբ, մարզի թվով 16 դպրոցներում խնայված ֆինանսական միջոցներով վերանորոգվել են «Սմարթ» դասարաններ՝ 73.1 մլն. դրամի:

Դպրոցներում «Սմարթ» դասարանների վերանորոգումը կշարունակվի նաև 2018թ.: 2018թ. հունվարին ավարտվել են թվով 6 դպրոցների / Օձունի թիվ 2, Վանաձորի թիվ 1, Վանաձորի թիվ 3, Գուգարքի հիմնական, Լեռնապատի, Լեռնահովիտի դպրոցներում/ 13.3 մլն դրամի «Սմարթ» դասարանների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը, ընթացքում է շինարարական աշխատանքների գնման մրցույթը:

Սարուխանյան ընտանիքի կողմից կատարվել է Վանաձորի թիվ 1 դպրոցի շենքի արտաքին հարդարման աշխատանքներ՝ շուրջ 10.0մլն.դրամի:

1	Վանաձոր համայնքի թիվ 25 դպրոց	3.530
2	Շնողի միջնակարգ դպրոց	2.380
3	Ջրաշենի միջնակարգ դպրոց	1.210
4	Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոց	1.530
5	Ալավերդի համայնքի թիվ 12 դպրոց	6.489

6	Օձուն համայնքի թիվ 1 դպրոց	3.478
7	Սպիտակ համայնքի թիվ 2 դպրոց	2.229
8	Ստեփանավան համայնքի թիվ 1 դպրոց	4.700
9	Մարգահովիտ համայնքի դպրոց	2.739
10	Վանաձոր համայնքի թիվ 16 դպրոց	13.113
11	Վանաձոր համայնքի թիվ 30 դպրոց	6.831
12	Վանաձոր համայնքի թիվ 27 դպրոց	5.296
13	Վանաձոր համայնքի թիվ 28 դպրոց	2.749
14	Վանաձոր համայնքի թիվ 4 դպրոց	5.810
15	Տաշիր համայնքի թիվ 2 դպրոց	7.077
16	Վանաձոր համայնքի թիվ 6 դպրոց	3.924

«Լոռու մարզի աղետի գոտու բնակավայրերում բնակապահովման խնդիրների վերաբերյալ

2017թ. Հայաստանի Հանրապետության կառավարության տարբեր որոշումներով Լոռու մարզին հատկացվել է 45,5 մլն դրամ: Հատկացված միջոցներից 20 մլն դրամն ուղղվել է Սպիտակ քաղաք ում կառուցված սպորտդպրոցի տարածքի իրացման դիմաց: 4 ընտանիքից 2-ը մեկ սենյակի շահառուներ էին, երկուսը՝ 2 սենյակի: 1 սենյակի համար տրամադրվել է 9,0 մլն դրամ, յուրաքանչյուրին 4,5 մլն դրամ, իսկ 2 սենյականոց բնակարանի շահառուներին՝ 11 մլն դրամ, յուրաքանչյուրին 5,5մլն դրամ: 25,5 մլն դրամից 7,5մլն դրամն ուղղվել է Սպիտակ քաղաքում բնակարանային պայմանները բավարարելու իրավունքը դատական կարգով վերականգնած 4 սենյակի շահառու ճանաչված մեկ ընտանիքի, բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան ձեռք բերելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրմամբ: 18մլն դրամն ուղղվել է Լոռու մարզի գյուղական բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավման իրավունքը դատական կարգով վերականգնած եւ մեկ սենյակի շահառու ճանաչված 6 ընտանիքի ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրմանը, յուրաքանչյուրին 3,0 մլն դրամի չափով:

Լոռու մարզպետի կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խումբը, որը ղեկավարում էր մարզպետի խորհրդական Լ.Ասլանյանը, ուսումնասիրել է պատրաստականության տարբեր տոկոսներով 196 գույք աղետի գոտու Լոռու մարզի Արեւաշող, Բազում, Գեղասար, Գոգարան, Գուգարք, Դարպաս, Լեռնապատ, Լեռնավան, Լեռնանցք, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Շիրակամուտ, Ջրաշեն եւ Սարահարթ համայնքներում: Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունից այդ աշխատանքներին մասնակցել են վարչության աշխատողներ Ա.Հարությունյանը, Գ.Հախինյանը, Ա.Փանոյանը եւ Ա.Վարդանյանը: Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել «Գլենդել Հիլզ» ՓԲԸ եւ սնանկության հարցերով կառավարչի կողմից տրամադրված նյութերը: Աշխատանքային խմբի կողմից կատարված համեմատական աշխատանքների արդյունքում կատարվել է ավարտվածության աստիճանի ճշտում: Աշխատանքային խումբը հաշվարկները կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009թ. ապրիլի 3-ի թիվ 35-Ն հրամանը: «Գլենդել Հիլզ» ՓԲԸ եւ սնանկության հարցերով կառավարչի ներկայացրած տվյալները նվազեցվել են մոտ 43,0 մլն դրամով:

ՀՏՀՀ-ի /ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ/ ծրագրով նախատեսված է իրականացնել շուրջ **1,977** մլդ դրամի շինարարական աշխատանքներ:

ՀՏՀՀ-ով նախատեսված աշխատանքները սկսվել են 2016թ-ից, 2017թ իրականացվել է 852.3մլն դրամի, իսկ մնացած աշխատանքները կիրականացվեն 2018-2019թթ: Այս ծրագրերի իրականացումը մեծ աջակցություն է մարզի համայնքներին:

	Ծրագրի անվանումը	Ծրագրավորված գումարը մլն դրամ	Փաստացի կատարվել է 2017թ	Ծանոթություն
1	Ստեփանավանի մարզադպրոցի հատակների հիմնանորոգում	18.9	0	աշխատանքները կսկսվեն և կավարտվեն 2018թ
2	Ալավերդու մանպատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի հիմնանորոգում	79.6	33.8	աշխատանքները սկսվել են 2016թ. և ավարտվել են 2017թ.
3	Տաշիրի համայնքային կենտրոնի հիմնանորոգում և համալիր սոցիալական ծառայության շենքի վերակառուցում	111.0	96.7	աշխատանքները սկսվել են 2016թ. և կավարտվեն 2018թ
4	Ալավերդու թիվ 4 դպրոցի հիմնանորոգում	171.1	0	աշխատանքները կսկսվեն 2018թ. և կավարտվեն 2019թ
5	Ախթալայի թիվ 2 դպրոցի հիմնանորոգում	158.7	106.6	աշխատանքները սկսվել են 2016թ. և կավարտվեն 2018թ.
6	«Ստեփանավանի բժշկական կենտրոն»ՓԲԸ համաբուժարանի հիմնանորոգում	155	89.6	աշխատանքները սկսվել են 2016թ. և կավարտվեն 2018թ.
7	Գյուլագարակում մանկապարտեզի կառուցում	169	133.6	աշխատանքները սկսվել են 2016թ. և կավարտվեն 2018թ.
8	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	76.4	0	աշխատանքները կսկսվեն 2018թ. և կավարտվեն 2019թ.,
9	Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի հիմնանորոգում	158.4	16	աշխատանքները սկսվել են 2017թ. և կավարտվեն 2018թ.
10	Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում	798.0	360	աշխատանքները սկսվել են 2017թ. և կավարտվեն 2019թ.
11	Արևաշողի դպրոցի մարզադահլիճի կառուցում	81.4	16	աշխատանքները սկսվել են 2017թ. և կավարտվեն 2019թ.

Քաղաքաշինության վարչության կողմից արձանագրված խնդիրները և վերացման ուղիները

Քաղաքաշինության բնագավառի գործունեության վարչական հսկողություն է իրականացվել մարզի 35 համայնքում և կազմվել համապատասխան արձանագրություններ:

Համայնքներում իրականացված վարչական ստուգումների ժամանակ արձանագրվել են թերություններ, որոնք բնորոշ են համայնքների մեծամասնության համար, մասնավորապես մարզի 7 համայնքներ ունեն գլխավոր հատակագծեր, իսկ մնացածները չունեն, որի պատճառը համայնքների ֆինանսական միջոցների սղությունն է: Համայնքների միավորման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կազմել միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծեր: Համայնքներում չի վարվում քաղաքաշինական կադաստր, համայնքները չունեն քաղաքաշինական կանոնադրություն: 2016թ. համեմատությամբ շինարարության թույլտվությունների, ավարտական ակտերի ձևակերպման և շահագրգիռ մարմիններին ներկայացման գործընթացը բարելավվել է 2017թ.:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համայնքներում բարելավվել են սակավաշարժ խմբերի համար շենքերի և շինությունների մատչելիության աստիճանը, բայց դեռևս հեռու են բավարար լինելուց:

2018թ.շինարարական ծրագրերի հիմնական ուղղությունները լինելու են՝

Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնում, բակերի բարեկարգում, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգում:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացում և վերանորոգում:

Մշակութային օբյեկտների շենքերի կառուցում և վերանորոգում:

Գյուղական համայնքներում առողջապահական օբյեկտների կառուցում և վերանորոգում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզում գործում են 62 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ: Այդ երթուղիների սպասարկումը մրցութային կարգով իրականացնում են 14 մասնավոր կազմակերպություններ:

Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 12 կայարաններով:

Ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

2017թ. վերագործարկվել է Քարինջ-Մարց-Վանաձոր երթուղին:

Ոլորտում արձանագրված խնդիրները և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները

Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի վեց փոքր համայնքներից՝ Դաշտադեն, Հովնանաձոր, Քարաբերդ, Կաճաճկուտ, Ծաղկաշատ և Ձորագյուղ, կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ համայնքներից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ավտոմեքենաներով:

Փոխադրողների կողմից նոր ավտոբուսներ և միկրոավտոբուսներ չեն ներկայացվել, քանի որ ուղևորահոսքի նվազման հետևանքով ներմարզային երթուղիներ սպասարկելը դարձել է տնտեսապես ոչ շահավետ: Դրան նպաստում է նաև այն, որ տաքսոմոտորային փոխադրումները բավականին ազատականացված են և կանոնավոր փոխադրումներ իրականացնողները գտնվում են ոչ մրցակցային պայմաններում:

2018թ. բացի ընթացիկ աշխատանքներից նախատեսված է կատարել ուսումնասիրություններ՝ բնակչության սպասարկման որակը բարձրացնելու և երթերի կատարման ժամանակացույցը ուղևորներին ավելի հարմարավետ դարձնելու համար, ինչպես նաև բացատրական աշխատանք տանել վարորդների շրջանում պատշաճ մակարդակի սպասարկում ապահովելու նպատակով:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

2017թ-ին իրականացված և ծրագրավորված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 12,26 մլրդ դրամ, փաստացի կատարվել է 12,05 մլրդ դրամի աշխատանք (հավելված 1): 2016 թ-նի 3.96 մլրդ դրամի դիմաց աճը կազմել է 204 %:

Հ/հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2017թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2017թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	12,258.87	12,045.87	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	635.67	480.37	
I	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	122.50	94.90	
1	Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի կամուրջի վերականգնում	100.00	72.40	
2	Տաշիր քաղաքի Կրուպսկայայի անվան փողոցի կամուրջի վերականգնում	22.50	22.50	
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	513.17	385.47	
1	Կառավարության 16.02.2017թ թիվ 503-Ն որոշումով Վանաձոր, Ալավերդի, Տաշիր և Ստեփանավան համայնքներում ճանապարհների վերանորոգում	123.60	94.80	
2	Կառավարության 24.08.2017թ թիվ 1047-Ն որոշումով Վանաձոր համայնքի ճանապարհների վերանորոգում	290.90	197.50	
3	Նախագծահետազոտական աշխատանքներ	9.00	3.50	
4	Մարզային նշանակության ավտոճանապարհների ծմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	89.67	89.67	

III	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	424.60	366.90	
1	Ներհամայնքային ճանապարհների նորոգում	424.60	366.90	
IV	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	11,198.60	11,198.60	
1	Եվրոպական ներդրումային բանկի և Ասիական զարգացման բանկի համատեղ ֆինանսավորմամբ՝ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ	11,063.0	11,063.0	
2	Գերմանիայի ֆինանսական համագործակցություն ծրագրի շրջանակներում Ստեփանավանի "Դենդրոպարկի" զբոսաշրջային ենթակառուցվածքի բարելավում	13.0	13.0	
3	"Տաշիր" բարեգործական հիմնադրամի միջոցներով Տաշիր քաղաքի Գետափնյա փողոցի նորոգման աշխատանքներ	12.6	12.6	
4	"Համբարձումյանների ընտանիք" բարեգործական հիմնադրամի միջոցներով Սպիտակ քաղաքի ճանապարհների նորոգման աշխատանքներ	50.0	50.0	
5	Բնապահպանական ծրագրով նախատեսված Հազվի և Աքորի համայնքների միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	43.0	43.0	
6	"Ճանապարհ" ՍՊԸ-ի կողմից Դարպաս համայնքի դեպի դպրոց տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների իրականացում	17.0	17.0	

**ՀՀ Լոռու մարզում ֆինանսական բոլոր աղբյուրներով
ճանապարհաշինության ոլորտում իրականացված աշխատանքներ
ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Հ/հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2017թ. Ծրագրի (մլն դրամ)	Կատարվել է 2017թ. (մլն դրամ)	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	12,258.87	12,045.87	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	635.67	480.37	
1	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	122.50	94.90	
2	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	513.17	385.47	
3	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	424.60	366.90	
4	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	11,198.60	11,198.60	

Հրապապ ծրագրով իրականացված ճանապարհաշինական աշխատանքներ

1. Վանաձոր քաղաքի փողոցների անմխիթար վիճակի վերաբերյալ խնդիրը մարզպետի կողմից ներկայացվել էր հանրապետության նախագահին: Նախագահի հանձնարարականով կառավարության 23.06.2017թ թիվ 720-Ն և 24.08.2017թ թիվ 1047-Ն որոշումներով 300 մլն դրամ հատկացվեց Վանաձոր համայնքի փողոցների վերանորոգման համար: Լոռու մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի աշխատակիցների և Վանաձորի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ համատեղ կատարվել են ուսումնասիրություններ՝ ընտրելով քաղաքի կարևորագույն հանգույցները և հասարակական տրանսպորտով երթուղիներ իրականացվող փողոցներ: Փողոցների ցանկը քննարկվել և հաստատվել է մարզպետի կողմից: Մրցույթի արդյունքում կազմակերպությունների կողմից առաջարկվող գինը կազմել է 203.0 մլն դրամ, խնայողությունը՝ 97.0 մլն դրամ: Արդյունքում վերանորոգվել են Վարդանանց, Զ.Անդրանիկ, Հալաբյան, Աղայան, Ուսանողական, Շինարարների, Մյասնիկյան, Նժդեհի, Շիրակացու, Թումանյան, Ներսիսյան, Զորյան, Տավրոսի 6-րդ, Դեմիրճյան փողոցները, Երևանյան խճուղին, Լոռվա հրապարակից մինչև Նարեկացու փողոց հատվածը: Համատարած ասֆալտապատման մակերեսը կազմել է մոտ 32500 քմ, իսկ փոսային նորոգման մակերեսը՝ մոտ 10000 քմ:
2. Կառավարության 16.02.2017թ թիվ 503-Ն որոշումով 76.0 մլն դրամ է հատկացվել Վանաձոր համայնքի փողոցների վերանորոգման համար: Մրցույթի արդյունքում կազմակերպությունների կողմից առաջարկվող գինը կազմել է 57.0 մլն դրամ, խնայողությունը՝ 19.0 մլն դրամ: Արդյունքում վերանորոգվել են Տպագրիչների, թիվ 10 դպրոցի արևելյան կողմի և Ինֆեկցիոն հիվանդանոց տանող փողոցները, Ներսիսյան նրբանցքը: Համատարած ասֆալտապատման մակերեսը կազմել է մոտ 5000 քմ, իսկ փոսային նորոգման մակերեսը՝ մոտ 1000 քմ:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պարվերով իրականացված ճանապարհաշինական աշխատանքներ

1. Ներկայումս ընթացքի մեջ են Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի առաջին փուլով նախատեսված հիմնանորոգման աշխատանքները, որոնց պայմանագրային ընդհանուր արժեքը կազմում է 15.45 մլրդ դրամ: Մինչ օրս կատարվել են 11.063 մլրդ դրամի աշխատանքներ: Առաջին փուլով վերականգնվող հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 38.45 կմ, որը բաղկացած է 3 չափաբաժնից՝ 17.625 կմ, 12.5 կմ և 8.325 կմ երկարությամբ, կապալառու կազմակերպություններն են՝ «Արարատի» ՃՇՇ, «Ճանապարհ» ՍՊԸ և «Կապավոր» ՍՊԸ: Ներկայումս ճանապարհի վերակառուցման ավարտական փուլում գտնվող երեք թունելները բերվել են ժամանակակից տեսքի, ապահովվել են ստանդարտներով պահանջվող գաբարիտային չափերը, կառուցվել է երեք նոր կամուրջ:

Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 51.74 կմ, որից 32.95 կմ՝ Լոռու մարզում: Մրցույթն ամփոփվել է, ընդհանուր արժեքը կազմել է 12.46 մլրդ դրամ, հաղթողներ են ճանաչվել. I չափաբաժին – «Հորիզոն-95» ՍՊԸ, արժեքը՝ 4.88 մլրդ դրամ, երկարությունը՝ 9,69 կմ, II չափաբաժին – «ԱԱԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ, արժեքը՝ 2.86 մլրդ դրամ, երկարությունը՝ 14.16 կմ, III չափաբաժին – «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղ իտալական կազմակերպությունը, արժեքը՝ 4.72 մլրդ դրամ, երկարությունը՝ 27,891 կմ: Աշխատանքների սկիզբը նախատեսված է 2018թ գարնանը, ավարտը 2020թ-ի աշնանը:

Մ-6 միջպետական նշանակության ճանապարհի հիմնանորոգման և Վանաձոր համայնքի փողոցների վերանորոգման արդյունքում Վանաձոր քաղաքում ամբողջովին բարելավվել է Մ-6 և Մ-8 միջպետական նշանակության ճանապարհները կապող փողոցների վիճակը:

2. Հիմնանորոգվել է Վանաձոր քաղաքի Հալաբյան փողոցի կամուրջը: ՀՀ բյուջեով նախատեսվել էր 100.0 մլն դրամ: Մրցույթի արդյունքում կազմակերպությունների կողմից առաջարկվող գինը կազմել է 72.4 մլն դրամ, խնայողությունը՝ 27.6 մլն դրամ: Արդյունքում վերանորոգվել են կամուրջի ե/բետոնե կոնստրուկցիաները, հիմնանորոգվել է ե/բետոնե ծածկը, տեղադրվել է մետաղական բազրիք, կատարվել է համատարած ասֆալտապատում:

Մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվել են մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում՝ 89.67 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից ընթացիկ ծմեռային պահպանման համար՝ 35.12 մլն դրամ, ընթացիկ ամառային պահպանման համար՝ 54.55 մլն դրամ:

Ճանապարհաշինության ոլորտում արձանագրված խնդիրները և դրանց վերացմանն ուղղված միջոցառումները

- Ճանապարհաշինության ոլորտում ներդրումները բավարար չեն մարզի ամբողջ ճանապարհային ցանցի վերանորոգման համար:

2018թ նախատեսվում է իրականացնել մարզային նշանակության ավտոճանապարհների ուսումնասիրություն, բոլոր ճանապարհների իրավիճակային նկարագիր, ունենալ մարզի հրատապ լուծում պահանջող ճանապարհահատվածների հիմնանորոգման մոտավոր հաշվարկ՝ ֆինանսավորման աղբյուրների և դոնորների առկայության դեպքում՝ վերջիններիս առաջարկ տրամադրելու համար:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բնակֆոնդ

Բնակչության կենսապահովման կարևոր բնագավառ է հանդիսանում բնակարանային եւ ենթակառուցվածքների գործունեության ոլորտը, ինչը համակարգում է մարզի բազմաբնակարան շենքերի կառավարումը և կոմունալ գործունեությունը, ապահովում կապը բնակչության, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

ՀՀ Լոռու մարզում առկա է 1805 բազմաբնակարան շենք, դրանց կառավարումն իրականացվում է համատիրությունների եւ համայնքների ղեկավարների միջոցով:

Մարզում առկա է՝

- ✓ Մարզի անավարտ մնացած, տարբեր աստիճանի պատրաստվածության բնակելի շենքերը 288-ն են
- ✓ III կարգի վնասվածության եւ ամրացման ենթակա բազմաբնակարան շենքերը – 169
- ✓ տանիքի վերանորոգման կարիք ունի 430 բազմաբնակարան շենք
- ✓ գործող համատիրությունները մարզում 42-են (41 Վանաձորում, 1-ը Գուգարքում)
- ✓ Մարզում առկա 185 վերելակներից 56-ն անսարք են (129 սարքին)

Մարզի բնակարանային ֆոնդի կառավարման եւ շահագործման ոլորտում արձանագրված թերությունները եւ դրանց վերացմանն ուղղված միջոցառումները

Լոռու մարզի քաղաքային համայնքների համատիրությունների եւ բնակարանային տնտեսության բաժինների ոչ բավարար աշխատանքի վերաբերյալ մարզի բնակիչներից

ստացվում են դիմում-բողոքներ, որոնք հիմնականում վերաբերվում են աղբահանությանը, շենքի սանիտարական մաքրմանը, բազմաբնակարան շենքերում ջրամատակարարման և կոյուղու համակարգերի մաշվածությանը, ինչպես նաև համասեփականության այլ տեսակներին առնչվող առկա խնդիրներին (տանիք, նկուղ, աստիճանավանդակ, շքամուտքի պատուհան, դուռ): Դրանք պարբերաբար քննարկվում են քաղաքապետարանների համապատասխան բաժինների, համատիրությունների և բնակարանային տնտեսության բաժինների հետ: Խնդիրների կարգավորման դժվարությունը կայանում է նրանում, որ բնակչության կողմից հավաքագրված վարձավճարների ծայրաստիճան ցածր մակարդակը թույլ չի տալիս իրականացնել նույնիսկ ամենահրատապ վերանորոգման աշխատանքները:

Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում առկա խնդիրների կարգավորումը կնպաստի բնակարանային ֆոնդի պատշաճ շահագործմանն ու պահպանմանը, բնակչության կենցաղի, բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Աղբահանություն

Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ եղանակով, չկան պահանջվող նորմերին համապատասխանող աղբավայրեր, չկան նաեւ աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգեր (բացառությամբ Ալավերդի քաղաքի):

2017թվականի երկրորդ կիսամյակից, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, համայնքային բյուջեում աղբահանության նպատակով գումար նախատեսած համայնքների ղեկավարներին շրջաբերական գրություն է ուղարկվել, հանձնարարվել է աղբահանության պայմանագրեր կնքել իրավաբանական անձանց հետ եւ աղբահանության վարձավճարներ գանձել ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից առաջարկվող դրույքաչափերով:

2017թվականի հունիս ամսին մարզի 14 համայնքներում իրավաբանական անձերի թիվը եղել է 1845-ը, իսկ 2018թվականի հունվարի մեկի դրությամբ՝ 211-ով ավելի (2056):

Աղբահանության գործընթացը վերահսկելու եւ պատշաճ մակարդակի հասցնելու նպատակով նախատեսվում ենք պարբերական այցեր համայնքներ՝ համայնքների ղեկավարների հետ քննարկումներ աղբահանության առավել արդյունավետ տարբերակներ գտնելու համար:

ՀՀ Լոռու մարզում գույքագրված է 348 աղբավայր, որից 340-ը փակված է:

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում հոկտեմբեր-հունվար ամիսներին բնակչության կողմից էլեկտրոնային քարտեզում տեղադրվել է ոչ սահմանված վայրում աղբաթափման և աղբահանման ուշացման թվով 10 լուսանկար, որից Վանաձոր քաղաքում 7, Բազում, Ալավերդի համայնքներում և Օձունի աղբավայրում՝ մեկական լուսանկար: Նշված թերությունները վերացնելու համար մեր կողմից եղել է արագ արձագանք և համայնքների համապատասխան ոլորտը սպասարկող մասնագետների հետ տեղերում ուսումնասիրվել և վերացվել են թերությունները: Վերոնշյալ քարտեզում տեղադրվող լուսանկարների նկատմամբ իրականացվում է ամենօրյա վերահսկողություն:

Ի կատարումն ՀՀ կառավարության 14.12.2017թ. նիստի արձանագրության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 20.12.2017թ. հանձնարարականի, Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության աշխատակիցների կողմից 2018 թվականի հունվար ամսին ուսումնասիրվել են Մ8 Վանաձոր-Դիլիջան, Մ3 ճանապարհի Զրաշեն-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման, Հ33 Ստեփանավան-Յաղդան-Այգեհատ, Հ35 ճանապարհի

Այգեհատ-Օձուն-Մ6 և Մ6 ճանապարհի Ալավերդի-Քարկուի հատվածները: Նշված հատվածներում ինչպես ճանապարհին հարող այնպես էլ վերը նշված ճանապարհներին հարակից համայնքների վարչական տարածքներում առկա են կենցաղային և շինարարակ աղբի կուտակումներ:

Մեր կողմից գրություններ է ուղղարկվել համապատասխան համայնքների ղեկավարներին և ճանապարհաշինական ձեռնարկություններին, հանձնարարվել է վերացնել նշված աղբակույտերը, արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն եւ նշված աշխատանքները կատարել ողջ տարվա ընթացքում:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2017 թվականի հունվարից «Վեոլիա Ջուր» ընկերությունը պաշտոնապես դարձել է Հայաստանի Հանրապետության խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միասնական օպերատորը, ում սպասարկման տարածքում առկա է 37 համայնք (28 բնակավայրով):

Ջրամատակարարման համակարգերն արդյունավետ կառավարելու, վթարավերականգնողական աշխատանքների արձագանքման ժամանակահատվածը կրճատելու, ինչպես նաև ջրամատակարարման համակարգում չհաշվառված ջրաքանակները նվազեցնելու նպատակով «Վեոլիա Ջուր» ընկերության «Լոռի» տեղամասում ստեղծվել է գոտիավորման բաժին և կատարվել են կառուցվածքային փոփոխություններ: Մարզի հիմնական մասը մատակարարող «Նովոսելցովո» ջրատարի որոշ հատվածներում իրականացվել է բարձրադիր ու ցածրադիր ջրաղբյուրների վերաբաշխում: Իրականացված աշխատանքների շնորհիվ բարձրացել է ջրատար համակարգերի հուսալիության աստիճանը, ինչպես նաև նվազել է վթարների առաջացման հավանականությունը:

Բազմաթիվ դիմում բողոքներ ենք ստացել Վանաձորի Տարոն եւ Դիմաց թաղամասերի բնակիչներից՝ շենքերի թերսնուցման, ջրի ցածր ճնշման վերաբերյալ:

«Վեոլիա Ջուր» ընկերության կողմից իրականացվել են լայնածավալ գոտիավորման և շինարարական աշխատանքներ «Տարոն 4», «Դիմաց» թաղամասերում՝ կառուցվել են նոր ջրագծեր, օրվա կարգավորիչ ջրամբարներ: Իրականացված աշխատանքների շնորհիվ ոչ միայն 2 ժամով հնարավոր է դարձել ավելացնել 8-րդ գոտում գտնվող մի քանի թաղամասերի ջրամատակարարումը, այլև ցանցում բարձրացել է ջրի ճնշումը՝ վերացնելով բաժանորդների բողոքները:

Մարզի Տաշիր, Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում նույնպես իրականացվել են համայնքների այլընտրանքային ջրամատակարարման ապահովման, պոմպակայանների արդյունավետության բարձրացման, ջրամատակարարման ցանցի բարեկարգման, կապտաժների վերակառուցման եւ այլ աշխատանքներ:

Մտահոգիչ է ջրամատակարարման սեփական համակարգ ունեցող համայնքների հարցը: Մարզի 36 համայնք (30 բնակավայրով) չի օգտվում կենտրոնական ջրամատակարարման համակարգից եւ խմելու ջրի պաշարները ստանում է սարերի բնական աղբյուրներից, գետերից:

Չնայած նշված համայնքները պարբերաբար իրականացնում են վերանորոգման աշխատանքներ, այնուամենայնիվ, դեռեւս խորհրդային տարիներին կառուցված ջրամատակարարման ներքին ցանցի խիստ մաշվածության կամ բացակայության պատճառով խմելու ջրի մաքրման, քլորացման աշխատանքների արդյունավետությունը խիստ ցածր է: Դրա վկայությունն են ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և

կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող վերահսկողության արդյունքները:

2017թվականին ջրամատակարարման բնագավառում ՀՀ ԿԱ <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ>> ՊՀ կողմից իրականացվել են 292,5 մլն դրամի աշխատանքներ, որից՝

- ✓ 1. Սվերդլով համայնքի խմելու ջրագծի կառուցում – 242.9մլն դրամ
- ✓ 2. Դսեղ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի կառուցում – 8.0մլն դրամ
- ✓ 3. Դսեղ համայնքի տնամերձ ոռոգման ցանցի կառուցում – 14.7 մլն դրամ
- ✓ 4. Ճոճկան համայնքի լրացուցիչ ջրամատակարարում – 26.9 մլն դրամ

Գազամատակարարում

Լոռու մարզի 56 համայնքները՝ 7 քաղաքային եւ 49 գյուղական, բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: Առ 01.01.2018թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 50 (89.3%) եւ չգազաֆիկացված 6(10.7%) համայնք: Գազաֆիկացված չէ նաև 26 բնակավայր:

Առ 01.01.2018թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազաֆիկացված բնակավայրերում առկա են թվով 65177 բաժանորդներ, 30344 բնակարաններ և 34833 առանձնատներ, որից թվով 30879 Վանաձոր քաղաքում: 2017թ. ընթացքում բաժանորդների թվաքանակը աճել է 628-ով, որից 326 բնակարաններ և 302 առանձնատներ:

2017 թվականին մարզում իրականացվել են 167.0 մլն. դրամ ընդհանուր արժեքով գազամատակարարման աշխատանքներ: 2016թ.-ի 133.3 մլն դրամի դիմաց աճը կազմել է 25.3%:

2017թ-ին իրականացված աշխատանքներ.

- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում միջին և ցածր ճնշման գազատարերի վթարային հատվածների վերատեղադրում, փոխարինում և մեկուսիչ ծածկույթի վերանորոգում.
- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում ԳԿԿ-ների (գազակազավորիչ կետեր) հիմնանորոգման և ՊԳԿԿ-ում (պահարանային գազակազավորիչ կետեր) ջեռուցման վառարանների տեղադրում.
- Բնակիչ-բաժանորդների ներտնային գազահամակարգերում անվտանգության սարքերի տեղադրում.
- Դեբետ համայնքի «ՍՄԱՐԹ» կենտրոնի գազաֆիկացում.
- Թվով 628 բնակարանների, առանձնատների և 31 հիմնարկ-ձեռնարկությունների գազաֆիկացում:

ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի էլեկտրաէներգիայի մատակարարը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ «Հյուսիսային» մասնաճյուղն է, որը հանդիսանում է միջանկյալ օղակ արտադրող կայանների և բաշխիչ ցանցերի միջև ՀՀ հյուսիսային տարածքում: «Հյուսիսային» մասնաճյուղը հանդիսանում է նաև կարևոր օղակ, որի միջոցով կատարվում է էլեկտրաէներգիայի փոխանցումը Վրաստանի Հանրապետություն:

2017 թվականին մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ 2,988.5 մլն դրամ ընդհանուր արժեքով: 2016թ.-ի 298.4 մլն դրամի դիմաց աճել է մոտ 9 անգամ:

2017թ.-ի ընթացքում «Հյուսիսային» մասնաճյուղի կողմից իրականացվել են էլ.սարքավորումների սպասարկման ու վերանորոգման աշխատանքներ՝ 4.1 մլն. դրամ և օդային գծերի շահագործման և սպասարկման համար՝ 1.1 մլն. դրամ:

2017թ.-ի հոկտեմբերի 16-ից սկսվել են «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման աշխատանքները՝ Համաշխարհային Բանկի աջակցությամբ էլեկտրամատակարարման Հուսալիության Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում: Ծրագիրն իրականացնում է չինական «XIAN ELECTRIC ENGINEERING CO.,Ltd» ընկերությունը՝ **2473.5** մլն դրամ գումարով:

ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.01.2018թ. դրությամբ առկա է շուրջ **83 908** բաժանորդ:

2017թ.-ի ընթացքում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մարզում իրացվել է 177.3 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա, որից 113.3 մլն. կՎտժ-ը բնակչությանը, ինչի համար անհրաժեշտ էր գանձել 7.654 մլդ դրամ, փաստացի գանձվել է 7.673 մլդ դրամ, (100.2%):

- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ 509.8 մլն դրամի ներդրում.
- Նոր բաժանորդների միացման աշխատանքներ
- Տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների նորոգման և ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներ
- Օդային և մալուխային գծերի հիմնանորոգման աշխատանքներ
- Թվով 26 համայնքապետարանների ֆինանսավորմամբ իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և բարելավման աշխատանքներ՝ 60.0 մլն դրամի:

ԿԱՊ

ՀՀ Լոռու մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ները: «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 47,680 հեռախոսահամար, ներկայում բաժանորդների քանակը՝ 28,000 (CDMA ռադիոկապի բազային կայաններ տեղադրված են Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի քաղաքներում, ընդհանուր ունակությունը՝ 23,100 հեռախոսահամար, բաժանորդների քանակը՝ 3,400):

«ՎԵՈՆ Արմենիա» ընկերության կողմից 2017 թվականին ՀՀ Լոռու մարզում իրականացվել են.

- Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Թումանյան, Սպիտակ և Մարգահովիտ համայնքներում իրականացվել են օպտիկամանրաթելային մալուխի անցկացման աշխատանքներ:
- Դարպաս համայնքում իրականացվել են Huawei սարքավորման տեղադրում՝ ինտերնետ կապի որակի բարձրացման նպատակով:
- Թումանյան քաղաքի Շամլուղ բնակավայրում իրականացվել են օպտիկամանրաթելային մալուխի անցկացման և հեռախոսաֆիկացման աշխատանքներ:

➤



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն

ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2017 թվականի **հուլիսի 1-ի** դրությամբ

	(հեկտար)					
	Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը	Վարելահողեր	Բազմամյա տնկարկներ	Խոտհարքներ	Արոտներ	Այլ հողատեսքեր
Լոռու մարզ	250903.9	42038.3	407.7	35041.3	145638.8	27777.9

Մարզում. ցանքատարածությունները կազմել են՝

2017թ.- 27.110.1 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 64.5 %-ը

Լոռու մարզում 2017թ. կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի համեմատականը 2016թ. հետ (ըստ ԱՎԾ-ի)

h/h	Մշակաբույսը	2016թ.	2017թ.	համեմատականը	
		ցանքը հա	ցանքը հա	ցանքը	
				հա	%
1	Ընդամենը հացահատիկ, որից՝	14506.0	11887.2	-2618.8	-18.0
2	աշնանացան ցորեն	9300	9035	-265	-2.8
3	աշնանացան գարի	270.0	175.0	-95.0	-35.1
4	գարնանացան ցորեն	131.0	730.0	+599	+457.2
5	գարնանացան գարի	2778.0	2556.7	-221.3	-7.9
6	եգիպտացորեն հատիկի համար	476.6	454.9	-21.7	-4.5

7	Հատիկաընդեղենային մշակաբույսեր	240.1	287.0	+46.9	+19.5
8	Կարտոֆիլ	4613.0	4189.6	-423.4	-9.1
9	Բանջարանոցային մշակաբույսեր	1799.8	1602.1	-197.7	-10.9
10	Բոստան	18.0	6.6	-11.4	-63.3
11	Տեխնիկական մշակաբույսեր	552.0	179.7	-372.3	-67.4
12	Կերային մշակաբույսեր	11425.0	8957.9	-2467.1	-21.5
13	Ընդամենը ցանքեր	33181.1	27110.1	-6071	-18.2

Ցանքերի նվազման հիմնական պատճառներից է 2017թ. ձմռանը աշնանացան ցորենի ցանքատարածությունների ցրտահարությունը, որը ոչնչացրեց շուրջ 2000 հա ցանքատարածություններ: Ցրտահարությունը վնասեց 16 համայնքների՝ (Վարդաբլուր, Կուրթան, Հոբարձի, Գյուլագարակ, Յաղդան, Ծաթեր, Արևածագ, Կարմիր-Աղեկ, Մղարթ, Այգեհատ, Մեծ Պարնի, Տաշիր, Ագարակ, Ամրակից, Օձուն, Լեջան) 920 հողօգտագործողների աշնանացան ցորենի ցանքատարածությունները: Ցրտահարության վնասները ուսումնասիրելու նպատակով կազմված հանձնաժողովի համապատասխան մասնագիտական ակտը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման ու գյուղատնտեսության նախարարություններ, որի արդյունքում հողօգտագործողների վնասը հնարավորինս մեղմելու նպատակով ՀՀ կառավարությունը 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 1489-Ն որոշման համաձայն զիճեց 2017 թվականի հողի հարկի 12.1 մլն դրամ և ոռոգման ջրի 2.3 մլն դրամ վարձավճարները:

Լոռու մարզում 2017թ. գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված բերքի համեմատականը

2016թ-ի հետ (ըստ ԱՎԾ-ի)

h/h	Մշակաբույսը	2016թ.	2017թ.	համեմատականը	
		բերք տոննա	բերք տոննա	բերքը	
				տոննա	%
1	Արտադրվել է հացահատիկ և հատիկաընդեղեն	47350	33762	-13588	-28.6
2	Կարտոֆիլ	74267	73680	-587	-0.7
3	Բանջարաբոստանային մշակաբույսեր	33577	27781	-5796	-17.6
4	Կուտակվել է խոտ	126232	112692	-13540	-10.7
5	Պտուղ-հատապտուղ	1579	7920	+6341	+401.5
6	խաղող	131	323	+192	+146.5
7	Ցանվել է աշնանացան (հա)	9300	9035	-265	-2.8

ՀՀ հողօգտագործողներին 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մարզի 71 համայնքների՝ 5814 շահառուի հատկացվել է՝ 2410 տոննա ազոտական, 75 տոննա ֆոսֆորական, 51 տոննա կալիումական պարարտանյութ և 465 հազար լիտր դիզելային վառելանյութ՝ 528 մլն դրամ արժեքով, որից 91 մլն դրամը սուբսիդավորվել է պետության կողմից:

Հայաստանի Հանրապետությունում գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման 2017 թվականի ծրագրի շրջանակներում մարզի 38 համայնքների՝ 585 հողօգտագործողների պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հատկացվել է 58 տոննա գարնանացան գարու, 2.2 տոննա եգիպտացորենի, 827 կգ առվույտի, 7.5 տոննա կորնգանի, 40 տոննա գարնանացան ցորենի և 840 կգ ոլոռի սերմացուներ՝ 37.7 մլն դրամ արժեքով, որից 19 մլն դրամը սուբսիդավորվել է պետության կողմից:

ՀՀ կառավարության 04.12.2017թ. 1585-Ն որոշմամբ ամբողջությամբ ներվել է մարզի Լուսադըյուր, Արջուտ, Արևածագ, Դսեղ, Ծաթեր, Մեծ Այրում, Ճոճկան, Տաշիր և Ջյունաշող համայնքներին հատկացված 22.7 մլն դրամ ընդհանուր արժեքով առաջին վերարտադրության սերմացուի գումարները, մասամբ ներվել է նաև Պետրովկա, Արծնի, Շնող և Սարատովկա համայնքներին հատկացված 640 հազ. դրամ ընդհանուր արժեքով առաջին վերարտադրության սերմացուի գումարները: Պարտքը մատակարար կազմակերպությանը ընդհանուր առմամբ կազմում է 4.1 մլն դրամ, որոնց վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել դիմումներ՝ Դսեղ (780,000 դրամ), Արծնի (445,840 դրամ), Արջուտ (780.000 դրամ), Պետրովկա (320,000 դրամ), Արծնի (208.000 դրամ), Սարատովկա (640.000 դրամ) և Շնող (960.000 դրամ) համայնքների ղեկավարներից հօգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի գումարներ բռնագանձելու մասին վճարման կարգադրություններ արձակելու խնդրանքով: ՀՀ կառավարության նույն որոշմամբ ամբողջությամբ ներվել է նաև 2015-2016թթ. հատկացված 17.7 մլն դրամ ընդհանուր արժեքով ազոտական պարարտանյութի դիմաց Սվերդլով, Միխայելովկա, Լուսադըյուր և Սարալանջ համայնքների պարտքը:

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2017 թվականի գարնանը և աշնանը մարզին անհատույց հատկացվել է 1445 կգ «Ռոդիֆակում Ս» տեսակի մկնասպան միջոց, որով հողօգտագործողների միջոցով պայքար է իրականացվել 18 հազար հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում: Պետության կողմից ներդրման գումարը կազմել է 11.8 մլն դրամ:

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2017 թվականին ագրոքիմիական հետազոտության է ենթարկվել մարզի 18 համայնքի 6305 հեկտար վարելահող: Հետազոտվող տարածքից վերցված 2102 հողանմուշում կատարվել է 5318 փորձաքննություն: Ագրոքիմիական 18 քարտեզները հանձնված են համայնքներին:

Համայնքային բյուջեի միջոցներով Աբրի համայնքում տեղադրվել է «Ձենիթ» տիպի 1 հակակարկտային կայան, որի ընդհանուր արժեքը կազմել է 2.8 մլն դրամ:

Նախապատրաստվել և հոկտեմբերի 8-ին անց է կացվել «Բերքի տոն 2017» մարզային ավանդական տոնակատարությունը, որին մասնակցել են 34 համայնքներ և 19 ձեռնարկություններ:

Անասնաբուծություն և գյուղ. ծրագրերի իրականացում

- Լոռու մարզպետի 7-ը դեկտեմբերի 2016թ. թիվ 293 կարգադրության համաձայն վերահսկվել է Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2017թ. հունվարի 1-17 -ը անցկացված անասնազվաքանակի հաշվառման գործընթացը:

Լոռու մարզի 2017թ-ի անասնազվաքանակի համեմատականը 2016թ-ի նկատմամբ (հունվարի 1-ի դրությամբ)

(ըստ ԱՎԾ-ի)

h/h	Անվանում	2017թ. գլուխ	2016թ. Գլուխ	Համեմատական	
				գլուխ	%
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր	81 038 39 794	81 769 40 864	-731 -1070	-0.9 -2.6
2	Մանր եղջ. կենդ.	37 434	37 919	-485	-1.3
3	Խոզեր	15 815	15 358	+457	+3.0
4	Թռչուններ	287 303	273 086	+14 217	+5.0
5	Մեղվաբնուսանիք	25 185	25 512	-327	-1.3
6	Ձիեր	2 749	2 573	+176	+6.4

Լոռու մարզի 2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսների կտրվածքով անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների համեմատականը 2016թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ

Անվանում	Չափի միավոր	2017թ.	2016թ.	Համեմատական	
				քանակ	%
Կաթ	տոննա	81400	80900	+500	100.6
Միս	տոննա	8700	8200	+500	106.1
Ձու	մլն. հատ	45.6	44.7	+0.9	101.6

- Շրջաբերական նամակների և հետևողական աշխատանքի արդյունքում, մարզի ֆերմերների և գյուղ. տնտեսությունների կողմից մարզպետարան է ներկայացվել թվով 17 գյուղատնտեսական ներդրումային ծրագրեր, որոնք ուղարկվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: Արդյունքում՝ «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության կողմից վարկային միջոցներ են ստացել՝ Ա. Վանաձորում գործող «Ռոգֆոուտ» ՍՊԸ՝ 45 մլն. դրամ, որի հաշվին կառուցել է 250 մ³ ծավալով սառնարան, ձեռք է բերել սարքավորումներ, նյութեր և հումք: Արդյունքում ավելացել է թվով 18 աշխատատեղեր
- «Վաչագան Բաղդասարյան» Ա.Ձ՝ 35 մլն. դրամ, որի հաշվին ձեռք է բերել խոշոր եղջերավոր կենդանիներ, խոզեր և հորթեր: Արդյունքում ավելացել է թվով 7 աշխատատեղեր:
- Մարզում գյուղ. կենդանիների բակային մորթը կանխելու և նոր սպանդանոցներ հիմնելու նպատակով աջակցություն է ցուցաբերվել 2 տնտեսվարողների՝ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում սուբսիդավորված վարկ ստանալու և Սպիտակի ու Ստեփանավանի տարածաշրջաններում սպանդանոցներ հիմնելու համար
- Աջակցություն է ցուցաբերվել «Տերտերյան Տրայդ» ՍՊԸ-ին մարզում նոր ոչխարաբուծական տնտեսություն հիմնելու համար անհրաժեշտ հողատարածքների ընտրության գործում:
- Ստեփանավան և Մեծ Պարնի համայնքներում գործող անասնաբուծական սպասարկման կենտրոնների կողմից իրականացվող, կենդանիների արհեստական սերմնավորման գործնառնական ներգրավելու համար: Արդյունքում 2017թ. գյուղացիական շուրջ 900

տնտեսություններում սերմնավորվել են 2110 գլուխ խոշոր եղջ. կենդանիներ և 120 գլուխ խոզեր:

Մարզում պետական և մասնավոր կառույցների կողմից գյուղ. բնագավառում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- Վանաձորում գործող «Ռոգֆոռուտ» ՍՊԸ պտուղ-բանջարեղենի և արտադրամասի վերազինման նպատակով ներդրվել է 80 մլն դրամ, որից 45 մլն դրամը վարկային միջոցներ, 35 մլն. դրամ սեփական միջոցներ:

- Բազում համայնքում հիմնվել է պտուղ-բանջարեղենի վերամշակման և պահածոների արտադրության «Վան ֆուդ» ՍՊԸ-ն: Ներդրման գումարը կազմել է 70 մլն. դրամ: Ձեռնարկությունում աշխատատեղերի թիվը կազմում է 15 մարդ:

- Տաշիրի տարածաշրջանում «Բոզոյան» ՍՊԸ-ի սեփական միջոցներով կատարվել է 62 մլն. դրամի ներդրում, որից՝

Ա. 10 մլն.դրամով կառուցել է սպամդանոց, որտեղ կբացվի 10-15 աշխատատեղեր

Բ. 52 մլն դրամով խոզաբուծական տնտեսության ստեղծման համար ձեռք է բերել հողատարածք և շինություններ:

- Վանաձորում գործող «Դիետ» ՍՊԸ սարքավորումների արդիականացման նպատակով կատարել է 37 մլն. դրամի ներդրում, որից Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացրած դրամաշնորհային ծրագրից 24 մլն, սեփական միջոցներից 13 մլն. դրամ: Արդյունքում աշխատատեղերի քանակը ավելացել է 5 մարդով:

- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում՝

Ա. Մեծ Պարնի համայնքում պետական բյուջեի միջոցների հաշվին 48 մլն. դրամ գումարով հիմնվել է «Անասնաբուժական սպասարկման կենտրոն»: Կենտրոնը կգործի 2018թ. առաջին կիսամյակում, որտեղ աշխատողների թիվը կկազմի 2-3 մարդ:

Բ. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում Զրաշեն և Գոգարան համայնքներում կազմավորվել են գյուղատնտեսական թվով 2 սպառողական կոոպերատիվներ:

Գ. Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայության կողմից իրականացվել է՝

✓ Խմբային դասընթացներ թվով 5 հատ, մասնակցել է 52 մասնակից

✓ Ծրագրային դասընթացներ թվով 19 հատ, որոնց մասնակցել են 361 մասնակից, որից հավաստագրվել է 359-ը: Հավաստագիրը հիմք է հանդիսանում ստանալ գյուղատնտեսության զարգացման համար մատչելի վարկեր:

✓ Կազմակերպվել է 104 տոնավաճառ, մասնակցել է 210 գյուղատնտեսական մթերք արտադրող:

- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Գյուղի Զարգացման Արդի Նախաձեռնությունը (ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում իրականացվել է

Ա. Մեծ Պարնի և Եղեգնուտ համայնքներում՝ գյուղ.կենդանիների 5 ջրախմոցների կառուցման աշխատանքներ՝ 12 689 442 դրամ արժեքով

Բ. Մեծ Պարնի համայնքում հիմնված անասնաբուժական սպասարկման կենտրոնի սարքավորումների և կահույքի տրամադրում՝ 6 659 440 դրամ արժեքով

Գ. Ալավերդի համայնքում վերազինվել է կաթի վերամշակման արտադրամաս՝ 3 100 000 դրամ արժեքով,

Դ. Մարզում իրականացվել է 6 դրամաշնորհային բիզնես փոքր ծրագիր՝ այգեգործություն, ջերմոցային տնտեսություն, գյուղական տուրիզմի զարգացում և գյուղ, տեխնիկայի տրամադրում՝ յուրաքանչյուրը 700 հազար դրամ արժեքով:

- 2017թ. ընթացքում «ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում, մարզի թվով 7 շահառուների կողմից

ձեռք է բերվել 11 միավոր գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիքներ: Լիզինգի գումարը կազմել է 44.970.000 դրամ, որից պետության կողմից սուբսիդավորվել է 11.502.297 դրամ:

- ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից,
Ա. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրով, մարզի տնտեսավարողներին տրամադրվել է 1067 միավոր վարկ 917.4 մլն դրամ գումարով, սուբսիդավորման գումարը կազմել է 79.45 մլն դրամ
Բ. «Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում «Վան ֆուդ» ՍՊԸ ձեռք է բերել 37 մլն. դրամ մատչելի տոկոսադրույքով վարկային միջոցներ:
- ՀՀ Լոռու մարզում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում թվով 9 հիվանդությունների նկատմամբ իրականացվել է շուրջ 600407 կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ:

Ոռոգման համակարգը

Ըստ մարզային հողային հաշվեկշռի մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 9613 հա, որից փաստացի ոռոգվում է մոտ 2000-3000 հա:

«Լոռի» ԶՕԸ-ի համակարգմամբ 2017 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքները

Ոռոգման ջուր մատակարարող «Լոռի» ԶՕԸ-ն գործունեության արդյունքներով 2017թ. ապահովել է 1981 հա հողատարածքների ջրամատակարարումը՝ 2016թ. 946 հա-ի փոխարեն կամ ավել՝ 1034 հա-ով:

«Լոռի» ԶՕԸ-ի կողմից 2017թ. կատարվել են ոռոգման ցանցերի, ջրանցքների մաքրման, ՀՏԿ-ների և պոմպակայանների նորոգում: Նշված և նման այլ աշխատանքների համար ամբողջ տարվա կտրվածքով պետ. բյուժեով նախատեսված 31 մլն. 662 հազ. դրամից կատարվել են 30 մլն. 336 հազ. դրամի շինաշխատանքներ:

Ոռոգման ջրամատակարարման ծառայության դիմաց հավաքագրումների գծով 2017թ. համակարգի ջրտույքը եղել է 2 մլն. 652 հազ. խ.մ., հասույթը կազմել է՝ 29 մլն. 174 հազ. դրամ, գանձումը՝ շուրջ 31 մլն. 286 հազ. դրամ կամ 107%-ը:

«Լոռի» ԶԸ-ի կողմից ջրօգտագործողներին տրված ոռոգման ջրերի, հասույթի և վարձավճարների գանձումը

h/h	«Լոռի» ԶՕԸ տեղամասեր	Ոռոգված տարածքը (հա)			Ջրտույքը հազ. խ.մ.	Հասույթը հազ. դրամ	Գանձումը հազ. դրամ	Գանձման մակար- դակը %
		Ընդա- մենը	մեխանի- կական	ինքնա- հոս				
1	Լոռու ջրանցք	1041	569	472	1000.1	11001.12	12865.7	116
2	Գետիկ	940.0	425.4	514.7	1652.1	18173.4	18421.0	101
	Ընդամենը	1981	994.4	986.7	2 652.2	29 174.52	31 286.7	107

Գյուղ.ոլորտում 2017թ. իրականացված և 2018թ. նախատեսվող ներդրումների և աշխատատեղերի համեմատականը

Ծրագրերի անվանում	Ներդրումներ (մլն. դրամ)		Աշխատատեղեր	
	2017թ	2018թ.	2017	2018
Պետական ներդրումային և սուբսիդավորվող վարկային ծրագրեր	1 133,6	532.1	16	15
Մասնավոր ներդրումային ծրագրեր	249.0	4331.0	53	225
Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր	26.7		6	
Ընդամենը	1 409.3	4863.1	75	240

Բնապահպանություն


Լոռու մարզը հարուստ է անտառային և լեռնատափաստանային տարածքներով: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101 205 հա, որից անտառածածկ է 85 799 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը:

2017թ. ընթացքում պլանային և այլ հատումները կազմել են 14 600մ³, այդ թվում Թեղուտի հանքավայրի շահագործման նպատակով իրականացված հատումները՝ 2 675մ³:

2017թ. ընթացքում մթերվել է 13 170մ³ թափուկ վառելափայտ:

2017թ. ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից կատարվել է 1186 ստուգայց, հայտնաբերվել են ապօրինի անտառհատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման 222 դեպք՝ 1157.5մ³ ծավալով: Հարուցվել է 46 քրեական գործ, քրեական գործերով պետությանը հասցված վնասի չափը կազմել է 46 մլն. 172 հազ. դրամ, որից վերականգնվել է 769 հազ. դրամ: Վարչական պատասխանատվության են ենթարկվել 41-ը, պետությանը հասցված վնասի չափը կազմել է 3 մլն. 285 հազ. դրամ, որից վերականգնվել է 1 մլն. 700 հազ. դրամ:

Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2017թ. ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 887 ծառ – 697 մ³ ընդհանուր ծավալով:



Անվանումը	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Օրինական հատումներ (մ ³)	1198 5	12370	14215	11704	10704	11282	10826	14598
Թափուկ (մ ³)	3254	2435	5147	5727	8588	10954	9910	13167
Ապօրինի հատումներ (մ ³)	490	219	174	105	93	219	332	697

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնտեսությունների տարածքներում 2017թ. իրականացվել է.

- Շաբաթօրյակների միջոցով 14.5 հա անտառտնկման,
- GIZ ծրագրով «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում 100 հա կոճղաշիվային վերաճի օժանդակման,
- UNDP ծրագրով «Լավվարի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում 93 հա կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ:

Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում.

- 2015-17թթ. ընթացքում Շնող համայնքում 46 շահառուի համար իրականացվել են 30 հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ: 2018թ. նախատեսվում է ևս 10 հա պտղատու այգիների հիմնում:
- 2017թ. հիմնականում «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում իրականացվել է 61.9 հա անտառտնկման, 20.4 հա լրացման, 490.4 հա ագրոտեխնիկական խնամքի, 240.6 հա խոտհունձի և ավելի քան 4 կմ ցանկապատման աշխատանքներ:

2017թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.

- 58.4 հա ծառատնկման աշխատանքներ Տաշիր քաղաքում:
- Մուլշապատման եղանակով ծառերի խնամքի աշխատանքներ Միխայլովկա համայնքում:
- Ցանկապատի վերանորոգման աշխատանքներ Ջրաշեն, Կաթնաջուր և Միխայլովկա համայնքներում:

2018թ. նախատեսվում է ավարտել ծառատնկման աշխատանքները Տաշիրի քաղաքի 25 հա մակերես ունեցող տարածքում:

Մարզպետարանի հանձնարարությամբ համայնքներում ծառերի էտը կազմակերպվում է ուշ աշնանը և էտից առաջացած վառելափայտը տրամադրում են սոցիալապես անապահով ընտանիքներին: Մասնավորապես Վանաձոր համայնքում 2017թ. ընթացքում էտվել է 580 ծառ, որից առաջացած վառելափայտը տրամադրվել է սոցիալապես անապահով 75 ընտանիքի և 6 ՀՈԱԿ-ների, որոնց ջեռուցումն իրականացվում է վառելափայտով:

2017թ. գարնանը շաբաթօրյակների միջոցով կանաչապատման աշխատանքներ իրականացնելու համար մարզի 16 համայնքների մարզպետարանի կողմից տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնկարաններից օգնության կարգով ստացված վայրի տանձի, խնձորի և ընկույզի շուրջ 4000 տնկիներ:

Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ մշակվում և պարբերաբար անց են կացվում «Անտառների հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնալարժություններ:

Ընդհանուր առմամբ 2017թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 135 հա անտառտնկման, ինչպես նաև նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացվել են նաև ցանկապատման և նախկինում կառուցված ցանկապատի վերանորոգման աշխատանքներ:

Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2017թ. ընթացքում.

- Արդվի համայնքում կառուցվել է 260մ² պասիվ արևային ջերմատուն, որը հանձնվել է «Արդվի» կոոպերատիվին: Ծրագրի նախագծային արժեքը կազմել է 21 մլն. դրամ:
 - Իրականացվել է Օձունի համայնքամերձ 93 հա անտառի կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ: Առաջացած շուրջ 300մ³ փայտանյութը անվճար տրամադրվել է Օձունի և հարևան համայնքների կարիքավոր ընտանիքներին:
 - Ընթացքի մեջ են մարզի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների (ԱԿՊ), ինչպես նաև «Մարգահովիտ» և «Կովկասյան Մրտավարդենի» արգելավայրերի կառավարման պլանների կազմման աշխատանքները:
- Ծրագրի շրջանակներում 2018թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել.
- Գուգարքի և Եղեգնուտի անտառտնտեսությունների տարածքներում շուրջ 500 հա դեգրադացված անտառների կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ: Առաջացած վառելափայտը կտրամադրվի կարիքավոր ընտանիքներին:
 - Մեծ Պարսի համայնքում վառելափայտին փոխարինող բրիկետների արտադրության ընդլայնում: Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 100 մլն. դրամ:
 - 3-4 փոքր դրամաշնորհային ծրագրեր մեկնարկ՝ յուրաքանչյուրը 25 000 ԱՄՆ դոլար:

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում:

Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 34 կազմակերպություններ, որոնցից 3-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (շահագործվում է Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Ուսումնասիրվել և համապատասխան առաջարկություններ են արվել ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտներին առնչվող իրավական ակտերի մի շարք նախագծերի վերաբերյալ:

ՀՀ պետական բյուջեի կողմից 2014-2017թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները				
	2014	2015	2016	2017	2018– նախատեսված
Ալավերդի	120 000.0	94 097.0		29 757.0	178 000.0
Հաղպատ	27 000.0	27 081.1		3 155.4	3 272.6
Օձուն	12 498.4	7 403.5	47 918.2	3 155.4	
Աքորի	30 000.0	20 173.5		24 903.2	1 372.6
Հագվի	30 000.0			30 051.1	
Ախթալա	4 500.0		4 588.2		
Շնող				2 120.0	
Ճոճկան				1 192.0	
Մեծ Այրում				682.3	
Ընդամենը	223 998.4	148 755.1	52 506.4	111 667.2	182 643.2

Ընթացքի մեջ է «Կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգ» ծրագիրը, ըստ որի Քարածոր համայնքից դեպի արևմուտք ընկած լանջին նախատեսվում է կառուցել նոր սանիտարական աղբավայր: Նոր աղբավայրը կսպասարկի Գուգարքի, Սպիտակի տարածաշրջաններին և Տավուշի մարզի Դիլիջան քաղաքին: Ըստ նախնական գնահատականի այն ծառայելու 25 տարի: Աղբավայրն զբաղեցնելու է 11հա: Աղբավայրի շահագործմանը զուգընթաց կլուծվի նաև համայնքներում տարերայնորեն առաջացած ապօրինի աղբավայրերի լիկվիդացման հարցը:

Ըստ նախագծի Ալավերդու մկնդեղի գերեզմանոցի կոնսերվացման համար անհրաժեշտ է շուրջ 128 մլն. դրամ:

2018թ. Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից նախատեսվում է հանքաքարի վերամշակումից առաջացած հեղուկ պոչանքները հատուկ գոտիների օգնությամբ խոնավությունը հասցնել 7-8%-ի, որից հետո դրանք կտեղադրվեն Շամլուղի պղնձի հանքավայրի պաշարներից սպառված տարածքներում: Թափոնների տեղադրման և պահպանման նման մոտեցումը բնապահպանական տեսնկյունից մի քանի անգամ ավելի նպաստավոր է, քան պոչամբարների ավանդական շահագործումը:

2017թ. ընթացքում Լոռու մարզի 16 համայնքներում իրականացվել է բնության և շրջակա միջավայրի պահպանության ու ընդերքօգտագործման բնագավառների վարչական հսկողություն և արդյունքները ներկայացվել տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Ամերիկյան համալսարանի կողմից իրականացված հետազոտությունների հիման վրա պարզվել է, որ կապարով և մկնդեղով առավելագույնս աղտոտված է Ախթալայի եկեղեցու բակը: Աղտոտումը պայմանավորված է միջնադարում տվյալ տարածքում մետաղաձուլարանի առկայությամբ: Կատարվել է Ախթալայի եկեղեցու բակի հողածածկի ռեկուլտիվացիայի ծրագրի նախագիծ, որը նախատեսում է 11 500մ² մակերեսի վրա գետտեքստիլ թաղանթի փռում, 20-30սմ հողածածկում և նոր խոտածածկի հիմնում: Ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ հողի ծավալը կկազմի 2300մ³, վերին հումուսային հողաշերտը (5-10սմ)՝ 600մ³: Հաշվի առնելով, որ Ախթալայի վանական համալիրը զբոսաշրջիկներին գրավող հիմնական տեսարժան, ինչպես նաև ազգային տոների և ժամանցի վայրերից է, ակնհայտ է տվյալ կանխարգելիչ միջոցառման իրականացման անհրաժեշտությունը:

Բնապահպանության բաժինը «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի, այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանության ոլորտին առնչվող հասարակական լուծումների, սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին:



ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2017թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 29 ժամանակավոր սխեմա Ամրակից, Դսեղ, Մեծ Պարնի, Զիլիզա, Լեռնապատ, Հարթագյուղ, Յաղդան, Կաթնաղբյուր, Արջուտ, Նոր Խաչակապ, Ախթալա/Նեղոց/, Ալավերդի/Հաղպատ/, Դարպաս, Լերմոնտով, Սպիտակ, Լուսաղբյուր, Մեծավան, Ագարակ, Թումանյան/Լորուտ/, Տաշիր/Լեռնահովիտ, Դաշտաղեմ, Կաթնաղբյուր, Մեղվահովիտ, Նովոսելցով, Պուշկին, Գուգարք, Վահագնաձոր, Այգեհատ, Սպիտակ համայնքներում, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

2017 թ. մարզի համայնքներում օտարվել է 184 միավոր հողամաս 42.12 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2017թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 72.3 միլիոն ՀՀ դրամ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով

սահմանված նվազագույն մեկնարկային արժեքը օտարված հողամասերի համար կազմում է 30.79 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 392.0%-ը:

2017թվականին վարձակալության է տրամադրվել 806.62 հա պետական սեփականության գյուղատնտեսական նշանակության հողամաս 926.3 հազ. ՀՀ դրամ վարձավճարով: Ընդհանուր առմամբ 2017 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 6453.4 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 4462.7 հա 10469.4 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 10703.0 հազ դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է 102 %:

2017 թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 70591 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 43627.6 հա 141293.4 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 141465.1 հազ դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 100.3 %

•ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի 'Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին' թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ:

•Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250903.9 հա, Բնակավայրերի՝ 16485.2 հա, Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3991.9 հա, Էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1653.5 հա, Հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2402.6 հա, Հատուկ նշանակության՝ 1217.1 հա, Անտառային՝ 100603.4 հա, Ջրային՝ 2606.9 հա:

Գյուղատնտեսական նշանակության՝ 250903.9 հա հողերից, որից վարելահող 42038.3 հա, բազմամյա տնկարք 407.7 հա, խոտհարք 35041.3 հա, արոտ 145638.8 հա, այլ հողատեսք 27777.9 հա փաստացի օգտագործվում է, 84953.1 հա, որից վարելահող 32517.9 հա, բազմամյա տնկարք 300.6հա, խոտհարք 20938.2հա, արոտ 29533.2հա, այլ հողատեսք 1663.2 հա:

Օժանդակվել է համայնքների շուրջ 150 միավոր ջրամատակարարման համակարգերի գույքի և զբոլեցրած հողամասերի պետական գրանցման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և դրանք ջրամատակարար ընկերություններին հանձնման աշխատանքներին:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

2017թ. արդյունքներով մարզի մանրածախ առևտրի 707 օբյեկտներ ապահովել են 37635.6 մլն. դրամի ապրանքաշրջանառություն, 2016թ. համապատասխանաբար 1010 օբյեկտի և 39756.6 մլն. դրամի ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալը նվազել է և կազմել նախորդ տարվա միայն 94.7%-ը (հանրապետականը՝ 107.4%): Մարզում մանրածախ ապրանքաշրջանառության հիմնական աղբյուրներն են խանութները՝ 304 հատ և 17552.6 մլն. դրամի շրջանառությամբ, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաները՝ 5 հատ և 2441.9 մլն. դրամի շրջանառությամբ, կրպակները՝ 322 հատ և 3500.8 մլն. դրամի շրջանառությամբ և առևտրի այլ օբյեկտները՝ 76 հատ և 14140.3 մլն. դրամի շրջանառությամբ:

Սպառողական գների ինդեքսը (գնաճը) հանրապետությունում եթե կազմել է 102.6%, ապա Վանաձորում՝ 103.2%, այդ թվում՝ սպառման ապրանքներինը՝ համապատասխանաբար 104.2% և

104.9%, որից սննդամթերքինը՝ 105.3% և 107.1%, ոչ պարենային ապրանքներինը՝ համապատասխանաբար 101.7%, 100.1%:

Մարզի մեկ շնչին ընկնող մանրածախ առևտրի ծավալը 2017թ. կազմել է 172.8 հազ. դրամ միջին հանրապետական 449.3 հազ. դրամի դիմաց կամ ցածր է ավելի քան 2.6 անգամ և 2016թ. 178.1 հազ. դրամի դիմաց:

	2005թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Մանրածախ առևտուր	19585.1	23281.4	22607.1	50090.8	39756.6	37635.6

Շատ վատ վիճակում է գտնվում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողական աշխատանքները: 2017թ. նշված օբյեկտներում իրականացված ընդամենը 329 հսկողության արդյունքում արձանագրվել է միայն 4 խախտում, իսկ գումարը կազմել է 20.0 հազ. դրամ (ք.Սպիտակ), 2016թ. համապատասխանաբար՝ 383 հսկողություն, 30 խախտում և 105.0 հազ. դրամ:

Ծառայությունների ծավալը մարզում 2017թ. կազմել է 18214.7 մլն. դրամ, 2016թ. 15770.6 մլն. դրամի դիմաց կամ ծառայությունների ծավալն աճել է 115.5%-ով, իսկ տեսակարար կշիռը կազմել է հանրապետական ծառայությունների 1.3%-ը, նախորդ տարվա 1.2%-ի դիմաց:

Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը մարզում անցյալ տարի կազմել է 83.6 հազ. դրամ 2016թ. 70.7 հազ. դրամի և միջին հանրապետական 488.9 հազ. դրամի դիմաց (կամ հանրապետականի 17.1%-ը):

	2005թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Մատուցվող ծառայությունների ծավալը	7593.5	12932.8	15764.2	17720.4	15770.6	18214.7

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐ

2017 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.
- Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը.
- Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը.
- Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

- Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 նիստեր: Նիստերի օրակարգերում ընդգրկվել և քննարկվել են 12 հարցեր:
- Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման և տեղական ինքնակառավարման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել և ընդունվել են մարզպետի 21 որոշումներ:
- Աջակցություն է ցուցաբերվել թիվ 22, 23, 24, 25 տարածքային ընտրական հանձնաժողովներին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ ՀՀ Ազգային ժողովի, մարզի համայնքների ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:
- Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված 8391 գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը, 2016թ.-ին՝ 6269:
- Ներկայացվել է պաշտոնական թղթակցությունների, հանձնարարականների կատարման 977 պատասխանների նախագծեր, 2016թ.-ին՝ 1117:
- Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված 106 դիմում-բողոքներ և ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր, 2016թ.-ին՝ 77:
- Ըստ անհրաժեշտության և ստացված հանձնարարականների կազմվել և համայնքների ՏԻՄ-երին է ուղարկվել 175 շրջաբերական գրություններ, 2016թ.-ին՝ 132:
- 35 համայնքներում իրականացվել է ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն և դրանց վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել Լոռու մարզպետի տեղակալների մոտ:
- Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, նրա տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:
- Համակարգվել է համայնքների 2016 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցության աշխատանքները:
- Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել, համապատասխանեցնել գործող օրենսդրությանը: 2017 թվականին ստացվել են համայնքների ավագանիների 3554 և համայնքների ղեկավարների 7220 որոշումներ:
- Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ (զինկոմիսարիատներ, ոստիկանության մարզային վարչություն, վիճակագրության ծառայության մարզային բաժին, փրկարարական մարզային վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2017 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի ընտրություններ 13 համայնքներում, որից 10-ում խոշորացված համայնքների ղեկավարների և ավագանիների, 2-ում համայնքի ղեկավարի, 1-ում ավագանու անդամների:

- Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպման նպատակով կազմակերպվել են քննարկումներ համայնքների ՏԻՄ-երի մասնակցությամբ:
- Խոշորացման արդյունքում Թումանյանի, Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների թվով 61 համայնքների միավորման արդյունքում ստեղծվել են 10-ը խոշորացված համայնքներ՝ Ալավերդի, Ախթալա, Օձուն, Շնող, Ստեփանավան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Տաշիր, Մեծավան, Սարչապետ:
- Խոշորացված համայնքների ղեկավարների հետ քննարկվել են համայնքապետարանների աշխատակազմերի կառուցվածքների, հաստիքացուցակների կազմման հարցերը և համայնքային ծառայության անվանացանկերը ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հաստատմանը:
- Կարևորելով ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների և աշխատակազմերի հետ պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ:
- Աշխատանքներ են իրականացվել համայնք-մասնավոր հատված համագործակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ 01.01.2017թ. դրությամբ 9-ը համայնքները մասնավոր կառավարմանը փոխանցել էին 17 ծառայություններ, 31.12.2017թ. դրությամբ համապատասխանաբար՝ 30 համայնք և 53 ծառայություններ: Մասնավոր հատվածի կառավարմանը փոխանցված ծառայությունները մեծամասամբ աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի ծառայություններն են:
- Մշտական մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին ՏԻՄ ոլորտի գործող օրենսդրության և հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման և գործավարության կազմակերպման հարցերում:
- Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանների աշխատակազմերին գույքահարկի բազաների վարման աշխատանքները կազմակերպելու հարցում, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացվել և աշխատակազմերին է տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների ցանկը: Ամիսը մեկ անգամ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունքից ստացվել, տեսակավորվել և ըստ համայնքների աշխատակազմերին է տրամադրվել հաշվառված և հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների ցուցակները:
- Մարզի 56 համայնքներից համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ ունեն 38-ը, 67.9% :
- ՀԿՏՀ ներդրած համայնքների համակարգերը միացված են Mullbery համակարգին՝ էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնելու նպատակով, սակայն այդ համայնքներից մեծ մասը փաստաթղթաշարժը մարզպետարանի հետ չեն իրականացնում այդ համակարգում տարաբնույթ տեխնիկական անսարքությունների պատճառաբանությամբ:
- Մարզի 37 համայնքներ ունեն ինտերնետային կայքեր, սակայն այդ կայքերի շահագործման մակարդակը գոհացուցիչ չէ: Աշխատանքներ տարվել համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման ուղղությամբ:
- Ապրիլ ամսին տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը (ՏՀՀԿԿ) իրականացրել է մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկում, որի արդյունքները ներկայացվել է մարզպետարանում կազմակերպված սեմինարի ժամանակ համայնքապետարանների և ՏՀՀԿԿ համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ:

- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2016թ.-ի երկրորդ կիսամյակում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների ցուցակները, 2017թ. հուլիսին համայնքնապետարաններին տրամադրվել է հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված քաղաքացիների ցուցակները:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 56 մրցույթներ, որոնցից կայացել են 19-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 25 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 24-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են 16-ը:
- Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և հանրային իրազեկման նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում:
- Վարչության աշխատակիցները համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում մասնակցել են մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 67 համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքներին:
- ««Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի» ՀԿ-ի հետ կազմակերպվել է Վանաձորի և Սպիտակի համայնքապետարանների աշխատակազմերի 47 համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների վերապատրաստումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզում 2017թ. գործել է.

ա/ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ

բ/ 69 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4797 երեխաներով, 2 ոչ պետական ՆՈՒՀ և 34 նախակրթարան /34 խումբ, 585 երեխա/

գ/ 163 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ դպրոց և 3 վարժարան /2-ը՝ մասնագիտացված/:

Մարզային ենթակայությամբ գործող 149 դպրոցներն ընդգրկում են՝

- ♦ միջնակարգ դպրոցներ - 80
- ♦ վարժարան - 1
- ♦ հիմնական դպրոցներ - 68
- ♦ 26751 սովորողները կոմպլեկտավորվել են 1607 դասարաններում

2016-2017թթ. ուսումնական տարում մարզի 163 հանրակրթական դպրոցներում աշխատել են 3178 ուսուցիչ, այդ թվում 2798-ը՝ մարզային ենթակայության դպրոցներում: Ուսուցիչ աշակերտ

հարաբերակցությունը 2016-2017 ուսումնական տարում կազմել է 1/8.5 /2015-16 ուստարում եղել է 1/8.3/:

Նախադպրոցական կրթություն

2017 թվականին Լոռու մարզում գործել է 69 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 5443 երեխա/տեղ, որի միայն 88%-ն է շահագործվում:

2017թ. ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են 165 խմբով, որտեղ ընդգրկվել է 4856 երեխա: Ընդ որում, 5-6 տարեկանների թիվը 1805 է: Երեխա/դաստիարակ հարաբերակցությունը կազմում է 1/14:

Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը կազմել է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 24%-ը: Այս բացը լրացվում է գյուղական համայնքների դպրոցների կազմում գործող (նախակրթարանների միջոցով):

2013-2017 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Տարեթիվը	Մանկապարտեզների թե ՆՈՒՀ թիվը	Խմբերի թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը	դաստիարակ-երեխա հարաբերակցությունը
2013	68	149	4346	1638	1/12,4
2014	69	155	4575	1828	1/12,5
2015	68	154	4538	1844	1/12,6
2016	68	152	4379	1807	1/13
2017	69	165	4856	1805	1/14

Ինչպես երևում է աղյուսակից, կրթական բարեփոխումների արդյունքում երեխա-դաստիարակ հարաբերակցության մեջ արձանագրվել է դրական դինամիկա:

Ուսումնասիրվում են նախակրթարանների թիվը ավելացնելու հնարավորությունները: 2018 նախակրթարանների թիվը ավելացնելու դեպքում կունենանք ավելի շատ հաճախող երեխաներ:

Միջնակարգ կրթություն

Մարզային ենթակայության 149 դպրոցում աշխատում է 2798 ուսուցիչ, որոնցից 2602-ը ունի բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն /91.4%-ը/, մնացած 196-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն:

1 դասարանում սովորող աշակերտների միջին թիվը 16.4 է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17.6 ժամ:

Հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Ցուցանիշներ	2013/2014	2014/2015	2015/2016	2016/2017	2017/2018
Դպրոցների քանակը	151	151	151	150	149

Աշակերտների թվաքանակը՝ այդ թվում	24861	25226	26120	26435	26751
/1-ին/ դասարան	2848	3017	3055	3223	3118
/9-րդ/ դասարան	2183	1132	2145	2031	2346
/12-րդ/ դասարան	1135	1190	1096	959	498
Միջին հաշվով 1դպրոց հաճախում են	160	160	173	176	179
Դասարանների միջինքանակը մեկ դպրոցում	10.3	10.4	10.6	10.7	10.7
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	15.9	15.9	16.2	16.4	16.7
Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցություն	1/7.9	1/8.1	1/8.3	1/8.3	1/8.5

Գծապատկերից երևում է, որ 2017 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ 316-ով: Աշակերտների թիվն ըստ կրթական մակարդակների նախորդ տարվա համեմատ աճել է տարրական դպրոցում՝ 1.76%, միջին դպրոցում՝ 2.7%, ավագ դպրոցում՝ նվազել է 10,1%:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում համակարգվել և վերահսկվել են մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և նրանց ընդգրկումը հանրակրթական դպրոցներ: Արդյունքում՝ 2017թ. սեպտեմբերին 1-ին դասարան է ընդունվել 3118 երեխա: Այս ցուցանիշը 105-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

Ըստ դպրոցների տվյալների 2017թ. մարզի տարածքում հայտնաբերվել են հանրակրթական հաստատություններում գրանցված, սակայն պարտադիր ուսուցումից դուրս մնացած 54 երեխաներ (հիմնականում մեկնել են արտերկիր): Պարտուսից դուրս մնացած երեխաների ծնողների կամ խնամակալների հետ կազմակերպվել են հանդիպումներ, կատարվել են բացատրական աշխատանքներ:

Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,8%: Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի մոտ 22.03.2017թ. կայացած խորհրդակցության N22/03 արձանագրության 3-րդ կետի՝ նախապատրաստվել է մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ 7-13 տարեկան 415 աշակերտների ցուցակը, որոնք իրենց ամառային հանգիստը 3 հերթափոխով անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում:

Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 149 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 801-Ն որոշումը՝ 2017թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կազմակերպվել է մարզային ենթակայության 148 հանրակրթական դպրոցների կանոնադրությունների նոր խմբագրման և հաստատման գործընթացը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը դիտելով առաջնահերթություն, մարզը հայտարարվել է «Սմարթ» մարզ: Այդ գաղափարախոսության շրջանակներում մարզի 17 հանրակրթական դպրոցներում ստեղծվել են «Սմարթ» դասարաններ՝ հագեցած ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով, բարձր հզորության համակարգիչներով: Դասասենյակների վերանորոգումը, կահավորումը, համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը իրականացվել է դպրոցների խնայողությունների հաշվին: Յուրաքանչյուր դպրոց միջինը 5-6 մլն դրամի սահմաններում (ընդհանուր 73.1 մլն.դրամ-միայն շինարարության ծախսն է) ձեռք է բերել գույք և տեխնիկական միջոցներ:

2018թ. նախատեսվում է « Սմարթ» դասարանների հիմնում Վանաձորի թիվ 1, թիվ 3, Գյուլագարակի հիմնական, Լեռնապատի, Ալավերդու թիվ 4, Օձունի թիվ 2 և Լեռնահովիտի միջնակարգ դպրոցներում:

Նախատեսվում է նաև

ա/Մարզում «Սմարթ» դասարանների հիմնում ևս մի քանի հանրակրթական դպրոցներում :

բ/Մարզկենտրոնում և տարածաշրջանային կենտրոններում բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցների առանձնացում և օնլայն(առցանց) դասերի կազմակերպում գյուղական համայնքների դպրոցների հետ:

Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար եւ 2018թ.-ի պլանների ձևավորման համար:

Մարզում գործում է թվով 19 դպրոց, որոնց աշակերտների թիվը չի գերազանցում 30 աշակերտը: Թերբեռնված դպրոցներում 2018 թվականին նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն, վերլուծության արդյունքում առաջարկել ռացիոնալացման ենթակա թվով 4 դպրոցները:

Արդյունքում աշակերտները կհաճախեն հարակից համայնքի գույքով և մասնագետ կադրերով ապահովված դպրոց: ՀՀ պետական բյուջեն կխնայի 76.0 մլն դրամ:

Մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական ուսումնական հաստատություններից 66-ը ջեռուցումը իրականացնում է լոկալ համակարգով /բնական գազ, կաթսայատուն կամ փոքր հզորության կաթսա/, 44-ը գազի վառարանով, 22-ը վառելիքայտով, 19-ը էլեկտրականությամբ, 2-ը հեղուկ վառելիքով:

ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 346-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության թվով 2 դպրոցների ամրացված անշարժ գույքը հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը /մարզային ենթակայության թվով 149 հաստատություններին ամրացված գույքից հանձնված է 69-ինը/:

Ներկայացվել է թվով երկու ՀՀ կառավարության որոշման նախագծեր՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Մարշալ Բաղրամյանի անվան թիվ 26 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձեվով վերակազմակերպելու մասին»: Ներկայացված նախագծերը հաստատվել են:

ՀՀ Լոռու մարզպետի հանձնարարությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը և սովորողների կրթական մակարդակը ուսումնասիրելու նպատակով 2017թ-ի փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են այցելություններ Ստեփանավանի տարածաշրջանի թվով 9 դպրոցներ: Տրվել են թեմատիկ գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու», «Մաթեմատիկա» և «Ինֆորմատիկա» առարկաներից, որոնց մասով կատարվել է վերլուծություն:

Արդյունքում ի հայտ եկած թերությունները շտկելու համար տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոնց պարտադիր կատարումը վերահսկվում է վարչության կողմից: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

2017 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական դպրոցներից 14-ում կազմակերպվել են դպրոցի տնօրենի թափուր պաշտոնների համար մրցույթներ: Ուսուցչի թափուր տեղի համար կազմակերպվել և անցկացվել է 649 մրցույթ:

2017թ. հունվարից սկսած նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մարզի 621 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորելու ուղղությամբ: ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի համաձայն 2017թ. ատեստավորման ներկայացված ուսուցիչներից պարզ ընթացակարգով ատեստավորվել են 581-ը: Տարբեր պատճառներով վերապատրաստման դասընթացներին չեն մասնակցել և չեն ատեստավորվել 40 ուսուցիչներ:

2017թ-ի հունվար-մարտ ամիսներին հաշվառվել են մարզի բոլոր դպրոցների 9-րդ դասարանի աշակերտները՝ ըստ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու», «Հայոց պատմություն», բնագիտական առարկաներ և «Ռուսաց լեզու» առարկաներից ավարտական քննություններ հանձնելու ցանկության:

Իրականացվել է ծավալուն նախապատրաստական աշխատանք՝ ավարտական քննությունները 2016-2017 ուստարվա ավարտին և 2017-2018թ. ուստարվա համար նախատեսված 2017թ-ի դեկտեմբեր ամսին կայացած սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի պահանջներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում

Փետրվարի 9-ից մարտի 6-ը կազմակերպվել և անց է կացվել օլիմպիադանների տարածքային և մարզային փուլերը, որոնց մասնակցել են համապատասխանաբար՝ 1519 և 700 աշակերտներ: Մարզային փուլի արդյունքում 155 /նախորդ տարում՝ 115/ աշակերտներ իրավունք են նվաճել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Վերջնական արդյունքում մարզը ունեցել է 544 միջազգային և հանրապետական օլիմպիադանների մրցանակակիր՝ նախորդ տարվա 248-ի փոխարեն, որից ՝ հանրապետական փուլի 41 և միջազգային օլիմպիադայի 503 մրցանակակիր, նախորդ տարվա ՝ 34-ի և 214-ի փոխարեն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ նախագահի ամենամյա մրցանակաբաշխության <<Լավագույն աշակերտ 2017>> անվանակարգում ունեցել ենք 2 հաղթող աշակերտ՝ Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցից: Նույն դպրոցի 2 աշակերտներ Աստանայում և Թալլանդում կայացած քիմիայի միջազգային օլիմպիադաններին արժանացել են 3 բրոնզե ու 1 արծաթե, մեդալների:

2017թ-ի ընթացքում Լոռու մարզում ՀՀ Կառավարության հաստատած ծրագրի շրջանակում Պաշտպանության, ԿԳ նախարարությունների կողմից կազմակերպվել են մի շարք շարադրությունների մրցույթներ՝ միտված մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացմանը, անկախ և հզոր հայրենիքի կերտման գաղափարի խթանմանը մեր երիտասարդության շրջանում: ՀՀ Լոռու մարզպետի հովանու ներքո անց է կացվել «Իմ ծննդավայրը» խորագրով շարադրությունների մրցույթ, որի արդյունքում 10 լավագույն մասնակիցներ ՀՀ Լոռու մարզպետի կողմից արժանացել են մեծարման և խրախուսանքի:

Շախմատը Լոռու մարզի դպրոցներում - 2015-16 ուսումնական տարում շախմատ առարկան ուսուցանվել է 10268 աշակերտի, 2016-17 ուսումնական տարում՝ 10286, իսկ 17-18 ուստարում՝ 10302:

2006թ.-ից անց են կացվում դպրոցականների շախմատի օլիմպիադանները:

2017թ. հունվարից մինչև սեպտեմբեր ամիսը անց է կացվել Լոռու մարզի դպրոցականների շախմատի տասերորդ օլիմպիադայի երեք փուլերը, որին մասնակցել են տաս հազար հարյուր

աշակերտներ: մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում ստեղծվել են շախմատի խմբակներ, որպես լրացուցիչ կրթական ծառայություն:

Ուսուցիչների մրցույթների կազմակերպում

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1354-Ն հրամանով հաստատված «Տարվա լավագույն ուսուցիչ, դաստիարակ, տնօրեն մրցույթների անցկացման մասին» կարգի պահանջներին համապատասխան 2016-2017 ուստարում կազմակերպվել են Լոռու մարզի ՀՀ Տարվա լավագույն ուսուցիչ» <<Տարվա լավագույն տնօրեն» և <<Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները: Հաղթողները պարգևատրվել են Լոռու մարզպետի կողմից:

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի թիվ 734-Ա/Ք հրամանով հաստատված <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Հայոց պատմություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, բնագիտական /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն/ առարկաների ուսուցիչների և դասվարների <<Լավագույն ուսուցիչ>> հանրապետական մրցույթի անցկացման կարգը, մարզային գնահատող հանձնաժողովի որոշմամբ մրցույթի մարզային փուլի հաղթողներ ճանաչված ուսուցիչները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մասնակցել են ՀՀ ԿԳ նախարարության և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին 2-րդի օրինությամբ կազմակերպված <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթի հանրապետական փուլին և 2 ուսուցիչներ արժանացել են 2-րդ կարգի մրցանակների:

2 զինղեկ հաղթող են ճանաչվել <<Տարվա լավագույն զինղեկ և Լավագույն քաղաքաշտպանության շտաբի պետ>> մրցույթների մարզային փուլում:

Հափուկ /ներառական/ կրթություն

2016-2017 ուստարում ներառական կրթություն են իրականացրել մարզի 16 հանրակրթական դպրոցներ՝ 471 վկայագրված աշակերտների համար: -

2017 թվականի սեպտեմբերից Լոռու մարզում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Լոռու մարզի հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում մարզի հանրակրթական դպրոցներ են տեղափոխվել 98 աշակերտ, որի արդյունքում 2017-18 ուստարում ներառական կրթություն են իրականացնում մարզի 53 դպրոցներ՝ 662 վկայագրված աշակերտների մասնակցությամբ:

2016-17թթ ներառական կրթության վերաբերյալ Կրթության ազգային ինստիտուտը հնգօրյա վերապատրաստման դասընթացներ է կազմակերպվել մարզի 161 դպրոցներում՝ 3760 ուսուցիչների համար: Բացի այդ 2017 թվականին մարզի ուսումնական հաստատությունների 139 ուսուցչի օգնականների համար իրականացվել են վերապատրաստման ծրագրեր:

Մարզում ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկված են մարզպետարանի աշխատակազմի առանձին ստորաբաժանումների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մասնագիտական աշխատանքային խումբը 2018 թվականի փետրվարից սկսած պարբերաբար կայցելի դպրոցներ՝ տեղում ուսումնասիրելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրները, կնպաստի ծնողների և ուսուցիչների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աճող սերնդի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում հանրակրթական դպրոցում ռազմահայրենասիրական աշխատանքների կազմակերպումը: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ էական աշխատանք է կատարվել Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում: 2017թ.-ին դպրոցների ռազմագիտության դասասենյակները և լսարանները նորացվել են համապատասխան դիդակտիկ պարագաներով, ցուցադրական նյութերով, ստենդներով և տեսաֆիլմերով, բարելավվել է դասավանդման որակը:

«Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերի հանրային քննարկումների շրջանակում կազմակերպվել են հանդիպում-խորհրդակցություններ դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ՆԶՊ

առարկայի ուսուցիչների, ավագ դասարանների սովորողների և նրանց ծնողների մասնակցությամբ:

ՆԶՊ առարկայից 2017թ. դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին Լոռու մարզից մասնակցել են 7 աշակերտներ: Թիմային հաշվարկով ռազմականացված խաղերից թիմը գրավեց 2-րդ տեղը:

2017թ. նոյեմբերին կազմակերպվել և անց է կացվել «Կորյուն» ռազմամարզական խաղերի տարածքային փուլը: Տարածքային փուլին մասնակցել է 21 թիմ՝ 210 մասնակիցներով, որից 5 թիմ՝ 50 մասնակիցներով, անցել է մարզային փուլ:

2017թ. մայիս ամսին հաջողությամբ կազմակերպվեցին մեկօրյա ռազմադաշտային պարապմունքները: Դրանց մասնակցեցին 11-րդ դասարաններում սովորող 235 պատանիներ:

Համագործակցված աշխատանք է կատարվել Լոռու մարզի Փրկարարական վարչության հետ:

Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների բաշխումը

Դասագրքերի շրջանառու համակարգով 2017-2018 ուստարվա սկզբում բաշխվել է 39 անուն 56305 դասագիրք: Դասագրքերի վարձավճարների գանձումը մարզում կատարվել է 100 տոկոսով: Ստացվել են տարրական դասարանների 14 անուն 25315 դասագիրք:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին հաճնարարվել է հատուկ ուշադրություն դարձնել համայնքներում ֆիզիկական դաստիարակությանը, բնագիտական առարկաներին և ուսումնասիրել առնվազն 3 օտար լեզվի դասավանդման հնարավորությունները:

Ոչ պետական միջոցներով կրթական օբյեկտների եւ նախադպրոցական հասարակությունների մասով իրականացրած ներդրումներ

Պարենի Համաշխարհային Ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 143 դպրոցներում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որի շրջանակներում տարրական դասարանների եւ նախակրթարանների 11627 երեխաների համար 1-անգամյա սնունդ է կազմակերպվում: Ծրագրում ընդգրկված են նաև դպրոցներում գործող 34 նախակրթարանները: Նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ համագործակցություն է իրականացվել Կրթության ազգային ինստիտուտի, ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնի, միջազգային, բարեգործական կազմակերպությունների («Վորլդ Վիժն», ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի UNICEF, ԱՐԴԱ, DSC ֆրանսիական միության հայաստանյան մասնաճյուղ, «Փրկեցեք երեխաներին», «Քայլ առ քայլ» և այլն), հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ:

«Լոռի-Մարտակերտ» բարեկամության ծրագրի շրջանակներում Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի թվով 14-ական դպրոցականներ իրենց ամառային հանգիստը 2017թ. հուլիսի 20-ից մինչև հուլիսի 27-ը անց են կացրել «Գուգարք», իսկ հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 3-ը՝ «Ծիծեռնակ» ճամբարներում:

Մարզի 30 ուսման գերազանց առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների աշակերտներին և սովորողներին նշանակվել է «Լոռու դպրոց» հիմնադրամի անվանական կրթաթոշակ 3000-10000 դրամի չափով: 15 շնորհալի երեխաների «Լոռու մշակույթ և սպորտ» հիմնադրամի կողմից նշանակվել է 10000-20000 դրամի չափով կրթաթոշակ:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում «Լոռու դպրոց» հիմնադրամի կողմից մարզի ավելի քան 1000 անապահով ընտանիքների դպրոցական երեխաների հատկացվել են 11 անուն գրենական պիտույքներ, գրքերի վարձավճարներ և զանազան կարգի այլ օգնություններ:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ Լոռու մարզում մշակութային քաղաքականության իրականացման և ապահովման նպատակով կազմակերպվում են պետական, ազգային և այլ տոների, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ: Այդ թվում.

❖ Ամանորյա և Սուրբ ծննդյան օրվան նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

❖ Հայոց բանակի կազմավորման 25-րդ տարելիցին նվիրված հորեյանական միջոցառումներ:

❖ Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված մարզային միջոցառումներ.

❖ Մայիսյան տոներին նվիրված տարաբնույթ միջոցառում-հանդիսություններ:

❖ ՀՀ Անկախության 26-ամյա հորեյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ

❖ Մայրության և Գեղեցկության տոնին նվիրված հանդիսություններ:

❖ Երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին նվիրված ոգեկոչման միջոցառումներ:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

❖ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն

❖ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոն:

❖ «Լոռվա հարսանիք» հանդիսություններ համայնքներում՝ /Վանաձոր, Ստեփանավան, Շահումյան/ :

❖ «Վարդավառ» հանդիսություն Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքում,

Այլ միջոցառումների թվում՝

Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրվա առիթով, որը վերիջին տարիներին արժևորվում է նաև որպես Գիրք նվիրելու օր, կազմակերպված միջոցառումը կրում էր «Իմ Թումանյանը» խորագիրը և նվիրված էր մեծն լոռեցու ծննդյան 148-ամյակին ու Մայրենի լեզվի օրվան:

«Մշակութային կանգառ» միջոցառումների շրջանակներում՝

❖ Հայաստանի «Երգի թատրոնի», «Կոմիտասի» անվան լարային քառյակի, Հնագույն երաժշտության «ՏԱՂԱՐԱՆ» համույթի, Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի Ազգային Ակադեմիական Երգչախմբի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:

❖ «Հայաստան, ի՛մ սեր» խորագրով համերգների կազմակերպումը Սպիտակ, Ալավերդի, Օձուն, Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան համայնքներում:

❖ ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնի անցկացումը:

❖ «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 10-11-րդ մրցույթ-փառատոն»-ի Լոռու մարզային փուլերի կազմակերպումը:

❖ ԱՀ «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» երգի-պարի պետական համույթի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:

❖ Բերքի տոն-2017» տոնահանդեսն այս տարի առաջին անգամ հանդիսավորությամբ նշվեց Վանաձորի Հայքի հրապարակում:

Անհրաժեշտ է բարելավել մշակութային հաստատությունների շենքային պայմանները, մշակութային կառույցներում ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցներով և սարքավորումներով հագեցվածությունը: Բավարար սոցիալական պայմաններ ստեղծել այդ ոլորտում աշխատողների համար:

ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

2017թ. փետրվարի 19-ին Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել «Լոռվա ձմեռ-2017» 47-րդ ավանդական մարզատոնահանդեսը:

2017թ.-ի մայիսին Վանաձորում անց է կացվել «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ» մրցաշարը՝ ֆուտբոլ մարզաձևից:

Հանրակրթական դպրոցների սովորողների մասնակցությամբ կազմակերպվել են՝

- ✓ 1-3-րդ և 4-7-րդ դասարանցիների սպորտլանդիա մարզական միջոցառման տարածաշրջանային և մարզային փուլերը
- ✓ հանրակրթական դպրոցների սովորողների 2-րդ հանրապետական ուսումնամարզական խաղերը
- ✓ ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» մրցույթի տարածաշրջանային, մարզային և հանրապետական/սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ/ փուլերը
- ✓ 1-6-րդ դասարանի աշակերտների շրջանում կազմակերպվել են ՀՀ «Ազգային Ժողովի Գավաթ»-ի խաղարկության մրցումների ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային փուլերը
- ✓ ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի 2017թ. տարածաշրջանային, մարզային փուլերը
- ✓ «Տարեցների մարզական խաղեր» մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը
- ✓ ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի Լոռու մարզային փուլը
- ✓ ՀՀ անկախության 26-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի տարածաշրջանային, մարզային մրցումները
- ✓ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ կազմակերպվել են «Առաջին գյուղական մարզական խաղերի» հանրապետական եզրափակիչ փուլը
- ✓ «Հանրակրթական դպրոցների սովորողների 8-12-րդ դասարանցիների 1-ին հանրապետական սպարտակիադա»՝ մրցման Լոռու մարզային փուլը հնգամարտ, վոլեյբոլ, բասկետբոլ և սեղանի թենիս մրցաձևերից
- ✓ ավագ տարիքի դպրոցականների ամենամյա ռազմամարզական խաղերի դպրոցական, տարածքային և մարզային փուլերը

2017թ. Օգոստոսի ամսին ձևավորվել է «Բազե-2017» երիտասարդական հավաքին մասնակցող Լոռու մարզը ներկայացնող ջոկատը:

Սեպտեմբերին մարզի թվով 5 քաղաքներում և Գուգարք համայնքում կազմակերպվել են մարզական փառատոններ, որոնց ընդհանուր թվով մասնակցել են շուրջ 7.000 մարդ:

Կազմակերպվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» մրցույթների Լոռու մարզային փուլերը:

Անհրաժեշտ է վերակառուցել Վանաձորի մարզադաշտը, որը կխթանի ֆուտբոլ մարզաձևի զարգացումը: Բարելավել մարզադպրոցների շենքային պայմանները, վերապատրաստումների միջոցով բարձրացնել մարզիչների որակավորումը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2017թ. ընթացքում Լոռու մարզում գործել են հետևյալ բուժհաստատությունները

h/h	բուժհաստատության տեսակը	քանակը	մահճակալ-ների թիվը
1.	հիվանդանոց	1	45

2.	բժշկական կենտրոններ՝	5	396
	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ		186
	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ		50
	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ		40
3.	դիսպանսեր	1	35
4.	պոլիկլինիկաներ	4	
5.	Լոռու մարզային արյան փոխներարկման կայան	1	
6.	առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ամբուլատորիաներ/	19 (որից համայնքային ենթակայության՝ 5)	
7.	առողջապահական ընկերությունների կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր	95	
8.	Ընդամենը՝	31	476

Մարզի առողջապահական ընկերություններում աշխատում են՝ բժիշկներ - 394, միջին բուժաշխատողներ- 995, այլ- 576, ընդամենը՝ 1965 մարդ:

2017թ. ընթացքում առողջապահության համակարգում նախատեսված պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը ներկայացվում է՝

2017թ.Բազային ծավալ հազ.դրամ	Կատարողական	Ֆինանսավորում
Հիվանդանոցային՝	1503190.6	1480847.1
Արտահիվանդանոցային՝	2156372.3	2128530.7
ԸՆԴԱՄԵՆԸ՝	3659562.9	3609377.8

Ընդունված կատարողականը ֆինանսավորվել է 100 %-ով:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում վճարովի ծառայության մուտքերը ըստ տարիների՝

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ
2014թ.	475415.9
2015թ.	523786.7
2016թ.	526069.1
2017թ.	608255.7

Նկատվում է վճարովի ծառայությունների աճ 2016թ. համեմատ՝ 15.6%:

Առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

- Մարզպետարանի ենթակայության բաժնետիրական ընկերությունների ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական պատվերի ֆինանսավորումն ստանալուց եւ վճարումները կատարելուց հետո յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը չեն գերազանցում տվյալ եռամսյակի համար մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվային գումարի մեկ երրորդը:

-2017թ.արդյունքներով աշխատավարձի գծով պարտքեր առողջապահական ընկերությունները չունեն:

Ընթացքի մեջ է՝

-«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները՝ 2017թ կատարվել են 85 մլն. ՀՀ դրամ արժեքով աշխատանքներ:

Ավարտվել են՝

1.«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները: 2017թ.կատարվել են 1305.6 մլն. դրամի աշխատանքներ:

2.«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով կատարվել են կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել սարքավորումներ 628.6 հազ. դրամ արժեքով: «Դիակոնիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից դիսպանսերին նվիրաբերվել է կահույք՝ 3700.0 հազ. դրամ արժեքով:

3. «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի /COAF/ կողմից «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրվել է 725.740 դրամ՝ մասնակի վերանորոգում կատարելու և ատամնաբուժարան բացելու համար: Կատարվել են վերանորոգման աշխատանքները և սպասվում է ատամնաբուժարանի սարքավորումների ստացմանը:

4.«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել սարքավորումներ, կատարել կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ՝ մոտ 10715.0 հազ. դրամ արժեքով:

5. «Մեծ Պարնիի ԱԿ» ՊՈԱԿ-ի համար կատարվել են գազաֆիկացման աշխատանքներ ընդհանուր 3.532,1 հազ դրամ գումարով, որից «Դիակոնիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից 2.500,0 հազ. դրամ, Լոռու առողջապահության հիմնադրամը 400,0 հազ. դրամ և սեփական միջոցներով՝ 632,1 հազ.դրամ :

Նախատեսվում է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հազեցում բժշկական կահույքով և սարքավորումներով և «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի հազեցում բժշկական գույքով:

6.«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով ձեռք է բերվել ուլտրաձայնային թվային դյուրակիր սկաներ 2 տվիչով, որի արժեքն է 5 190,0 հազ.դրամ:

7.«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ և պարագաներ՝ 2705.0 դրամ արժեքով:

8.«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել սարքավորումներ՝ 2566.0 հազ. դրամի չափով:

9.«Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով ձեռք են բերվել լաբորատոր նյութեր և ավտոկլավ 489.2 հազ. դրամ չափով /որից Շնողի և Թեղուտի գյուղապետարարանների կողմից տրամադրվել է դրամաշնորհ 250000 դրամ/:

10.«Վորլդ Վիժն» կազմակերպության կողմից «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ին է տրամադրվել գրասենյակային կահույք՝ 1476.4 հազ. դրամ ընդհանուր արժեքով, սեփական միջոցներով կատարվել է Հազվու ԲՄԿ-ի ընթացիկ վերանորոգում 49600դ, սեփական միջոցներով գույքի ձեռքբերում՝ 52000 դրամ արժեքով:

11. «Վորլդ Վիժն» կազմակերպության կողմից «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել գույք և համակարգչային տեխնիկա 666.0 հազ դրամ արժեքով, բարերարի կողմից գնվել է վիրահատական սեղան 2350.0 հազ.դրամ արժեքով:

12. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ի կողմից մարզի թվով 14 առողջապահական ընկերությունների տրամադրվել են սառնարաններ ընդամենը՝ 6678.0 հազ. դրամ արժեքով:

13. Մակ-ի գրասենյակի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել տոկոմոնիտոր՝ 980.0 դրամ արժեքով, սեփական միջոցներով կատարվել են կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ՝ 250.0 հազ. դրամ արժեքով:

14. «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՓԲԸ-ները սեփական միջոցներով ձեռք է բերել բժշկական սարքավորումներ՝ ընդամենը՝ 826.000 հազ դրամ արժեքով:

15. «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում կատարվել է ԷՍԳ սենյակի վերանորոգում՝ 200.0 հազ. դրամի չափով:

16. ԱՀԿ-ն մարզի մի շարք առողջապահական ընկերությունների տրամադրել է թվով 15 հասակաչափեր և 14 մանկական կշեռքներ՝ 2850.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

Ընդամենը՝ շուրջ 47000.0 հազ դրամ:

- 2017թ մարզի առողջապահական ընկերություններում սահմանված կարգով ապահովվել է բնակչության անվճար բուժօգնությունը, իրագործվել են պետական առողջապահական ծրագրեր: Մարզպետի կողմից տրամադրվել է շուրջ 127 միջնորդագրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Մարզից Երևան քաղաքի առողջապահական հաստատություններ են ուղեգրվել 27 հիվանդներ, որոնք հիմնականում այն հիվանդներն են, որոնց բուժօգնությունը մարզում կազմակերպել հնարավոր չէր /տվյալ ծառայության բացակայություն կամ մասնագիտացված բուժօգնության կազմակերպում/:

-«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծված մարզային ակնաբուժական կենտրոնում կատարվել են 564 վիրահատություններ, որից վճարովի սկզբունքով՝ 122 վիրահատություն, ՀԱՆ ծրագրով՝ 229 վիրահատություն, ՀՀ ԱՆ կուրության կանխարգելման ծրագրով՝ 83 վիրահատություն, հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի անձանց՝ 130 վիրահատություն: **Որպես բոնուս «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամը նվիրել է դիոդային լազերային ապարատ՝ դիաբետիկ ռետինոպաթիաների բուժման համար:**

-Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրենների մրցույթները իրականացվում են գործող կարգի համաձայն /ՀՀ կառավարության 7 հուլիսի 2011թ. թիվ 992-Ն որոշում/: Կազմակերպվել և անց են կացվել «Տաշիրի բժշկական կենտրոն» և «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների տնօրենների թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթներ և նշանակվել տնօրեններ:

-Համաձայն 2017թ. օգոստոսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 958-Ն որոշման «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարվել է օպտիմալացում՝ փակելով ընկերության ծննդօգնության 5-մահճակալանոց ստացիոնար մասը և ընդհանուր ստացիոնար 5-մահճակալանոց մասը, ընկերությունում իրականացվում է միայն ամբուլատոր ծառայություն, **Ֆինանսական տնտեսումը կազմել է 14.5 մլն դրամ:**

- Կապված համայնքների խոշորացման հետ 2018թ. ևս նախատեսվում են օպտիմալացման աշխատանքներ:

- Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները: 2013-2017թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մարզում առկա է շաքարային դիաբետով, նորագոյացություններով, պարբերական հիվանդություններով հիվանդացության աճ, իսկ հոգեկան հիվանդությունների, սեռավարակների և տուբերկուլյոզի՝ նվազման միտում:

	2013թ	2014թ	2015թ	2016թ	2017թ.
Շաքարային դիաբետ	4013	4312	4748	4906	5170
Նորագոյացություններ	3136	3289	3497	3531	3656
Հոգեկան հիվանդություններ	4500, այդ	5000, այդ	5062, այդ	5243, այդ	4841, այդ

	թվում 596 -ը նարկով ոգ. կաբ./	թվում 655-ը նարկով ոգ. կաբ./	թվում 588-ը նարկով ոգ. կաբ./	թվում 604-ը նարկով ոգ. կաբ./	թվում 485-ը նարկով ոգ. կաբ./
Սեռավարակներ	1278	1197	1312	1269	1128
Պարբերական հիվանդություններ	442	491	502	478	515
Տուբերկուլոզ	402	380	368	372	334

-MSF /բժիշկներ առանց սահմանի/ կազմակերպությունը 7-8 տարի է զբաղվում է Լոռու մարզի դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների բուժմամբ: 2017թ.սկսվել է նաև դեղորայքակայուն տուբերկուլոզով՝ համակցված հեպատիտ C-ի հետ, հիվանդների բուժում և պրոֆիլակտիկա: Արդյունքում արձանագրվել է տուբերկուլոզի կայուն ձևերով հիվանդների թվի նվազեցում:

-Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզական բուժում են ստանում 57 հիվանդներ:

-ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվել մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված 61 մլն 072 հազ. 357 դրամ արժեքով և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված 120 մլն 510 հազ. 503 դրամ արժեքով դեղորայք: Մետադոնային ծրագրով հատկացվել է 2մլն 325 հազ. 900 դրամ արժեքով դեղորայք:

- Պարբերաբար ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել Լոռու մարզի առողջապահական ընկերություններին անհրաժեշտ մասնագետների պահանջարկը: ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցության արդյունքում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ գործուղումներով Լոռու մարզ են գործուղվել բժիշկներ:

-2017թ. մարզի առողջապահական ընկերություններ են ընդունվել 11 երիտասարդ մասնագետներ:

-ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից միջնորդագիր է տրամադրվել 2 բժիշկի կլինիկական օրդինատուրայում տարբեր մասնագիտություններով սովորելու՝ հետագայում մարզում աշխատելու պայմանով, և մեկ բժշկի մասնագիտական վերապատրաստում անցնելու:

-Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն /«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 2 և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի են ընդունվել 1 սիրիահայ բժիշկներ/:

-ՀՀ Լոռու մարզ հրավիրված երիտասարդ բժիշկներին ևս ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն:

- Ախթալա համայնքում արձանագրված «Լեյշմանիոզ» դեպքի, Ճոճկան և Մեծավան համայնքներում արձանագրված աղիքային հիվանդացության դեպքերի հետ կապված ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի և մարզի պատասխանատու մասնագետների հետ համատեղ կազմակերպվել են խորհրդակցություններ, տրամադրվել են համապատասխան մեթոդական ցուցումներ աշխատանքները ճիշտ և պատշաճ կատարման վերաբերյալ:

- Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում ապահովում են 5 տարածաշրջանային և 1 ստացիոնար /վիրաբուժական եւ թերապևտիկ պրոֆիլ/ բժշկական հանձնաժողովները:

-Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 27-ի No 983-Ա և ՀՀ պաշտպանության նախարարի 2017 թվականի ապրիլի 25-ի No 2-Ա «Հայաստանի Հանրապետությունում զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման մասին» համատեղ հրամանի Լոռու մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ

պատվաստումների գործընթացը իրականացվել է համապատասխան ԱԱՊ հաստատության կողմից՝ ըստ Պատվաստումների ազգային օրացույցի:

-Շարունակական բնույթ է կրել բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Մասնագիտացված անհետաձգելի բուժօգնության կարիք ունեցող երեխաներին բուժօգնության տրամադրումը արդյունավետ կազմակերպելու նպատակով ՀՀ առողջապահության հրամաններով 3 մանկաբույժ մասնակցել են Ռուսաստանի Դաշնության Մոսկվա և Սանկտ-Պետերբուրգ քաղաքներում վերապատրաստման դասընթացներին:

-Չեխիայի հայտնի և փորձառու մասնագետների կողմից կազմակերպվել է ԵՄ՝ մասնավորապես Չեխիայի, առողջապահական ապահովագրական համակարգերի լավագույն պրակտիկայի վերաբերյալ աշխատաժողով, որին մասնակցել են ՀՀ Լոռու մարզի առողջապահության կազմակերպիչներ:

-ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և Օստեոպորոզի կենտրոնի մասնագետների կողմից մարզում իրականացվել է «Յոդի հագեցվածության հիմնախնդիրները Հայաստանում» վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ներգատաբաններ, ընտանեկան բժիշկներ, թերապևտներ, գինեկոլոգներ:

-Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի կողմից Երևան քաղաքում կազմակերպվել է Տեղամասային մանկաբույժի դպրոց, որոնց մասնակցել են Լոռու մարզից 10 մանկաբույժներ և ընտանեկան բժիշկներ:

-Աստղիկ ԲԿ-ում պրենատալ սրտաբան Կարեն Կուրդովի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում-սեմինար պրենատալ սոնոգրաֆիստների հետ: Մարզից մասնակցել են 4 բժիշկ:

-Տնային այցի առկա համակարգի ուժեղացման, մայրերի հետ տարվող աշխատանքի բարելավման նպատակով ԱՀԿ-ի աջակցությամբ և ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ԱԱՊ օղակի բուժաշխատողների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ: Ուսուցում են ստացել շուրջ 145 բուժաշխատող:

-ՄՀԻՎ ռազմավարության շարունակական ներդրման ապահովման, երեխաներին մատուցվող պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավման նպատակով ԱՀԿ-ի աջակցությամբ և ՀՀ առողջապահության նախարարի հրամանով կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են 60 բժիշկ (մանկաբույժ և ընտանեկան բժիշկ):

-Ամերիկայի հայ օգնության ֆոնդի կողմից Վանաձորում կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են 30 բժիշկներ:

-ԱՀԿ-ն Իմունոկանխարգելման ազգային ծրագրով կազմակերպել է Մարդու պապիլոմավիրուսի պատվաստանյութի /ՄՊՊ/ ներդրման վերաբերյալ դասընթացներ բժշկական անձնակազմի համար և խորհրդակցություններ՝ առողջապահության և կրթության ոլորտի պատասխանատուների մասնակցությամբ:

-Նեոնատալ ծառայության բարելավման նպատակով նեոնատոլոգների հայկական ասոցիացիան «Վորդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպության հետ համատեղ կազմակերպել են դասընթացներ մարզի նեոնատոլոգների, մանկաբարձ-գինեկոլոգների, մանկաբույժների և նեոնատալ բուժքույրերի համար: Կազմակերպվել են նաև աշխատանքային այցեր ասոցիացիայի մասնագետների կողմից՝ տեղերում ցուցաբերելով մասնագիտական աջակցություն:

- Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում կայացել է ընտանեկան բժշկության 5-րդ միջազգային գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցել են Լոռու մարզի ընտանեկան բժիշկները:

-«Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության և ՀՀ առաջատար կլինիկաների մասնագետների կողմից 2 անգամ կազմակերպվել են մանկաբուժական ֆորումներ՝ մարզի մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, մանկական նյարդաբանների, գաստրոէնտերոլոգների համար (յուրաքանչյուր ֆորումին մասնակցել են 35 բժիշկ), ինչպես նաև վերապատրաստման դասընթաց տեղամասային բուժքույրերի համար (100 բուժքույր):

-«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» /COAF/ բարեգործական կազմակերպության կողմից մարզի պատասխանատուների հետ իրականացվել են աջակցող այցեր և դասընթացներ

«Թումանյանի ԱԿ», «Դսեղի ԱԿ», «Աքորու ԱԱՊԿ», «Արևածագի ԱԱՊԿ», «Վահագնիի ԱԿ» հաստատություններում:

-«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպվել է ակնաբույժների 15-րդ միջազգային համաժողովը, որին մարզից մասնակցել են 7 բժիշկ (ակնաբույժ և նեոնատոլոգ):

-ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպվել է «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիր»-ի շրջանակներում աշխատանքային հանդիպում՝ հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության համաճարակաբանական հսկողության համացանցի 2017 թվականի հաշվետվությունը ներկայացնելու նպատակով: Հանդիպման ընթացքում քննարկվել են իրականացված և իրականացվելիք միջոցառումների ծրագրերը, մանրէաբանական հետազոտության մեթոդաբանությունը, հակաբիոտիկների կիրարկումը, նշանակումը Հայաստանում, ինչպես նաև ներհիվանդանոցային վարակների կանխարգելման մոտեցումները:

-ՀՀ սփյուռքի նախարարությունը «Ակցիա առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության հետ համատեղ Երևանում կազմակերպել է Սրտաբանության եվրակովկասյան 6-րդ համաժողովը, որին մարզից մասնակցել են 4 սրտաբան:

-Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են շարունակական դասընթացներ, որին մասնակցել են Լոռու մարզից 9 բժիշկներ, 9 բուժքույր:

-«ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետները տրամադրել են մարզի թվով 29 համայնքներում մատուցել են ՄԻԱՎ-ին և հեպատիտների առնչվող ծառայություններ:

-ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել են խորհրդակցություններ՝ մարզի առողջապահական ընկերություններում աշխատող ԲՍԲ ուղեգրման գործընթացում ներգրավված բժիշկ մասնագետների մասնակցությամբ:

-Մի շարք դեղագործական կազմակերպություններ մարզում իրականացրել են սեմինարներ, որոնց մասնակցել են մարզի սրտաբանները, նյարդաբանները, թերապևտները, ներզատաբանները և ընտանեկան բժիշկները:

-«Էրեբունի» բժշկական կենտրոնի առաջատար մասնագետների կողմից Լոռու մարզի բժիշկների համար 2 անգամ կազմակերպվել է գիտաբժշկական կոնֆերանս, որին մասնակցել են ավելի քան 100 բժիշկներ՝ նյարդաբաններ, սրտաբաններ, թերապևտներ, ընտանեկան բժիշկներ, անոթային վիրաբույժներ:

- Մանկաբուժական ծառայության պատասխանատուների կողմից իրականացվել են Ծնողական կրթության սենյակների աշխատանքների մոնիտորինգ, գրականության և տեսաֆիլմերի տրամադրում, դասընթացների անցկացնում յուրաքանչյուր կրթության սենյակում 2-ական անգամ: Ընդհանուր դասընթացներին մասնակցել են 1000-ից ավել ծնողներ, որոնք բարձրացրել են իրենց կրթական մակարդակը՝ երեխաների ճիշտ խնամքի, սնուցման, զարգացման հարցերով:

-Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ «Լոռու մարզային հոգեկայրաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում մեկ անձ իրականացնում է այլընտրանքային ծառայություն:

-2017թ. մարզում արձանագրվել են մանկական մահացության հետևյալ ցուցանիշները. 20 մեռելաձին դեպք, 0-1 տարեկան երեխայի 8 հիվանդանոցային (այդ թվում պերինատալ մահացության (0-7 օրեկան երեխայի) 6 դեպք), և 7 տնային մահ, 1-5 տարեկան երեխայի 1 հիվանդանոցային և 5 տնային մահ/ :

Լոռու մարզ	մանկական մահացություն /պրոմիլե/	պերինատալ մահացություն /պրոմիլե/
------------	---------------------------------------	--

2013թ	6.0	11.3
2014թ	3.8	9.3
2015թ	8.2	13.3
2016թ	5.8	9.2
2017թ	5.6	9.7

-2012-2017թթ. Լոռու մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշներ

Լոռու մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2012	բացարձակ թիվ	3049	2789	0.9 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	10.6	9.7	
2013	բացարձակ թիվ	2919	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.5	11.9	
2014	բացարձակ թիվ	3211	2644	2.2 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.1	9.9	
2015	բացարձակ թիվ	2931	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.1	10.5	
2016	բացարձակ թիվ	2856	2760	0.4 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.7	12.3	
2017	բացարձակ թիվ	2689	2630	0.3 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.2	11.9	

-ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2017թ. «Գանձադրյուր» առողջարան են ուղեգրվել 69, «ԱՍԱՐ» առողջարան՝ 27 քաղաքացիներ, իսկ «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 9 երեխա և 9 խնամող:

-2015-2017թթ. «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում մարզում կատարվել է գլյուկոզայի հետազոտություն 51607 մարդ /79%/, պապ-քսոք՝ 25024 մարդ /82%/:

- 2017թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և հանդիսավորությամբ նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բուժաշխատող» անվանակարգով: Մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրվել և պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ և մեկ բարեգործական կազմակերպություն՝ «Հայկական ակնաբուժական նախագիծ», բազմաթիվ բուժաշխատողներ արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի:

-2017թ ապահովվել է մարզի ՔՊ բժշկական ծառայության մասնակցությունը մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպված շտաբային ուսումնավարժություններին՝ տարածաշրջանների բժշկական ծառայության պետերի, մարզի բժշկական ծառայության ղեկավար կազմի պատրաստականությունը ստուգելու և կատարելագործելու նպատակով:

-Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթացել են սերտ համագործակցային աշխատանքներ, մասնավորապես՝

- Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և

ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան վերջացնելով Մարգահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ, Գյուլագարակ, Փամբակ, Շահումյան, Գյուլագարակ, Վարդաբլուր, Դարբաս, Կուրթան համայնքների ազգաբնակչության և Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղամասի խնամքի կենտրոնի շահառուների ստոմատոլոգիական սպասարկումը՝ սպասարկելով ընդհանուր հաշվով 2213 մարդ:

-Մարզի տարածքում գործում են բուժական տարբեր թեքումներով հետևյալ կենտրոնները՝

1. Վանաձորում «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը սպասարկում է մանկական ազգաբնակչությանը:

Ակնաբուժական ծառայություն՝ տարվա ընթացքում ընդունել է շուրջ 6000 երեխա, անվճար տրվել է ակնոցներ, իրականացվել է ապարատային բուժում, ատամնաբուժական ծառայություն՝ տարվա ընթացքում ընդունել է շուրջ 10000 երեխա:

2. Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները, /հատկացվում է անվճար դեղորայք/:


-Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է /0322/ 2-33-99 հեռախոսահամարով թեժ՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով: Թեժ գծի աշխատանքի արդյունքում նաև վեր են հանվում համակարգում առկա թերություններ, բացթողումներ: Արձանագրվել է 43 զանգ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցություն

ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. ռազմավարության մեջ համալիր կերպով ներկայացվել է սոցիալական ապահովության բնագավառը, որտեղ կարևորվում են բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը, իրազեկության բարձրացումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծումը:

Բնակչությանը սոցիալական ծառայություններ մատուցելու գործընթացը օրակարգային լինելով հանդերձ, մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները (ՍԱՏՄ-ներ) նկատելի աշխատանք են տարել անապահովության գնահատման համակարգում ընտանիքների փաստագրումը վաղօրոք կազմված ժամանակացույցով իրականացնելու ուղղությամբ: ՍԱՏՄ-ների կողմից յուրաքանչյուր ամիս թարմացվել են տեղեկատվական շտեմարանները, որը կարևոր հանգամանք է անապահով խմբերին ուղղված միջոցների հասցեականությունը առավել հստակեցման գործում: Մարզպետարանի կողմից իրականացվել են ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման հաշվետվությունների հավաքումն ու ամփոփումը, ինչպես նաև այդ տվյալների ամենամսյա վերլուծությունը:



2017թ. ընթացքում ՍԱՏՄ-ները փաստագրել են 22.838 ընտանիք (կանխատեսվել էր 23.810-ը), նրանցից նպաստի իրավունքը պահպանել են 16.816-ը, իրավունքը կորցրել՝ 3.433 ընտանիք (որոնցից՝ 256-ը փաստագրման, 1.306-ը չփաստագրման, իսկ 1.871-ը՝ ՍԱՏՄ-ների ուսումնասիրության արդյունքում): Նոր նպաստառու են դարձել 2.967 ընտանիքներ: 01.01.2018թ. դրությամբ նպաստառու են ամսական միջինացված 19.443 ընտանիք:

Մարզի ՍԱՏՄ-ները իրենց աշխատանքներն իրականացրել են պետության կողմից տրամադրված միջոցների սահմաններում: **2017թ. ընթացքում մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները տնտեսել են ավելի քան 577 մլն դրամ:**

Մարզում 2017թ. ընթացքում ՍԱՏՄ-ների կողմից վճարվել է ավելի քան 6 մլրդ 422 մլն դրամ պետական նպաստներ /ներառյալ՝ հրատապ օգնությունները/, այդ թվում՝ վճարվել է շուրջ քան 6.13 մլրդ դրամ ընտանեկան նպաստ /ներառյալ՝ սոցիալականը/ և հրատապ օգնություն՝ շուրջ 294 մլն դրամ:

Նպաստառու ընտանիքի 964 երեխայի համար վճարվել է կրկնակի չափով ծննդյան նպաստ՝ 48.2 մլն դրամ/, առաջին դասարան հաճախող 1.538 երեխայի համար վճարվել է միանվագ օգնություն՝ շուրջ 38.45 մլն դրամ, 23 ընտանիքներում մահացած անդամի համար՝ 1.15 մլն դրամ, հրատապ օգնություն է վճարվել շուրջ 206 մլն դրամ /միջին հաշվով յուրաքանչյուր ամիս 932 ընտանիքների/:

Ամբողջական վճարումների պատկերը, ըստ տարածաշրջանների.
Պետական նպաստների մասով՝

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ. /անձ /միջ. /	Գումար	Ընտ. /անձ /միջ. /	Գումար	Ընտ. /անձ /միջ. /	Գումար	Ընտ. /անձ /միջ. /	Գումար	Ընտ. /անձ /միջ. /	Գումար
Ընտանեկան նպաստ	Ցուցակա-	4501	1669.01	3511	1294.66	3959	1323.81	1195	468.29	1103	544.86

	յին										
	Վճարված	436 3	1597. 87	3416	1251.5 8	393 7	1313.6 7	1160	449.8 9	108 5	407.0 2
Սոցիալական նպաստ	Ցուցակա-յին	2231	498.97	1070	243.3 8	815	181.12	676	152.2 6	382	86.38
	Վճարված	2162	476.5 5	1034	230.7	798	175.5 6	652	144.6 3	363	81.13
Ընդամենը՝	Ցուցակա-յին	673 2	2168.0 7	458 1	1538. 1	477 5	1504. 93	1871	620.5 5	148 5	631.2 4
	Վճարված	652 5	2074.4 2	445 0	1482. 29	473 5	1489. 23	1813	594. 53	144 9	488.1 4

Հրատապ օգնությունների մասով՝

/մլն դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./անձ/միջ./	Գումար	Ընտ./անձ/միջ./	Գումար	Ընտ./անձ/միջ./	Գումար	Ընտ./անձ/միջ./	Գումար	Ընտ./անձ/միջ./	Գումար
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն /50.000դր./	Ցուցակա-յին	236	11.8	420	21.0	169	8.6	70	3.5	68	3.55
	Վճարված	236	11.8	420	21.0	169	8.6	66	3.3	67	3.5
Երեխայի առաջին դասարան հաճախման միանվագ օգնություն /25.000դր./	Ցուցակա-յին	571	14.28	393	9.83	244	6.1	171	4.28	163	4.08
	Վճարված	568	14.2	393	9.83	244	6.1	170	4.25	163	4.08
Ընտանիքի անդամի մահվան դեպքում /50.000դր./	Ցուցակա-յին	10	0.5	2	0.1	5	0.25	3	0.15	3	0.15
	Վճարված	10	0.5	2	0.1	5	0.25	3	0.15	3	0.15
Եռամսյակային հրատապ օգնություն /18.000 դր./ միջին.	Ցուցակա-յին	336	73.69	240	52.28	238	49.25	93	20.55	62	16.12
	Վճարված	328	71.33	236	51.2	219	48.5	90	19.75	59	15.2
Ընդամենը վճարված			97.83		82.12		63.4 4		27.47		22.9

2017թ. մարզում սահմանված ժամկետներում վճարվել են պետական նպաստները և հրատապ դրամական օգնությունները:

2017թ.՝ 2016թ. համեմատությամբ նվազել են նպաստառու ընտանիքների թիվը /միջինը 20.313-ից՝ 19.443. **նվազումը՝ 870/** և կատարված վճարումները /6.566 մլրդ դրամից՝ 6.422 մլրդ դրամ. **նվազումը՝ 144.1 մլն դրամ/:**

Համաձայն ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2017թ. ՀՀ Լոռու մարզում ծննդյան պետական նպաստ է տրվել 3072 երեխայի /2016թ.՝ 2964, 2015թ.՝ 3774/ համար:

Ստորև, ըստ ծնված երեխաների հերթական կարգաթվի, ներկայացվում է համառոտ տեղեկատվությունը /2015-2017թթ.՝ համեմատականով/.

Տարածա- շրջանը		Երեխա- ների թիվը	Նպաստների թվաքանակը՝ ըստ երեխայի հերթական կարգաթվի				
			Առաջին երեխա	2-րդ երեխա	3-րդ երեխա	4-րդ երեխա	5-րդ և հաջորդ երեխա
Վանաձոր	2015թ.	1.613	718	636	217	32	10
	2016թ.	1.318	573	501	199	27	18
	2017թ.	1.367	1019	107	191	35	15
Սպիտակ	2015թ.	737	342	268	114	10	3
	2016թ.	537	206	222	84	19	6
	2017թ.	564	425	30	85	16	8
Ստեփանավան	2015թ.	425	200	137	71	13	4
	2016թ.	354	150	132	61	10	1
	2017թ.	341	234	24	67	10	6
Թումանյան	2015թ.	653	274	242	116	17	4
	2016թ.	515	205	180	110	13	7
	2017թ.	521	366	42	98	13	2
Տաշիր	2015թ.	346	164	132	38	9	3
	2016թ.	240	81	99	56	3	1
	2017թ.	379	197	20	51	8	3
Ամբողջը՝	2015թ.	3.774	1.698	1.415	556	81	24
	2016թ.	2.964	1.215	1.134	510	72	33
	2017թ.	3.072	2.241	223	492	82	34

Վերլուծելով տվյալները փաստում ենք, որ տարեցտարի ավելանում են ընտանիքում 5-րդ և ավելի երեխաների ծնունդները, իսկ 2017թ. առավել գերիշխեց ընտանիքում 3-րդ երեխայի, քան 2-րդի ծնվելու իրողությունը, որն արձանագրվել է մարզի բոլոր տարածաշրջաններում,։ Դրական մեկ ցուցանիշ. 2017թ.՝ 2016թ. համեմատությամբ **1.84 տոկոսով աճել է առաջին երեխա ունեցող ընտանիքների թիվը:**

ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ստացված տվյալների /հարակից բազաներ/ համադրումները համակարգված ձևով է իրականացվում, իսկ հաշվետվային գործընթացը իրականացվում է մարզպետարանի կողմից թվային, իսկ մարզի ՍԱՏՄ-ների կողմից՝ անհատական տվյալների ներկայացմամբ և տեղեկատվական շտեմարանների փոխանակմամբ (աշխատավարձ, մաքսային, անհատ ձեռնարկատիրական, անշարժ գույքի և անձնական ավտոմեքենայի առկայություն, էլեկտրաէներգիա, մինչև 2 տարեկան երեխայի խնամք, կենսաթոշակային, հաշմանդամության և զբաղվածության տվյալներ և այլն): Նկատելի աշխատանքներ են տարվել

համադրման արդյունքում քաղաքացիներին ավելի վճարված գումարների ետգանձման ուղղությամբ:

2017թ. ընթացքում մարզի սոցիալական ծառայությունները սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից ետ են գանձել շուրջ 13.58 մլն դրամ, որից շուրջ 6.3 մլն դրամը բաժին է ընկնում Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնին:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2017թ. ընթացքում, ըստ մարզի ՍԱՏՄ-ների, ավելի վճարված նպաստների հետգանձման վերաբերյալ տեղեկատվություն, գործընթացը անընդհատ և շարունակական է՝

/մլն դրամ/

	Հետգանձման ենթակա	Փաստացի գանձվել ընթացքում /ՍԱՏՄ, դատարան/	եւ 2017թ. ԴԱՀԿ, դատարան/	Սոցիալական աջակցության խորհուրդների և դատական ատյանի կողմից մարված	Մնացորդը՝ 01.01.2018թ. դրությամբ
Վանաձորի ՍԱՏՄ	22.44	6.28		3.68	12.47
Սպիտակի ՍԱՏԳ	4.01	2.08		0	1.93
Ստեփանավանի ՍԱՏԳ	2.26	1.66		0.6	0
Թումանյանի ՍԱՏԳ	4.1	2.6		0.48	1.02
Տաշիրի ՍԱՏԳ	1.49	0.97		0	0.52
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	34.3	13.58		4.77	15.95

Շարունակվել է վերահսկվել մարզի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից քաղաքացիներին տարբեր կազմակերպություններ /այդ թվում՝ հանրապետության բժշկական հաստատություններ, կրթական, կոմունալ և այլն/ ներկայացվող տեղեկանքների տրամադրման գործընթացը:

2017թ. ընթացքում մարզի ՍԱՏԳ-ների կողմից տրամադրվել են 12.845 տեղեկանքներ /2016թ.՝ 9.110, 2015թ.՝ 8.588 տեղեկանք, /, պատկերը, ըստ տրամադրված տեղեկանքների տեսակների, հետևյալն է.

Տեղեկանքների բնույթը և տրամադրող մարմինը	Վանաձորի ՍԱՏՄ	Սպիտակի ՍԱՏԳ	Ստեփանավանի ՍԱՏԳ	Թումանյանի ՍԱՏԳ	Տաշիրի ՍԱՏԳ	Լոռու մարզ
Ա /անձնագրային ծառայություն	3.236	677	391	895	953	6.152
Բ /բժշկական ընկերություններ	1.977	706	882	511	287	4.363
Գ /գիտա - կրթական հաստատություններ	885	323	178	114	44	1.544
Դ /այլ ծառայություններ/	229	313	107	65	72	786
Ամբողջը՝	6.327	2.019	1.558	1.585	1.356	12.845

Մարզի ՍԱՏՄ-ների կողմից շարունակվել են ավանդի դիմաց տրվող փոխհատուցման գործընթացը: **2017թ. ընթացքում փոխհատուցվել է 263 անձ՝ ավելի քան 55.107 մլն դրամի չափով /2016թ. փոխհատուցվել էր 493 անձ՝ ավելի քան 105.153 մլն դրամի չափով/:**

2007-2017թթ. ընթացքում փոխհատուցվել են 15.969 քաղաքացիներ՝ ավելի քան 2 մլրդ. 803.1 մլն դրամ:


Մարզպետարանի կողմից համակարգվել են ընտանեկան նպաստի գործունեությունը կանոնակարգող անհրաժեշտ օրենսդրական և մեթոդական հրահանգների ՍԱՏԳ-ներին տրամադրման աշխատանքները:

Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի մասնագետները տարվա ընթացքում իրավական

և մասնագիտական /նախկինում՝ վարչական/ հսկողություն են իրականացրել թվով 14՝ Ստեփանավան, Ալավերդի, Թումանյան, Մարգահովիտ, Շահումյան, Շենավան, Շիրականուտ, Գոգարան, Ծաղկաբեր, Պուշկինո, Կողես, Դսեղ, Պետրովկա, Միխայլովկա համայնքներում՝ ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից առաջարկված հարցաշարի հիման վրա:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ ԱՍՀՆ-ի սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) կողմից տրամադրվել է Լոռու մարզի առ 01.01.2018թ. կենսաթոշակառուների տեղեկատվական թվային բազան:




ՀՀ Լոռու մարզում կենսաթոշակ են ստանում 49.323 մարդ, հաշմանդամություն ունեն 17.033-ը՝ որից մանկուց հաշմանդամություն ունեն 723 երեխա, ծնողազուրկ են 1.332 երեխա, որից՝ 19 երկկողմանի: Հատկանշական է, որ **յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող 3 երեխայից՝ 2-ը արական սեռի են:**

Մարզում սահմանված ժամկետներում վճարվել են 2017թ. բոլոր ամիսների կենսաթոշակները:

Աշխատաշուկա և զբաղվածություն

2017թ. Լոռու մարզում շարունակվել է ակտիվ աշխատաշուկայի ստեղծման և զբաղվածության խթանման քաղաքականությունը: Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններից ստացված տվյալների հիման վրա պատկերը հետևյալն է.

Գործազուրկների թիվը ըստ տարիների (հունվարի 1-ի դրությամբ)



Գործազուրկների թիվը կազմում է առ 01.01.2018թ. դրությամբ՝ 9065 մարդ, որից՝ 6310-ը կանայք են (Վանաձոր՝ 4139/2860-ը կին, Ալավերդի 1034/707, Ստեփանավան՝ 2258/1651, Սպիտակ՝ 1317/846, Տաշիր՝ 317/2246): Քանի որ պետական ծրագրերը ավելի պահանջարկված ու նպատակամետ են, այդ պատճառով էլ նկատելիորեն բարձրացել է գործազուրկների ակտիվությունը տվյալ ծրագրերում ընդգրկվելու նախաձեռնողականությունը:

Աշխատանք փնտրողների թիվը 01.01.2018թ. կազմել է 9526 մարդ, նախորդ ժամանակահատվածում՝ 11017 մարդ /Վանաձոր՝ 4283, Ալավերդի՝ 1178, Սպիտակ՝ 1399, Ստեփանավան՝ 2308, Տաշիր՝ 358/: Նրանցից աշխատանքի է տեղավորվել 969 մարդ, որից՝ 657 կին (Վանաձոր՝ 456 /որից՝ 321՝ կին/, Ալավերդի՝ 111 /որից՝ 70 կին/, Ստեփանավան՝ 244 /որից՝ 156 կին/, Սպիտակ 119 /որից՝ 85 կին/, Տաշիր՝ 39 /որից՝ 25 կին/):

Զբաղվածության ամենամյա ծրագրերով աշխատանքի է ընդունվել 212 մարդ /Վանաձոր՝ 100, Ալավերդի՝ 24, Սպիտակ՝ 37, Ստեփանավան՝ 36, Տաշիր՝ 15/:

2017թ. մարզում վարձատրվող հասարակական աշխատանքներ և գյուղական բնակավայրերի բնակչության շրջանում՝ աշխատաշուկայում աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց ներգրավմամբ սեզոնային զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր չեն իրականացվել:

2017թ. ընթացքում երկու ծրագրային ուղղություններով «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում» և «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում» Լոռու մարզի զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից աշխատաշուկայում անմրցունակ շահառուների հետ իրականացվել են 215 ծրագրեր, այդ թվում՝ գործատուին միանվագ փոխհատուցման ծրագրով 147 և մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում ծրագրով 67: Սա ամենաբարձր ցուցանիշն է հանրապետության մարզերի ցուցանիշների մեջ /Լոռի՝ 215, Տավուշ՝ 194, Կոտայք՝ 170, Շիրակ՝ 140, Գեղարքունիք՝ 124/:

Զբաղվածության պետական գործակալության կողմից Վանաձորում 12.10.2017թ. անցկացվեց «Աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցություն ունեցան 28 գործատուներ, փաստվեց 301 թափուր աշխատատեղերի պահանջարկը, մասնակցեցին 2200 աշխատանք փնտրողներ, նրանցից աշխատանքի են տեղավորվել 37-ը:

Աշխատատեղերի պահանջարկը հիմնականում սպասարկման բնագավառից են /մատուցող, խոհարար, բարմեն, վարորդ, մեքենաների տեխսպասարկման մասնագետ, կաթի վերամշակման բնագավառի մասնագետ՝ պանրագործ, բժիշկ, գյուղական համայնքներում՝ մանկավարժ և այլն:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ համայնքների հետ համագործակցային եռամյա՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո

Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ում և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունում աշխատում են 14-ական հաշմանդամություն ունեցող անձինք: Վանաձորում գործող «Էբրիկոտ» ընկերությունում աշխատում են 15 հաշմանդամություն ունեցող անձ /որից՝ հուշանվերների արտադրությունում՝ 10, իսկ արծաթյա զարդերի արտադրությունում՝ 5/:

Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների

Մարզի բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից 2017թ. հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել են 10.067 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր), որից՝

Ըստ տարածաշրջանների և բնութագրիչների	Վերականգնողական անհատական ծրագրեր			
	Ամբողջը, որից՝	մասնագիտական	բժշկական	սոցիալական
Վանաձոր և Գուգարքի տարածաշրջան	5637	1676	1983	1978
Սպիտակ և Սպիտակի տարածաշրջան	1331	1300	25	6
Ստեփանավան և Ստեփանավանի տարածաշրջան	547	515	20	12
Ալավերդի և Թումանյանի տարածաշրջան	2169	676	749	744
Տաշիր և Տաշիրի տարածաշրջան	383	143	121	119
Ամբողջը՝	10.067	4.310	2.898	2.859

2017 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզի հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց տրամադրված պրոթեզաօրթպեդիկ և վերականգնողական պարագաների բաշխումը իրականացվել է ՀՀ ԱՍՀՆ-ի հետ համագործակցված:

Պատկերը հետևյալն է.

	Վանաձոր և Գուգարքի տ/շ	Սպիտակի տ/շ	Ստեփանավանի տ/շ	Թումանյանի տ/շ	Տաշիրի տ/շ	ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Պարագայի տեսակը	Պարագայի քանակը					
Հաշմանդամի սայլակի ձեռքբերման պետական հավաստագիր	13	3	1	4	1	22
Լսողական սարքի ձեռքբերման պետական հավաստագիր	27	6	4	0	1	38
Լսողական սարքի ներդիր	20	6	4	6	8	44
Հենակներ	38	16	11	16	0	81
Քայլակ	6	1	2	2	0	11
Ձեռնափայտ	11	3	4	5	1	24
Կոշիկներ	120	19	26	12	8	185
Կրծքագեղձի պրոթեզ	16	3	2	8	0	29
Ակնագնդի պրոթեզ	7	2	1	2	0	12
Ձայնաստեղծ սարք և ձայնաստեղծ պրոթեզ	1	3	2	2	0	8

Ստորին վերջույթի պրոթեզներ, մոդուլյար բուժամարզական պրոթեզներ	38	18	9	18	4	87
Վերին վերջույթների պրոթեզներ	7	1	0	0	0	8
Օրթեզներ	10	1	0	8	0	19
Սեղմիրան/Կորսեթ	4	3	2	3	0	12
Բանդաժներ/աղեկապ/	2	0	1	0	0	3
Սուպինատոր	1	0	1	1	0	3
Ամբողջը՝	321	85	70	87	23	586

Հաշմանդամություն ունեցող անձանց համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: Մարզպետարանը սերտ համագործակցային աշխատանք է իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, գործընթացում ներգրավելով մարզի ակտիվ կառույցներին, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնողական պարագաներով ապահովելու ուղղությամբ առանձնանում են «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, «Լիարժեք կյանք», «Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ները՝ աջակցություն ստանալով երևանյան «Սատար» հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ից /վերջինս զբաղվում է նաև հաշմանդամային գույքի արտադրությամբ/:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ աշխատանքները դեռևս բավարար չեն /մասնավորապես՝ թեքահարթակների կառուցման/ աշխատանքները, թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, սակայն պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն, շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումը դեռևս հիմնախնդիր է մնում:

Մարզի համայնքապետարաններում և վարչական ղեկավարների նստավայրերում /թվով 113/ առկա են թեքահարթակներ 35-ում, 36-ը մատչելի է շինարարական տեսակետից անվասայլակ օգտագործող մարդկանց համար, իսկ 42-ում խնդիրն առկա է:

Մարզի 163 կրթական հաստատություններից 104-ում առկա է թեքահարթակ, շինարարական տեսակետից մատչելի են 33-ը, իսկ 26 դպրոցում դեռևս թեքահարթակ չկա:

Մարզի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող 31 առողջապահական ընկերություններից 28-ում առկա են թեքահարթակներ, շինարարական տեսակետից մատչելի են 3-ը: Նույն ընկերությունների կազմում գործող շուրջ 90 բուժակ-մանկաբարձական կետերից 12-ում կառուցված են թեքահարթակներ, իսկ մնացածը կարելի է մատչելի համարել, քանի որ տեղակայված են հիմնականում միահարկ շինություններում:

Շուտով շահագործման կհանձնվի Վանաձորի բժշկական կենտրոնը, որտեղ պահպանված են հաշմանդամություն ունեցող անձանց համար իրավական ակտերով սահմանված շինությունների մատչելիության պայմանները:

Դեբետ համայնքում կառուցվում է «Սմարթ» կենտրոնը, որն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման միջազգային չափանիշներով սահմանված անհրաժեշտ պայմաններով:

Մարզպետարանի պատվիրատվությամբ նախագծվող և կառուցվող բոլոր շինություններում նույնպես հատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պահպանմանը, մասնավորապես՝ 2017թ. Վանաձորի թիվ 27 դպրոցը և Օձուն համայնքի Հազվի բնակավայրի հանդիսությունների սրահը կահավորվել է թեքահարթակով, իսկ Վանաձորի թիվ 16 դպրոցում վերակառուցվել է սանհանգույցը:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը 2017թ. հրավիրել է 6 նիստ /որից՝ 2-ը արտագնա/ օրակարգային 36 հարցերով: Հանձնաժողովի

նիստերը եղել են ընդլայնված, դռնբաց և լուսաբանվել են ՁԼՄ-ներով /մամուլ, հեռուստատալնկերություն/, իսկ Լոռու մարզային հանձնաժողովի գործունեության մասին առկա բոլոր տվյալները տեղակայվել են մարզպետարանի կայք-էջում՝ առանձնացված ըստ նիստերի հերթականության և արձանագրությունների: Հանձնաժողովի նիստերին օրակարգային են եղել ՀՀ ԱՍՀ նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության և Վանաձորի բաղվածության կենտրոնի մասնագետների թեմատիկ զեկուցումները, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ նոր օրենքի, ՀՀ-ում Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման կիրառության, Հաշմանդամություն ունեցող 2- 18 տարեկան երեխաների կենսագործունեության մասնակցության և միջավայրային գործոնների գնահատման մեթոդական մոտեցումների մասին հանրային հետաքրքրություն ունեցող հարցերը և այլն:

Հանձնաժողովը 2017թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը հայտարարվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնահարցերի լուծմանը նվիրված միամյակ /իրազեկումը կատարվել է նշված լրատվամիջոցներով/: Համառոտագրությունը ներկայացվել է տարեվերջյան նիստում:

Մարզպետարանը սերտ համագործակցության մեջ է մարզում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների /նրանց մասնաճյուղերի/ հետ, նրանցից մեծ մասը ընդգրկված են մարզպետարանում գործող տարբեր հանձնաժողովներում կամ տարածաշրջանային համակարգող խորհուրդներում: Մասնավորապես՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ, «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ, «Երիտասարդական ալիք» ՀԿ, «Սպիտակ բազե» ՀԿ, «Լուսաստղ» ԲՀԿ, «Մանկական կենտրոն» ԲՀԿ, «Մոլորակ» ԲՀԿ, «Ունիտոն» ՀԿ, «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ, «Ապագա Սպիտակ» տարածքային զարգացման ՀԿ, «ՀՀ պատերազմի, զինված ուժերի, աշխատանքի վետերանների խորհուրդ» ՀԿ, «Ստեփանավանն է խոսում» ԲՀԿ, «Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն» ՀԿ, «Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» համայնքային ՀԿ, «Համայնքային իրավաբանների միավորում» ՀԿ, Գործատուների տարածքային միություն, Երիտասարդ տնտեսագետների ասոցիացիա և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Սպիտակ բազե» ՀԿ-ն իր աշխատանքները կազմակերպում է մարզպետարանի աջակցությամբ «Սպիտակի բժշկական կենտրոնի» մասնաշենքերից մեկում տրամադրված տարածքում:

Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկությոնը ներկայացված է ստորև:

ա/ Տեղեկատվություն մարզում գործող ցերեկային կենտրոնների վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան /	Ֆինանսավորման աղբյուրը
1	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	124	պետբյուջե
2		Սպիտակ, Չարեցի 10	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	100	պետբյուջե
3		Ալավերդի, Սանահիտ Սարահարթ թաղամաս 19ա	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	120	պետբյուջե
4		Տաշիր,	Տարեց, նաև հաշմանդամ	52	պետբյուջե

		Խանջյան 3	անձանց զբաղվածություն		
5	«Լիարժեք կյանք» ՀԿ	Ստեփանավան, Նժդեհի 17/23ա	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	40՝ մշտակա ն հաճախ- մամբ	պետբյուջե
6		Տաշիր, Գագարինի 7	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	20՝ մշտակա ն հաճախ- մամբ	պետբյուջե
7	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Տաշիր	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	60	դոնոր կազ- մակերպու թյան միջոց- ներով

բ/ Տեղեկատվություն մարզում գործող տնային պայմաններում միայնակ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառու- ների թիվը /տարեկան /	Ֆինանսավո- րման աղբյուրը
1	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	70	պետբյուջե
2		Ալավերդի, Սանահին- Սարահարթ թաղամաս 19ա	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	15	պետբյուջե
3	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	80	դոնոր կազ- մակերպու թյան միջոց- ներով
4	Հայկական Կարմիր Իսաչի Լոռու մարզային մասնաճյուղ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք /ծրագիրը շարունակական է, շահառուների թվի մեծացման միտումով/	30	Շվեյցարակա ն և Հայկա- կան կարմիր խաչի աջակ- ցությամբ

գ/ Տեղեկատվություն մարզում գործող հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունների վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավո- րման աղբյուրը
--	-----------	--------------------------------	--	----------------------------------	--------------------------------

1.	Վանաձորի տարեցների տուն	Վանաձոր, Մայմեխի խճ. 8	Միայնակ, անապահով խնամք	սոցիալապես տարեցների	50-55 /միջինը/	ՀՕՖ ֆինանսավորում և պետական աջակցություն
2.	Կյանքի հաց ՀԿ-ի «Հույսի տուն» հանգստավայր	Վանաձոր, Արեղյան	անօթևան, /անխնամ/ և անկողնային խնամքի կարիք ունեցող տարեցների /ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց/ ծառայություն	անժառանգ և անկողնային ունեցող	30-50 /միջինը/	մասնավոր կառույց է

Ընդգրկվում աշխատանքներ են իրականացնում մարզում գործող տեղական ՀԿ-ները /ներկայացվում է համառոտագիրը/:

«Լիարժեք կյանք» ՀԿ-ն առանձնանում է իր բազմակի ծրագրերով, շարունակել է գործել ՀԿ-ի Հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների համայնքային կենտրոնը, որտեղ սպասարկվում են Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների ավելի քան 60 շահառուներ, ինչպես նաև 160 ռիսկի գոտում գտնվող երեխաներ ու պատանիներ /առողջ ապրելակերպի, առաջին օգնության, իրավունքի, երթևեկության կանոնների դասընթացներ, արտթերապիա, մասնավորապես՝ կավագործության, երաժշտաթատերական մանրապատումների և այլ ուսուցողական հմտությունների ձեռքբերում և այլն/:

Ավելի քան 10 տարի է, ինչ ՀԿ-ն կազմակերպում է «Ամառային ներառական ճամբար», որտեղ 2017թ. իրենց հանգիստը անցկացրեցին 156 երեխա, որոնցից 50%-ը ունեն հաշմանդամություն: Ծամբարն այս տարի գործեց Հայաստանում ԱՄՆ և Լիտվայի դեսպանատների և Զինիշյան հիշատակի հիմնադրամի աջակցությամբ:

Ստեփանավանում գործում է «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Անկախ կյանքի կենտրոնը, որտեղ 2017թ. աջակցություն է ստացել 4 շահառու:

- «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ն այս տարի «Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման և երկխոսության կենտրոնի» աջակցությամբ (ԵՄ-ի ֆինանսավորմամբ) իրականացրեց «Հայկական գույներ» ծրագիրը, որի շրջանակներում Վանաձորում 2017թ. ապրիլին հիմնադրվեց կարի սոցիալական ձեռնարկություն, որտեղ թվով 4 (3 աղջիկ, 1 տղա, նրանցից՝ 2 հաշմանդամ) ձեռք բերելով կարողի հմտություններ կազմակերպությունում անցել են աշխատանքի: Նրանք զբաղված են հայկական ավանդական տիկնիկների, գոգնոցների, դեկորատիվ բարձերի, սրբիչների և անկողնային պարագաների արտադրությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու համար 2017թ. «Զբաղվածության (այդ թվում՝ անհատ ձեռներեցության, ձեռնարկատիրական գործունեություն) բնագավառում հավասար հնարավորությունների ստեղծման գործում ներդրած ջանքերի համար» անվանակարգում պարգևատրվեց «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հասարակական կազմակերպության նախագահ Անուշ Ասլանյանը:

- «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ժակլին Հեքիմյանը 2017թ. ևս շարունակեց իր համագործակցային և բարեգործական գործունեությունը:

- «Իսուկերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել է մի շարք մարզամշակութային միջոցառումներ և էքսկուրսիաներ: ՀԿ-ն ակտիվ է եղել հատկապես մարզական միջոցառումների ժամանակ:

• Վանաձորի «Մանկական կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ իրականացվում են տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ ամեն տարի իրականացվում է Լոռու մարզի ողնաշարի խնդիրներ ունեցող շուրջ 100 հաշմանդամ երեխաների բուժզննումը /շահառուներ են ընդգրկվում նաև Շիրակի մարզից/ Գերմանիայից ժամանած բժիշկների կողմից:

• «Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ներն իրականացնում է մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ վերականգնողական տարբեր պարագաների բաշխում /անվասայլակ, քայլակ, հենակ, ձեռնափայտ և այլն/, «Իսաչվող ուղիներ» ՀԿ-ն՝ հաշմանդամ երեխաների շրջանում իրականացնում է «Արթերապիա» ծրագիրը, «Մոլորակ» մշակութային լրատվական ԲՀԿ-ն կազմակերպում է հաշմանդամ երեխաների մասնակցությունը տարբեր միջոցառումներին, «Ինֆորմացիոն կենտրոն» ՀԿ-ն հաշմանդամների ուսուցանում է համակարգչային դասընթացներ և այլն:

ՀՀ Լոռու մարզի հաշմանդամություն ունեցող մարզիկները 2017թ. արձանագրել են մի շարք հաջողություններ, մասնավորապես՝

✓ Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի հանրապետական եզրափակիչ փուլին՝ ՀՀ Լոռու մարզը գրավեց պատվավոր առաջին տեղը /թիմի ավագ՝ Ռուբեն Մխիթարյան/՝ կրկնելով նախորդ տարվա հաջողությունը: Անհատական ցուցանիշներով հաղթողներ դարձան Անուշ Ասլանյանը /շաշկի/, Հարություն Մխիթարյանը /մինչև 70 կգ, բազկամարտ/ և Ռոնիկ Ղալայանը /70կգ-ից բարձր, բազկամարտ/, 2-րդ տեղ գրավեց Սարգիս Սարգսյանը /շախմատ/: Հաջող հանդես եկան նաև «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ի անդամներ Երրորդ մրցանակակիրներ Սենիկ Սերոբյանը /եռամարտ/ և Աննա Մարգարյանը /եռացատկ/:

✓ Խուլերի աշխարհի կրկնակի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ Սենիկ Սերոբյանը /Վանաձոր, ըմբշամարտ, 61 կգ/ դարձավ ՀՀ չեմպիոն, իսկ Սուրդյիմպիական խաղերում գրավեց 5-րդ տեղը, իսկ Մոսկվայում անցկացված միջազգային մրցաշարում նվաճեց բրոնզե մեդալ:

✓ Սուրդյիմպիական խաղերում /Սամսուն, Թուրքիա/ աշխարհի փոխչեմպիոն, Եվրոպայի 2015թ. չեմպիոն Ռոբերտ Գևորգյանը /ծյուղո, 66կգ/ դարձավ փոխչեմպիոն:

✓ Սուրդյիմպիական խաղերում /Սամսուն, Թուրքիա/ 2017թ. Գագիկ Սերոբյանը /ըմբշամարտ, 80 կգ/ գրավեց 5-րդ տեղը:

✓ Խուլերի շախմատի ՀՀ չեմպիոն դարձավ Սարգիս Աթաբեկյանը՝ կրկնելով նախորդ տարիների հաջողությունը:

✓ Խուլերի ֆուտզալի «Լոռի» թիմը դարձավ ՀՀ փոխչեմպիոն:

✓ ՀՀ Նախագահի մրցանակի համար հաշմանդամություն ունեցող անձանց «Լավագույն մարզական ընտանիք-2017» մրցաշարի հանրապետական եզրափակիչ փուլում ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքից առաջին խմբի հաշմանդամ Ստասիկ Նազարյանի ընտանիքը գրավեց առաջին տեղը՝ կրկնելով իր նախորդ տարիների ցուցանիշը:

✓ Կազմակերպվել են «Տարեցների մարզական խաղեր» մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը: Լոռու մարզային թիմը գրավեց 2-րդ տեղը:

✓ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի թիմն 2017թ. հոկտեմբերին Ստեփանակերտում կայացած Արցախի Բոչիայի բաց առաջնությանը գրավեց երկրորդ տեղը:

✓ Ծանրակշիռ հաջողություններ են արձանագրել վանաձորցի անվասայլակով տեղաշարժվող Հարություն Մխիթարյանը, Լոռու մարզի կույրերի կազմակերպության անդամ Համլետ Մեջլումյանը և այլք, ովքեր 2017թ. ևս արձանագրեցին մարզական հաջողություններ:

✓ Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կազմակերպվել է «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթ ստուգատեսը:

✓ Ամռանը կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի Լոռու մարզային փուլը/հաշմանդամ երեխաների մասնակցությամբ/:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել նաև տարեց անապահով քաղաքացիների հիմնահարցերը: Լոռու մարզի բնակչության /221.100/ շուրջ 14%-ը /շուրջ 31.000 մարդ/ 63

տարեկանից բարձր են, որից՝ ծերության սոցիալական կենսաթոշակ են ստանում շուրջ 2%-ը, իսկ աշխատանքային կենսաթոշակառուների գերակշիռ մասը կանայք են: Տարեցները հիմնականում ունեն գրեթե նույն հիմնախնդիրները, ինչ հաշմանդամություն ունեցող անձինք:

Մարզի պետական խնամակալական հաստատություններում և բարեգործական կազմակերպությունների /Հայկական Կարմիր Խաչի հայկական ընկերություն, «Առաքելություն Հայաստան», «Հայկական Կարիտաս»/ ծրագրերում ընդգրկված բնակվող տարեցներին տարվա ընթացքում բազմաթիվ այցելություններ են կատարվում:

Ավանդույթի համաձայն Լոռու մարզպետը միշտ աջակից է Տարեցների օրվա միջոցառումների կազմակերպման գործում: Այս տարի Վանաձորի տարեցների տանը և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի Վանաձորի համայնքային կենտրոնին տոնական միջոցառումների և խնջույքի կազմակերպման համար հատկացվեց հատկացրեց համապատասխանաբար 100.000 և 50.000 դրամ: Իսկ Ամանորի կապակցությամբ 100.000 դրամ հատկացվեց նաև Երկրապահ կամավորականների մարզային կազմակերպությանը:

Վանաձորի տարեցների տուն այցելեցին Լոռու մարզպետի տեղակալ Տիգրան Բադոյանը, սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Զաղինյանը, իսկ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի Վանաձորի համայնքային կենտրոն՝ մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի աշխատողները, այլ պաշտոնատար անձինք, ովքեր շնորհավորեցին տարեցներին, զրուցեցին նրանց հետ: «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի Վանաձորի համայնքային կենտրոնը իր շահառուներին նվիրեց տաք գուլպաներ:

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագիրն իրականացնողները ավանդական «Պարզևիր Ժպիտ» ակցիայի շրջանակներում հոկտեմբեր ամսվա ընթացքում տարբեր միջոցառումներ նվիրեցին տարեցներին:

Ինչպես ամեն տարի այս տարի ևս շահառուների համար կազմակերպվեցին տոնական միջոցառումներ, որոնց ակտիվ մասնակցեցին նաև շահառուները՝ իրենց երգ ու պարով, ասմունքով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված 100 և ավելի տարեկան թվով 7 երկարակյաց բնակիչներին համայնքների ղեկավարների կողմից կատարվել են այցելություններ, հանձնվել նվերներ:

Հոկտեմբերին մարզի մի շարք համայնքներում անցկացվել են Տարեցների մեծարման միջոցառումներ: Այցելությունները և տոնական միջոցառումները լուսաբանվել են մարզի ԶԼՄ-ների կողմից:

Մարզի ՍՍՏՄ-ների կողմից 2017թ. ընթացքում 10 անձանց համար կազմվել են փաստաթղթային փաթեթ՝ ծերանոցներում տեղավորելու խնդրով /նախորդ տարի՝ 17/:

Փախստականների և միգրացիայի հիմնահարցեր

01.01.2018թ. դրությամբ մարզում փաստացի բնակվում են ավելի քան 7500 փախստական, որից քաղաքացիություն են ստացել շուրջ 6000 անձ: Աշխատունակ են՝ 3.465 մարդ (46.2%), նախկին քաղաքաբնակներ՝ 6.750 մարդ (90%):

1999-2005թթ. բնակարանային խնդիր է լուծվել փախստականների 292 ընտանիքների համար /Փախստականների նորվեգական խորհրդի, ՄԱԿ-ի և ՀՀ պետությունների միջոցներով (20՝ Արջուտում, 16՝ Տաշիրում, 54՝ Վանաձորում, 52՝ Սպիտակում, 56՝ Ստեփանավանում, 58՝ Նոր Խաչակապ, Ղուրսայի, Զրաշեն, Սարամեջ համայնքներում):

Դեռևս բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը մարզում կազմում է 195:

2006-2017թթ. Լոռու մարզում փախստական ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր չի իրականացվել:

Չոհված և հաշմանդամ զինծառայողների հիմնահարցեր

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման պահանջներով է ընթանում զոհված (մահացած) և հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աշխատանքները:

Ներկայումս ՀՀ Լոռու մարզում բնակարանի կարիքավոր են 59 (9 զոհվածի և 50 զին-հաշմանդամություն ունեցողի) ընտանիքներ /անօթևան են 31-ը/: Նախորդած տարիներին Լոռու

մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի 242 ընտանիքներ:

2017թ. ՀՀ ՊՆ բնակապահովման ծրագրի միջոցով իրենց բնակարանային պայմանները բարելավվեցին 15 զոհված զինծառայողի և առաջին խմբի 3 զինհաշմանդամների ընտանիքներ: ՀՀ Լոռու մարզպետարանը ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ կատարված փաստաթղթային ուսումնասիրման հիմքով ցուցակներից հանվել են 10 ընտանիքներ /որից՝ 1 զոհվածի/:

29.06.2017թ. Վանաձորում նշվել է անհայտ կորած զինծառայողների հիշատակի օրը թվով 16 անհայտ կորած զինծառայողների ընտանիքների մարզպետի կողմից տրամադրվել է 20.000-ական դրամ, ամբողջը՝ 320.000 դրամ:

Սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ Լոռու մարզպետի շնորհակալագրերով են պարգևատրվել սոցիալական աջակցության, կենսաթոշակային ապահովության, զբաղվածության տարածքային մարմինների մասնագետներ, մի շարք միջազգային և տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ, իսկ հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին և անհատներին պարգևներ են տրվել ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված անվանակարգերի:

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է թեժ գիծ՝ 0322 2-33-99 հեռախոսահամարով /առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով/, իսկ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ամեն ինչ մեզ համար, մեզ հետ» ծրագրի շրջանակներում գործում է 080001311 անվճար թեժ գիծը: Հեռաձայնողների հարցերն առնչվում են առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում խախտված իրավունքներին, որոնց անմիջապես անդրադարձ է եղել: «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և գործընկեր կազմակերպությունների գրասենյակներում իրավաբանի կողմից մատուցվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2017թ-ին 14 երեխա տեղավորվել է մանկատուն որից Մանկատանից դուրս է գրվել 2 երեխա, որոց 1-ը վերադարձել է կենսաբանական ընտանիք, 1-ը հանձնվել է խնամատար ընտանիք:

01.01.2018թ. դրությամբ մանկատանը բնակվում է 61 երեխա :

Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն է **ընդունվել 3 երեխա :**

Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունից **դուրս են գրվել 54 երեխա,**

08.01.2018թ. դրությամբ խնամքի կենտրոնում ունենք 56 երեխա:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԳ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում 54 երեխա:

Ներառական կրթություն կազմակերպում մարզի դպրոցներում, կրթության առանձնահատուկ պայմանների վկայագրում

Ընդհանուր ներառական դպրոցներում – 696 երեխա

Տնային ուսուցում կազմակերպվում է 25 երեխայի հետ

2017 թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ մարզում ունեցել ենք 721 վկայագրված առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա

ԱՇԽԱՏԱՆՔ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

Մարզի խնամատար ընտանիքներում ներկայումս խնամվում են 4 երեխաներ, որոնցից 3-ը Վանաձորում, 1-ը Մարգահովիտ համայնքում:

Երեխաներից 2-ը քույրեր են և նույն խնամատար ընտանիքում են

ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Մարզում գործող ցերեկային կենտրոնների հետ բաժինը սերտորեն համագործակցում է, ունենում ենք դեպքերի համատեղ քննարկումներ, դժվար իրավիճակում հայտնված և կենտրոնների ռեսուրսներից լայն միջամտության անհրաժեշտության դեպքում աջակցություն, ուղղորդում, այլ կառույցների ու կազմակերպությունների ներգրավում:

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Վանաձորում կազմակերպվել են 2-օրյա իրազեկման հանդիպումներ գյուղական համայնքների 23 կին ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում բարձրացել է տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մոտ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության վերաբերյալ իրազեկման մակարդակը, ինչպես նաև նրանց գենդերային զգայնությունը: Ներկայումս մարզում ունենք ավագանու 12 կին անդամներ:

**ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ**

Արտաքին կապերի և միջազգային համագործակցության շրջանակներում 2017թ. մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում: Այսպիսով, արդյունավետ համագործակցություն է իրականացվել բազմաթիվ միջազգային կառույցների հետ:

Հայ-Ֆրանսիական համագործակցության շրջանակներում ՀՀ Լոռու մարզ - Ֆրանսիայի ՊԱԿԱ /Պրովանս-Ալպեր-Լազուրի Ալ/ ռեգիոն.: 2017թ. հունիսի 27-29 և դեկտեմբերի 4-8-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էին Ֆրանսիայի Սեն-Ժերմեն-ան-Լեյ հնագիտության ազգային թանգարանի գլխավոր ֆոնդապահ, Ժակ դը Մորգանի միակ մասնագետ Քրիստին Լորը և Օտ Տեղ դը Պրովանս կազմակերպության զբոսաշրջության փորձագետ Դանիել Գերասիմենկոն: Այցերի նպատակը Ախթալայում Ժակ դը Մորգանին նվիրված թանգարանի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելն էր: Այցերի ընթացքում արդյունավետ հանդիպումներ են կազմակերպվել մարզպետի և մարզպետարանի ներկայացուցիչների, ՀՀ պատմության թանգարանի տնօրենի, մշակույթի փոխնախարարի, Ախթալայի քաղաքապետի, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանի, Գուգարաց թեմի առաջնորդի, ճարտարապետի ու շին.մասնագետների հետ:

Պրովանս Ալպ կոտ դ'Ալպյուր ռեգիոնալ խորհրդի նախագահ պարոն Ռենո Մուզելիեի հրավերով եռօրյա այցով նոյեմբերի 20-ին Ֆրանսիայի Հանրապետություն է մեկնել Լոռու պատվիրակությունը Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի գլխավորությամբ: Այցի նպատակը «Միջերկրականի ապագան» խորագրով Միջերկրական երկրների տարածաշրջանային ֆորումին մասնակցությունն էր: Ռեգիոնալ խորհրդում տեղի է ունեցել Լոռու մարզպետի և Ռենո Մուզելիեի հանդիպումը՝ քույր մարզեր հանդիսացող Լոռու մարզի և Պրովանս Ալպ կոտ դ'Ալպյուր ռեգիոնի միջև 2008թ. կնքված շրջանակային պայմանագրում ամրագրված մի շարք համագործակցության ուղղությունների քննարկման նպատակով:

Փոխհամագործակցության նոր հեռանկարներով **դեկտեմբերի 6-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Նորին Գերազանցություն պարոն Զոնաթան Լաքոտը**: Ներկայացնելով Լոռի կատարած այցի նպատակը, նշել է, որ դեռևս Մարսել քաղաքում բավականին տեղեկացվել էր ֆրանսիական ՊԱԿԱ ռեզիդենտի հետ Լոռու մարզի վաղեմի բարեկամության և համագործակցության մասին և ՀՀ-ում դիվանագիտական աշխատանքի անցնելուց հետո որոշել էր առաջին այցը կատարել հենց Լոռու մարզ, մանավանդ, որ այդ պահին մարզում աշխատում էր ՊԱԿԱ ռեզիդենտի ժամանած աշխատանքային խումբը, որն զբաղված էր Ախթալայի վանական համալիրի տարածքում գտնվող միանավ եկեղեցին որպես Մորգանի թանգարան վերակազմակերպելու աշխատանքով: Հանդիպման ընթացքում դեսպանն իր պատրաստակամությունը հայտնեց այսուհետև անձնական մասնակցություն և օժանդակություն ցուցաբերել հատկապես Լոռու մարզում հայ-ֆրանսիական բարեկամությունն ու համակողմանի փոխհամագործակցությունը էլ ավելի զարգացնելու գործընթացին:

Հուլիսի 11-15-ը «Էկորիս Նիդերլանդ Բի Վի» ընկերության կողմից կազմակերպված ճանաչողական այցի շրջանակներում Նիդերլանդներ էր մեկնել Հայաստանի պատվիրակությունը՝ ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էր նաև Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանը: «Էկորիս Նիդերլանդ Բի Վի» աջակցությամբ իրականացվող այցի ընթացքում Հայաստանի պատվիրակությանը ներկայացվեց Նիդերլանդներում տարածքային զարգացումը, մասնավորապես՝ գյուղատնտեսության, ՓՄՁ զարգացման և տուրիզմի փորձը: Տարածքային զարգացման քաղաքականության պլանավորման, տարածաշրջանային մակարդակում նորարարության (էներգախնայողություն, խելացի զարգացում), տեղական կառավարման համակարգի վերաբերյալ թեմաների շուրջ քննարկումներից բացի հայաստանյան պատվիրակությունը եղավ Ռոտտերդամ, Հաագա, Ուտրեխտ, Վազենինգեն քաղաքներում և տեղում ծանոթացավ նիդերլանդական նորարարական պրակտիկային:

Օգոստոսի 15-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր Հայաստանի Հանրապետությունում ՌԴ նորանշանակ գլխավոր հյուպատոս Ալեքսանդր Անատոլևիչ Կոպինը: Մարզպետ Ա. Նալբանդյանը տեղեկատվություն տվեց Լոռու մարզի վարչակառուցվածքային պատկերի, տնտեսական, սոցիալական, մշակութային առանձնահատկությունների, զարգացման գերակա ուղղությունների վերաբերյալ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մարզի ձեռքբերումները, հատկապես կրթական համակարգում «Սմարթ» համակարգի նշանակալի ներդրումներն ու հեռանկարային ծրագրերը:

Բաթումում ՀՀ գլխավոր հյուպատոսության աջակցությամբ սեպտեմբերի 3-ից 4-ը կայացել է ՀՀ Լոռու մարզի պատվիրակության պաշտոնական այցը Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետություն՝ մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ: Այցն իրականացվել է Լոռու մարզի և Աջարիայի ԻՀ միջև համագործակցության մասին 2014թ. ստորագրված պայմանագրի դրույթների հիման վրա: Պատվիրակությունը հանդիպել է Աջարիայի ԻՀ կառավարության նախագահ Զուրաբ Պատարաձեի, Գերագույն խորհրդի /խորհրդարան/ նախագահ Դավիթ Գաբաիձեի և այլոց հետ: Երկու կողմերը կարևորել են հայ-վրացական համագործակցության շրջանակներում տնտեսական, մշակութային, զբոսաշրջության, երիտասարդական շփումների ոլորտներում ապակենտրոնացված կապերի ամրապնդմանն ուղղված քայլերի և միջոցառումների նախաձեռնումը:

Ռումինիայի Հարգիտա նահանգի նահանգային խորհրդի նախագահի և Գեորգեն քաղաքի քաղաքագլխի հրավերով սեպտեմբերի 8-12-ը հնգօրյա պաշտոնական այցով Հարգիտա նահանգ է մեկնել Լոռու մարզի պատվիրակությունը մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ: Ռումինիա կատարած այցելության գլխավոր նպատակը տնտեսական համագործակցության հնարավորությունների ընձեռումն է: Այդ նպատակով Լոռու պատվիրակությունը այցելել է նահանգի մի շարք արտադրական ձեռնարկություններ, մոտիկից ծանոթացել արդյունաբերական կարողություններին, եղել տարբեր արտադրական ձեռնարկություններում, ապա հնարավոր փոխհամագործակցության հարցեր քննարկել տեղի

գործարարների ու արդյունաբերողների հետ: Լոռու մարզի և Հարգիտա նահանգի կողմից երկկողմ բազմակողմանի համագործակցության վերաբերյալ համաձայնագիր է ստորագրվել Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանի և Հարգիտա նահանգի նախագահ Բորբուլի Չաբայի կողմից: Համաձայնագիրը մասնավորապես առնչվում է կողմերի միջև տնտեսական համագործակցությանը:

Սեպտեմբերի 4-5-ին հերթական ճանաչողական այցելությամբ Վանաձորում էր Փասադենայի պատվիրակությունը քաղաքապետ Թերի Թորների գլխավորությամբ: Սեպտեմբերի 5-ին մարզպետարանի մի խումբ պաշտոնատար անձանց հետ ամերիկացի գործընկերներին ընդունեց Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը: Մարզի ղեկավարն ու Փասադենայի քաղաքագլուխը խոսեցին իրենց տարածաշրջանի առանձնահատկություններից, ներկայացրին տնտեսական, մշակութային, զբոսաշրջության և այլ ոլորտներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն, հանդես եկան մի շարք ոլորտներում քույր քաղաքների միջև փոխհամագործակցության առաջարկություններով:

Լոռու մարզում ԵՄ եւ այլ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր

Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիրն իրականացնում է «Հաբիթաթ ֆոր հյումանիթի» ՀԿ-ն Սպիտակ եւ Վայք քաղաքներում: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Սպիտակի համայնքապետարանի մասնագետներ, բնակչության շրջանում իրազեկում կազմակերպելու նպատակով անց են կացվել էներգիայի օրեր միջոցառում եւ հանդիպումներ, կազմվել է վերանորոգվող շենքերի վերանորոգման նախագծերը: ԵՄ ֆինանսական ներդրումը կազմում է **807,256** եվրո, իսկ Սպիտակի համայնքապետարանինը՝ **192,375 եվրո**: Ծրագիրը ենթադրում է 27 բազմաբնակարան շենքերում էներգիայի խնայողության մոդելների կիրառում՝ ջերմամեկուսացում, արեային մարտկոցների տեղադրում, տանիքների եւ մուտքերի դռների փոխարինում:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), Հայաստանյան ներկայացուցչությունն իրականացրել է «Համայնքային դիմակայության և բնապահպանական արտակարգ իրավիճակներին պատրաստվածության կարողությունների զարգացում» Ստեփանավանում: Ծրագիրն իրականացվել է «Կատալիտիկ ֆոնդ», «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գործընկերների հետ համատեղ, բյուջե՝ 1 250 000 ՀՀԴ:

ԱՄՆդեսպանատան ֆին. աջակցությամբ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հայաստանյան մասնաճյուղը 2016 թվականի օգոստոս ամսին սկսեց Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրի» (ՇՄՊՏԳԾ) մշակման աշխատանքները: Ծրագրի նպատակների հիմքում ընկած է բնապահպանական խնդիրների որոշումների կայացման և միջոլորտային համագործակցության գործընթացներում հանրային մասնակցության ապահովման և տեղական մակարդակում բնապահպանական պլանավորման իրագործման սկզբունքը:

ԶԺՀ դեսպանատունը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ իրականացրել է Վանաձոր քաղաքի Վարդանանց 11 հասցեում պարզ տիպի մարզահրապարակների կառուցում:

Գյուղի Զարգացման Արդի Նախաձեռնություն(ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, մարզում իրականացվել է 6 դրամաշնորհային ծրագիր: Բիզնես ծրագրերի տիպերը եղել են՝ այգեգործություն, ջերմոցային տնտեսություն, գյուղական տուրիզմի զարգացում և գյուղ, տեխնիկայի տրամադրում:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» (COAF) բարեգործական կազմակերպությունը, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով, ընդլայնում է գործունեությունը մարզի համայնքներում: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրականացումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր: Հիմնադրամի ծրագրերը Լոռու մարզում մեկնարկել են 2014 թվականից: 2017թ. Աքորի համայնքում հիմնվել է զարգացման կենտրոնի՝ 662.0 հազ. դրամ

ներդրմամբ: Կարևոր քայլերից է հատկապես Դեբեդում սմարթ կենտրոնի հիմնումը: Ձորագյուղի նախակրթարանին (ՀՈԱԿ) տրամադրվել է 162 000 ՀՀԴ դրամաշնորհ:

«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղի Ստեփանավանի և Ալավերդու գրասենյակների միջոցով շարունակել է իր բարեգործական աշխատանքները: Մարզի Սարչապետ և Կողես համայնքներում իրականացվել են գյուղատնտեսական, կրթական և սոցիալական ոլորտներին առնչվող ծրագրեր, ընդհանուր ներդրումներ՝ **1.4 մլն դրամ: «Լուսինգ ֆորվարդ» զբոսաշրջության հիմնադրամի** կողմից իրականացվում է «Ալավերդի քաղաքային համայնքի Միկոյան եղբայրների թանգարան» ՀՈԱԿ-ի վերանորոգում, հասարակության սոցիալ-մշակութային կյանքում թանգարանի դերի բարձրացում (թանգարանը գտնվում է վերանորոգման մեջ, տարվում է նաև ցուցանմուշներով հիմնովին համալրելու աշխատանքներ): Ծրագրի ընդհանուր արժեքը՝ **35.0 մլն դրամ:**

Գերմանիայի միջազգային համագործակցություն (GIZ), Հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ Վանաձորի համայնքապետարանում ստեղծվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ, իսկ Ապավեն համայնքում իրականացրել է «Թերմոկուլտուրայի զարգացման» ծրագիր (հողագործության, անասնապահության, ձկնաբուծության, մեղվաբուծության զարգացում):

ՀՏՀՀ և ԱՄՆ ՄԶԳ (USAID) - Թումանյան համայնքի համար ձեռք է բերվել բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, աղբատար մեքենա, ինքնաթափ մեքենա, կառուցվել են ավտոկանգառներ, մեքենաների ծածկարանի և աղբամանների հարթակներ: Ներդրումների ընդհանուր ծավալը շուրջ 81.2 մլն դրամ:

ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի սպառնալիքների նվազեցման գործակալությունը (DTRA) նախաձեռնել է ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ Լոռու մարզի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցում: Ծրագրի ասարտը 2018թ.-ին:

ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների կողմից «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» համատեղ ծրագիր Լոռու և Տավուշի մարզերում

- Արդվի համայնքում կառուցվել է 260մ² պասիվ արևային ջերմատուն, որը հանձնվել է «Արդվի» կոոպերատիվին: Ծրագրի նախագծային արժեքը կազմել է 21 մլն. դրամ:
- Իրականացվել է Օձունի համայնքամերձ 93 հա անտառի կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ: Առաջացած շուրջ 300մ³ փայտանյութը անվճար տրամադրվել է Օձունի և հարևան համայնքների կարիքավոր ընտանիքներին:
- Ընթացքի մեջ են մարզի անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների (ԱԿՊ), ինչպես նաև «Մարգահովիտ» և «Կովկասյան Մրտավարդենի» արգելավայրերի կառավարման պլանների կազմման աշխատանքները:

Մարզի նախակրթարանների վերանորոգման եւ գույքի ապահովման համար ներդրումներ են իրականացրել **ԵՀԽ հայաստանյան Կլորսեղան հիմնադրամը, Փասադենայի «Քույր քաղաքների ասոցիացիա» ՀԿ-ն, «Փրկենք երեխաներին» (Save the children) միջազգային կազմակերպությունները:** Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել **ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), Հայաստանյան ներկայացուցչության** կողմից, որի ներդրումների ծավալը շուրջ **68.7 մլն դրամ է:**

ՎՕՍԲ-ն կորպորացիան իրականացրել է Լեջանի և Լեռնանցք համայնքներում ջրամատակարարման և խմելու ջրի համակարգի վերանորոգման աշխատանքներ:

Իրենց բարեգործական ծրագրերն են շարունակել **«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը, Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը, Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, Պարենի Համաշխարհային Ծրագրի Հայաստանյան գրասենյակը, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը, «Լիարժեք կյանք» ՀԿ-ն**

«Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ում և Սպիտակում՝ ջերմոցային

տնտեսությունում աշխատում են 14-ական հաշմանդամություն ունեցող անձինք: Վանաձորում գործող «Էբրիկոտ» ընկերությունում աշխատում են 15 հաշմանդամություն ունեցող անձ /որից՝ հուշանվերների արտադրությունում՝ 10, իսկ արծաթյա զարդերի արտադրությունում՝ 5/:

ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

2017թ.-ի ընթացքում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը Լոռու մարզ է այցելել 4 անգամ: Առաջին այցը **հունվարի 19-ին էր**: Մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ կառավարության ղեկավարը նախ ծանոթացել է Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական (Մ- 6) ավտոճանապարհի վերակառուցման առաջին փուլի՝ 38,5 կմ երկարությամբ հատվածի աշխատանքների ընթացքին: Կառավարության ղեկավարն այցելել է Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն, հանդիպել Լոռու մարզի համայնքների ղեկավարների ու գործարարների հետ, քննարկել առկա խնդիրներն ու զարգացման հնարավորությունները: Վարչապետի այցի հիմնական նպատակն էր քննարկել մարզի զարգացման ծրագրերը, ուրվագծել հետագա քայլերը: Այցի ընթացքում նշվել է, որ արդեն իսկ մշակվել է այն մեթոդաբանությունը, որի հիման վրա համայնքների ղեկավարները ներկայացնելու են համայնքների զարգացման հնգամյա ռազմավարությունը:

Վարչապետ Կ. Կարապետյանի **2-րդ** աշխատանքային այցը Լոռու մարզ մարտի 19-ին էր:: Կառավարության ղեկավարը եղել է Ախթալայում, այցելել է ազգային գործիչ, բարերար Միքայել Արամյանցի տուն, որի վերանորոգման վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ղեկավար Վահե Կարապետյանի հետ, ապա այցելել Ստեփանավանի Ամալյա Կարապետյանի անվան նորակառույց նախակրթարան, այցի վերջում Վանաձորի հիվանդանոցային համալիրի շինհրապարակ և «Գլորիա» կարի ֆաբրիկա:

Վարչապետ Կարեն Կարապետյանի **3-րդ**՝ հոկտեմբերի 16-ին կատարած այցի նպատակը Վանաձորի զարգացման ծրագրերի քննարկումն էր: Նա խորհրդակցություն է անցկացրել Լոռու մարզպետարանում, որի ընթացքում ներկայացվել է Վանաձորի ընդհանուր զարգացման հայեցակարգը, ներկայացվել է նաև Վանաձորի ինդուստրիալ տուրիզմի զարգացման ռազմավարությունը:

Վարչապետ Կարեն Կարապետյանը Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ **հոկտեմբերի 7-ին** մասնակցել է Վանաձորի օրվան նվիրված տոնական միջոցառումներին:

Ներկա է գտնվել նաև իրանական «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ կողմից Լոռու մարզում կառուցվող գործարանների հիմնարկեքի արարողությանը, այցելել է Վանաձորի «Թթու ջուր» կոչվող տարածք, որտեղ նախատեսվում է «Թթու ջուր» հանգստյան գոտու ու Բոշյան փողոցի բարեկարգում, եղավ նաև քաղաքի «Մոր և մանկան այգում», ծանոթացավ կատարված վերանորոգման աշխատանքների արդյունքներին:

Մարտի 14-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը: Նախարարը, Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանը, ՀՀ Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Էջի Տագուչին այցելել են Սպիտակ քաղաքի հրշեջ-փրկարարական ջոկատ: Նախարարը նշել է, որ Լոռու մարզի հետ իրականացվելու է Ճապոնիայի կառավարության մեծ ծրագիր, որի շրջանակներում հիմնականում վերազինվելու և վերահագեցվելու է ամբողջ փրկարարական և հրշեջ տեխնիկան:

Օգոստոսի 23-ին ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն աշխատանքային այցով գտնվում էր Լոռու մարզում: Մազում կատարած շրջայցից հետո նախարարը խոստացավ բարձրացված հիմնահարցերը առավել առարկայական քննարկել նախարարությունում և ապա առաջարկել դրանց լուծման հնարավոր ուղիներ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Լրափոփություն

Լոռու մարզում գործում են 6 հեռուստաընկերություն, 2 ռադիոխմբագրություն, տեղական լրատվական երկու կայք, 12 տպագիր պարբերական («Լոռու մարզ», «Վանաձորյան խճանկար», «Սպեղանի», «Հայրենիք և եկեղեցի», «Հրաշամանուկ», «Երկունք», «Կանաչ Լոռի», «Մաշտոց», «Թումանյանական աշխարհ», «Լուսարձակ», «Բազում», «Մարգահովտի Զորավիգ»: Բացի տեղական լրատվամիջոցներից, մարզում լրագրական գործունեություն է ծավալում նաև հանրապետական զանգվածային լրատվամիջոցների 8 թղթակից:

Տպագիր լրատվամիջոցներ ունեն Վանաձորը (1 օրաթերթ, 1 շաբաթաթերթ, 4 պարբերաթերթ և 2 ամսագիր), Ալավերդին՝ 1 շաբաթաթերթ, Սպիտակը՝ 2 ամսաթերթ և Մարգահովտ գյուղը՝ 1 պարբերաթերթ:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում հեռուստաաշտարակային ցանցով հեռարձակվում են հանրապետական և օտարերկրյա թվով 8 հետևյալ հեռուստաընկերությունների հաղորդումները՝

- «Հ1» հանրային հեռուստաընկերություն
- «Հ2» հեռուստաընկերություն
- «Արմենիա» հեռուստաընկերություն
- «Շողակաթ» հեռուստաընկերություն
- «Շանթ» հեռուստաընկերություն
- «Կենտրոն» հեռուստաընկերություն
- «Երկիր մեդիա» հեռուստաընկերություն(հեռարձակվում է միայն Վանաձորում):
- PTP հեռուստաընկերություն:

Բացի վերոհիշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ, որոնք առավել մեծ թվով ծրագրեր դիտելու հնարավորություն են ընձեռում:

Լրատվություն

Լոռու մարզում գործում են 6 հեռուստաընկերություն, 1 ռադիոխմբագրություն/, տեղական լրատվական երեք կայք /Loriinfo.com, lorinews.info, armweeklynews.am/, 7 տպագիր պարբերական:

Հեռահաղորդակցություն

2017 թ. հոկտեմբերից մարզի տարածքում մեկնարկեց հեռուստահաղորդակցության թվային համակարգը՝ հանրապետական և օտարերկրյա թվով 9 հետևյալ հեռուստաընկերությունների հաղորդումներով.

«Հ1» հանրային, «Հ2», «Արմենիա», «Շողակաթ», «Շանթ» «Կենտրոն» «Երկիր մեդիա», «PTP Планета» և «Ֆորտունա» հեռուստաընկերություններ:

Թվային հեռարձակման շնորհիվ մեկընդմիջտ լուծվեց հատկապես գյուղական համայնքներում հեռուստահաղորդումների որակի ապահովման երբեմնի խնդիրը:

Բացի վերոնշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ, որոնք առավել մեծ թվով ծրագրեր դիտելու հնարավորություն են ընձեռում:

Հեռուստաընկերություն ունի 4 համայնք՝ Վանաձորը՝ 4, մեկական հեռուստաընկերություն՝ Ալավերդի և Սպիտակ քաղաքները:

Տեղական ռադիոցանց ունի Վանաձոր քաղաքը:

Մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով մշտապես լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, մարզխորհրդի նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները: Իսկ այնպիսի հարցերի մասին, որոնք իրենց բնույթով ռազմավարական, սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն են ունեցել, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի

ստորաբաժանումների ղեկավարների և գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են հեռուստահարցազրույցներ, «Կլոր սեղան»-ներ, ասուլիսներ և այլն:

2017թ.-ի ընթացքում տեղական հեռուստահաղորդումներով և մարզային թերթում բավարար չափով լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը, բոլոր մեծ թե փոքր իրադարձային միջոցառումները, իսկ մարզխորհրդի նիստերը բաժնի կողմից ընդարձակ լրատվությամբ լուսաբանվել են «Ֆորտունա» հեռուստաընկերության եթերով, «Լոռու մարզ» թերթում և մարզպետարանի պաշտոնական կայքէջում, Ֆեյսբուքյան էջում:

Մարզի բոլոր ԶԼՄ-ներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Լոռու մարզպետարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների մասին: Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների մարզային աշխատանքային այցելությունների ժամանակ ԶԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրվել են մամլո հաղորդագրություններ, սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Հաշվետու տարվա ընթացքում օպերատիվորեն սպասարկվել է նաև Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջի «Մամլո հաղորդագրություն» բաժինը, ուր զետեղվել են հաղորդագրություններ մարզին առնչվող հանրային կարևորության իրադարձությունների, դեպքերի մասին:

Բաժինը հետևողական է եղել հանրապետական և տեղական լրատվամիջոցներում Լոռու մարզին վերաբերող հարյուրից ավելի կարևորագույն հրապարակումների նկատմամբ: Քննադատական բնույթի հրապարակումների կրկնօրինակները տրամադրվել են մարզպետին, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների պետերին համապատասխան հետևություն անելու, հարկ եղած դեպքում արձագանքելու համար:

Լոռու մարզպետարանի գործունեության հանրային իրազեկման գլխավոր տեղեկատվական բազան շարունակում է մնալ տարածքային կառավարման միասնական համակարգում գործող մարզպետարանի www.http://ori.mtad.am պաշտոնական կայքը, որի «Տեղեկատվական հարթակ» բաժնի «Նորություններ» էջի սպասարկումը համարվում է բաժնի կարևորագույն գործառնություններից մեկը: Այստեղ զետեղվում է Լոռու մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը լուսաբանող տեսանյութերով մշտապես թարմացվող ամենօրյա տեղեկատվություն: Այդ էջում են լուսաբանվել նաև ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային հիշարժան դեպքերն ու իրադարձությունները:

Գործարկվել է «Լոռու մարզպետարան» ֆեյսբուքյան պրոֆիլը, որի բաժանորդների թիվը ներկա պահին հասնում է 5000-ի: Գործարկվել է նաև Ֆեյսբուքյան եռալեզու էջը իսկ ՀՀ կառավարության հանձնարարությամբ ստեղծվել է յուրօրյան էջ, ուր օպերատիվ կարգով տեղ են գտնում մարզպետարանի գործունեությանն առնչվող տեսանյութեր:

Նախորդ տարիներին մարզային հեռուստաընկերություններով հեռարձակվող «Մարզպետարանի ժամ» ամենշաբաթյա հաղորդաշարը փոխարինվել է մարզային «Ֆորտունա» հեռուստաընկերությամբ թողարկվող «Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ներկայացնում է» ամենօրյա, առավել օպերատիվ հավելվածով:

Բաժինը ստանձնեց «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում զանգվածային լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ու քաղաքացիներից մարզպետարանին ուղղված հարցումներին ժամանակին և պատշաճ պատասխանելու կանոնակարգման պարտականությունը: 2017թ. ստացվել է մարզպետին և կառուցվածքային ստորաբաժանումներին ուղղված 17 գրավոր և շուրջ 50 բանավոր հարցում, որոնց տրվել է հիմնավոր պատասխան՝ օրենքով սահմանված ժամկետների մեջ:

Աշխատանք Հասարակական կազմակերպությունների հետ

Մարզում գրանցում ունեն 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնցից ակտիվորեն գործում են շուրջ 30-ը: Դրանցից շատերը ակտիվ համագործակցում են մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, մյուս ստորաբաժանումների հետ:

Մարզպետարանի հետ առավել ակտիվ փոխհամագործակցում են «Առավոտ», «Խաչվող ուղիներ», հունական «Էլպիդա», «Օրիոն» բնապահպանական, «Օրրան», «Հայկական Կարիտաս», կազմակերպությունները, «Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային կազմակերպությունը», «Թռիչք», «Համալսարանական կրթությամբ կանայք», «Լիարժեք կյանք», «Զանգակ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Մանկական կենտրոն» և այլ ՀԿ-ներ:

ՀԿ ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզպետարանում տեղի ունեցող կամ մարզպետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, բաժինը մշտապես օգնել ու համագործակցել է «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» և իրավական հարցերի գծով ՀԿ-ներին՝ մարզում նրանց կողմից կազմակերպվող միջոցառումների ժամանակ:

Ազգային փոքրամասնությունները բաժնի գործառույթներում

Լոռու մարզի ներկայիս տարածքը խորհրդային տարիներին ազգային փոքրամասնություններով ամենաբնակեցվածներից էր: Սակայն վերջին մեկուկես-երկու տասնամյակներում տարածաշրջանում սկիզբ առած էթնիկական տեղաշարժերի հետևանքով արտագաղթեցին նաև մեծ թվով այլազգի բնակիչներ:

Լոռու մարզում բնակվում է 3107 ռուս, 875 հույն, 653 եզդի, 27 քուրդ, 8 ասորի, 349 այլ ազգերի ներկայացուցիչներ: Հայ ազգաբնակչության հետ նրանք ապրում են իրավահավասարության պայմաններում և բոլոր պայմաններն ունեն ազգային մշակույթի ու կրթության պահպանման համար: Դրանց են նպատակաուղղված ազգային հասարակական ու մշակութային կազմակերպությունները:

Մարզպետարանը մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներին իրազեկվում, հարկ եղած դեպքում համակողմանի աջակցություն է ցուցաբերում նրանց հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Մարզում գործում է այդպիսի 5 կազմակերպություն՝ հունական սփյուռքի ազգապահպանական «Էլպիդա», «Պոնտոս» և «Ակմի», ռուսազգի փոքրամասնության սոցիալական, մշակութային, կրթական հիմնախնդիրներով զբաղվող «Օբշչեստվո Ռոսիի», ազգային մշակույթի և ազգամիջյան կապերի զարգացման հարցերով զբաղվող «Ուկրաինա»: Նրանց ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզխորհրդի նիստերին, պետական, ազգային տոների հանդիսություններին, համահամայնքային և մարզային միջոցառումներին: Տոնահանդեսներում կատարումներով հանդես է գալիս ուկրաինացիների երգչախումբը:

2017թ. նոյնպես մարզի զանգվածային լրատվամիջոցները բազմիցս լուսաբանել են ազգային փոքրամասնությունների առօրյան:

Վերոնշյալ հասարակական կազմակերպությունները միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպման ժամանակ, որպես կանոն հովանավորվում են Լոռու մարզպետի կողմից:

Նկատենք, որ ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները, դրանց ներկայացուցիչները չեզոք դիրքորոշում են որդեգրել հատկապես քաղաքական ոլորտում, գրեթե չեն մասնակցում քաղաքական տարբեր հոսանքների կողմից երբևէ կազմակերպվող միջոցառումներին, մանավանդ՝ բողոքի ակցիաներին:

Ազգային փոքրամասնությունների կողմից իշխանությունների նկատմամբ էական դժգոհություն չի եղել, մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ հարաբերություններում տիրում է փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ:

Աշխատանք կրոնական կազմակերպությունների հետ

2017թ. մարզում գործունեություն են ծավալել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմը, Հայ կաթողիկե եկեղեցու Տաշիրի թեմը, Հայ Ավետարանական եկեղեցու Լոռու թեմը, Վանաձորի Ավետարանական հավատքի, մորմոնների(Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբեր), Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցիները, Եհովայի վկաների հետևորդները:

Մարզպետարանի առնչությունները՝ գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, եղել են պաշտոնական գործառույթներից բխող հանգամանքներով:

Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջանի հետ հանդիպումներում քննարկվել են.

- Թեմին պատկանող «Ծիծեռնակ» ճամբարում արցախցի և սոցիալապես անապահով երեխաների ամառային հանգստի կազմակերպման

- «Ձեռք մեկնիր եղբորդ» կարգախոսով բարեգործական ծրագրի գործունեության

և այլ հարցեր:

Տարվա ընթացքում Լոռու մարզի զանգվածային լրատվամիջոցները՝ անդրադարձել են ազգային փոքրամասնությունների առօրյայի ու խնդիրների լուսաբանմանը, կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

Կրոնական կազմակերպությունների առաջնորդները, ներկայացուցիչները որևէ դժգոհություն չունեն մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվություններից:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Լոռու մարզային փրկարարական վարչությունը ամբողջությամբ և ժամանակին է կատարել 2017 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները, վերադասի կողմից արձակված հրամանները, հրահանգները և հանձնարարականները, ինչպես նաև լրացուցիչ պահանջվող միջոցառումները:

Մշակվել և սահմանված կարգով մարզպետի հաստատման է ներկայացվել Լոռու մարզի տարածքում 2017թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման մասին, որոշման նախագիծը հավելվածների հետ միասին, որը հաստատվել է 16 փետրվարի 2017թ. թիվ 75-Ա որոշմամբ:

ՀՀ Լոռու մարզպետի 14.11.2017թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքում ձմեռային ժամանակահատվածում հնարավոր առատ ձյան, ուժեղ ձնաքթի, ձնահյուսի և մերկասառույցի առաջացման, դրանց հետևանքով տրանսպորտային միջոցների արգելափակման և (կամ) ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 491-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 470-Ա որոշմամբ հաստատվել են առատ ձյան ժամանակ մարզպետարանի ստորաբաժանումների, կազմակերպությունների և համայնքների ղեկավարների անհրաժեշտ միջոցառումները:

2017 թվականի ընթացքում Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվել են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման վերաբերյալ 969 ահազանգ, որոնցից՝ 645-ը – տեխնածին, 44-ը – տարերային, 280-ը – սոցիալ - կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Արտակարգ դեպքերի ու պատահարների հետևանքով զոհվել են 45, վիրավորվել 680 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է 177.470.219 դրամ:

2017 թ-ի ընթացքում ԼՄՓ վարչություն հաղորդագրություններ են ստացվել մարզում գրանցված 842 արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ, որոնցից՝ 357-ը - տեխնածին, 81-ը - տարերային և 404-ը - սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Զոհվել են 39, վիրավորվել 498 մարդ: Նյութական վնասը կազմել է 315.265.576 դրամ:

2016 թ-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերը աճել են 127-ով, ընդ որում՝ 288-ով աճել են տեխնաձին, նվազել են 37-ով տարերային բնույթի դեպքերը, 124-ով սոցիալ-կենցաղային բնույթի դեպքերը: Զոհվածների թիվը աճել է 6-ով, վիրավորներինը աճել է 182-ով: 2016 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ 137.795.357 դրամով նվազել է արտակարգ դեպքերի հետևանքով առաջացած նյութական վնասի չափը:

Դեպքերի արձագանքման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների կողմից իրականացվել է՝ 1788 ելք (2016թ.՝ 1616), այդ թվում՝ հրդեհների - 517 (2016թ.՝ 370), վթարների և պատահարների - 141 (2016թ.՝ 124), կեղծ կանչի 40 (2016թ.՝ 15), կենցաղային օգնության - 143 (2016թ.՝ 264), այլ մեկնումներ - 877 (2016թ.՝ 947):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անց են կացվել՝

❖ **Շտաբային ուսումնավարժություններ**

- ✓ ապրիլի 10-21-ը «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով Վահագնի, Ճոճկան, Ծաղկաբեր, Գարգառ, Շենավան, Արդվի, Նոր Խաչալապ, Սարամեջ, Սվերդլով և Վարդաբլուր համայնքների կողմից,
- ✓ **հունիսի 1-14-ը «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում և իրականացում» թեմայով Վանաձոր, Քարաբերդ, Վահագնաձոր, Անտառաշեն, Ձորագյուղ, Եղեգնուր, Ձորագետ, Ազնվաձոր, Անտառամուր և Փամբակ համայնքների կողմից,**
- ✓ **օգոստոսի 1-14-ը «Խաղաղից ռազմական դրության անցնելու դեպքում ՔՊ միջոցառումների կազմակերպումը» թեմայով Ալավերդի, Այգեհատ, Օձուն, Արևածագ, Դսեղ, Ծաղկաշատ, Մղարթ, Հորբարձի, Նեղոց և Շնող համայնքներում,**
- ✓ հոկտեմբերի 23-ին Վանաձոր քաղաքում «Սողանքների ակտիվացման հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացում» թեմայով,

❖ **ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ անցկացված շտաբային ուսումնավարժություններ**

- ✓ մարտի 23-ին՝ «Մեծավանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և իրականացում» թեմայով,
- ✓ սեպտեմբերի 29-ին՝ «Խաղաղից ռազմական դրության անցնելու դեպքում ՔՊ միջոցառումների կազմակերպումը» թեմայով:

❖ **Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ.**

- ✓ **«Ավտոճանապարհին առաջացած մերկասառույցի վերացման միջոցառումներ» թեմայով «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից,**
- ✓ **«Ձնաբքի հետևանքով ավտոճանապարհին ձյան մեջ խցանված ավտոմեքենաների դուրսբերում և ավտոճանապարհի մաքրում» թեմայով՝ «Ճանապարհ» ՓԲԸ-ի կողմից,**
- ✓ **«Քարաթափման հետևանքով փակված ավտոճանապարհի մաքրում» Թումանյանի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից,**
- ✓ **«Սելավի հետևանքով ավտոճանապարհի վնասված հատվածի վերականգնում» թեմայով «Տաշիրի ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից,**
- ✓ **«Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի Թումանյանի ՏՏ-ի կողմից,**
- ✓ **«Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում» թեմայով «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի Սպիտակի էլ. ցանցի կողմից,**
- ✓ **«Ջրամատակարարման ցանցում վթարի առաջացման դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացում» թեմայով «Վեդլիա Ջուր» ՓԲԸ-ի «Լոռի» տեղամասի կողմից,**

- ✓ «Աի հետևանքով կապի համակարգում առաջացած վթարի վերացում» թեմայով «ԱրմենՏել» ՓԲԸ Հյուսիսային տարածքային կենտրոնի կողմից:
- ✓ ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ՝ «Տարահանման կեդրոնի ծավալում» թեմայով՝ Վանաձորի №2, Սրբեփանավանի №6 հիմնական, Տաշիրի ավագ, Վանաձորի №24 միջնակարգ դպրոցներում, «Օդային տաճար» ազդանշանի դեպքում պատրաստման իրականացումը» թեմայով՝ Լեռնանցքի, Օձունի №1, Մարգահովտի միջնակարգ դպրոցներում և Սրբեփանավանի №1 վարժարանում:
Թվով 165 հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անց են կացվել սեմինար պարապմունքներ՝ նվիրված ՔՊ միջազգային օրվան:
- ✓ Աի աշխատակցի օրվա կապակցությամբ՝ «Հրեջ-փրկարարական գույքի ցուցադրում» թեմայով՝ Վանաձորի թիվ 13 ավագ, Վանաձորի թիվ 12, Սպիտակի թիվ 3 և Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոցներում, «Տուժածների դուռ բերումը կիսաքանդ շենքի 3-րդ հարկից» թեմայով՝ Ամրակիցի, Արևաշողի, Դարպասի միջնակարգ և Ալավերդու թիվ 10 հիմնական դպրոցներում: Սեպտեմբերի 12-ից 13-ը Վանաձորի թիվ 10 ավագ, Ախթալայի թիվ 1 միջնակարգ, Գարգառի միջնակարգ, Մեղովկայի միջնակարգ, Վանաձորի թիվ 5 ավագ, Դեբեդի միջնակարգ և Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոցներում՝ «ՀՀ Աի նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները» թեմայով անց են կացվել դասախոսություններ:
- ❖ Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարություն.
22.08.2017թ. Լոռու մարզի Վանաձոր քաղաքում «Գազի պայթյունի հետևանքով կիսաքանդ բազմաբնակարան շենքում որոնողափրկարարական աշխատանքների իրականացում և հետևանքների վերացում» թեմայով:
- ❖ Օբյեկտային վարժանք.
✓ Նոյեմբերի 27-ին «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ «Հիվանդների տարահանման միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով,
- ✓ Նոյեմբերի 28-ին և նոյեմբերի 29-ին «Մեծավանի առողջության կենտրոն » և «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ների կողմից՝ «Երկրաշարժի դեպքում աշխատակիցների պաշտպանության կազմակերպումը» թեմայով,

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի №34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն որոշման համաձայն մշակված և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 11.01.2017թ-ին հաստատված պլանի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2017թ. ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացներին, 2017թ-ի ընթացքում ուսուցման ծրագրով նախատեսված 41 ուսուցանվողներից փաստացի ուսուցում են անցել 40 մասնակիցներ:

Կապի և ազդարարման համակարգ

2017 թվականի ընթացքում տեղերում ճշգրտվել են (լուսանկարվել են) ՀՀ Լոռու մարզում բնակչության ազդարարման համար տեղադրված էլեկտրական չչափերի քանակներն ու դրանց տեխնիկական վիճակները: Ճշգրտմամբ պարզվել է, որ ազդարարման համար պահանջվող 174

չչակներից առկա են 44-ը, որոնցից անսարք են 13-ը: 56 համայնքներից տեղային ազդարարում հնարավոր է իրականացվել միայն 8 բնակավայրում:

Մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում տեղադրվել է Պ-166Մ մակնիշի բնակչության ազդարարման կենտրոնական կառավարման համակարգի լրակազմ, թվային ռադիոկապի վերահաղորդակ և ստացիոնար կայան, իսկ Ստեփանավան քաղաքում տեղադրվել են Ս-40 տիպի թվով 3 էլեկտրական չչակներ և մեկ բարձրախոս, որոնք միացվել են կենտրոնացված ազդարարման միասնական համակարգին: Նշված սարքավորումները թույլ են տալիս վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնին կենտրոնացված իրականացնել Ստեփանավան քաղաքի բնակչության ազդարարումը, ինչպես նաև թվային ռադիոկապ հաստատել Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի և մարզային ճգնաժամային կենտրոնների հետ:

Կազմվել է ծրագիր՝ Մեծավանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում հնարավոր ջրա-ծածկման գոտում գտնվող թվով 6 բնակավայրերի բնակչությանն ազդարարելու նպատակով տեղադրված չչակները միասնական համակարգին միացնելու համար:

ԶՈՐԱԿՈՉ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ


Հաշվետու ժամանակաշրջանում մարզում զորակոչը կազմակերպելու և անցկացնելու նպատակով համակարգվել է մարզային ոստիկանության, դատախազության, տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկ-ձեռնարկությունների գործունեությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զորակոչային տարիքի և 16 տարեկանը լրացած պատանիների հաշվառման, կցագրման, զորակոչից խուսափող զինակոչիկների հայտնաբերման և նրանց զորակոչելու ուղղությամբ:

2017թ. զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 102.3%-ով (2017թ. ամառային զորակոչը 100.9%, 2017թ. ձմեռային՝ 103.9%):

Համակարգվել է այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների հետ տարվող աշխատանքները:

Մարզի տարածքում տեղակայված զինվորական ստորաբաժանումներին ցուցաբերվել է տարաբնույթ օժանդակություն:

Զորակոչ





ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Լոռու մարզի ոստիկանության վարչության և ենթակա բաժինների կողմից 2017թ. ընթացքում գրանցվել է **1360** հանցագործություն, որը նախորդ տարվա համեմատ աճել է 55-ով կամ 4.2%-ով: Բացահայտումը կազմել է **90.4%**, կամ 0.1%-ով ավել քան 2016թ.-ին:

ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Տնտեսական հանցագործություն - 19 հանցադեպ, 2016թ. համեմատ նվազել է 5-ով կամ 20.8 %-ով
Այլ ծառայությունների գծով - 1341 հանցադեպ, 2016թ. համեմատ աճել է 60-ով կամ 4.7%-ով:



2017թ. նախորդ տարվա համեմատ փոփոխվել է հետևյալ հանցատեսակների քանակը.
Սպանություններ 4 հանցադեպ՝ նվազել է 6 դեպքով կամ 60.0%-ով
Անձնական գույքի հափշտակում 373 հանցադեպ՝ աճել է 24-ով կամ 6.9%-ով
Հասարակական վայրերում կատ. հանցագործութ. 2 հանցադեպ՝ բնազդել է 1-ով կամ 33.3%-ով

Անչափահասների կողմից կատ. հանցագործությ. 25 հանցադեպ՝ նվազել է 1-ով կամ 3.8%-ով:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզպետարանում կա 150 հաստիք, որից 133 քաղաքացիական ծառայողների հաստիքներ են (27-ը առանձնացված ստորաբաժանումներում), որից թափուր է 3-ը: 2 պաշտոններ ժամանակավոր (ֆիզ.արձակուրդ) թափուր են:

2017 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 4 մրցույթ, անց է կացվել 3-ը (1 մրցույթի համար դիմորդ չի եղել), ընդհանուր դիմորդների քանակը՝ 5, մասնակիցների քանակը 3 և 1 կրտսեր պաշտոնների մրցույթներ (դիմորդների քանակը՝ 2), իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոն զբաղեցնելու համար՝ 3 մրցույթ:

Կատարվել է պաշտոնավարման ժամկետի 3 երկարացում:

Վերապատրաստվել են 35 քաղաքացիական ծառայողներ

2017 թվականի ընթացքում աշխատանքից ազատվել են 9 քաղծառայողներ, ընդունվել 12-ը: 4 քաղաքացիական ծառայողներ արտամրցույթային կարգով նշանակվել են նոր պաշտոնի: Քաղաքացիական ծառայության մասով չի խրախուսվել և կարգապահական տույժի չի ենթարկվել ոչ մի աշխատակից: 12 քաղծառայողների շնորհվել է իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճան, 4 քաղծառայողների իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

2017թ-ին նախապատրաստվել են՝

- ✓ Լոռու մարզպետի 120 որոշումների և 316 կարգադրությունների նախագծերը,
- ✓ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 348 հրամանների նախագծեր,
- ✓ մրցույթով անցած 8 դպրոցի տնօրենների, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի 9 փոխարինողների աշխատանքային պայմանագրերի նախագծերը,
- ✓ ՔԾԽ-ի 71 գրությունների պատասխանների նախագծեր,
- ✓ 2 քաղաքացիների դիմումների պատասխանների նախագծեր:

Ամփոփվել է աշխատակիցների կիսամյակային և տարեկան կատարողականների գնահատման արդյունքները (բոլոր աշխատակիցները ունեցել են կատարողականի 60%-ից բարձր ցուցանիշ):

ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2016Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2017թ. ընթացքում մարզպետի կողմից

- ընդունվել է 520 որոշում,
- արձակվել է 322 կարգադրություն:

Մարզպետի որոշումները վերաբերում են հետևյալ հարցերին.

• ՏԻՄ	6	1.2%
• առողջապահություն և սոց. ապահովություն	37	7.1%
• կադրային հարցեր	106	20.3%
• կրթություն, մշակույթ և սպորտ	209	40.1%
• հողօգտագործում	5	1.0%
• ֆինանսական հարցեր	110	21.2%
• քաղաքաշինություն	2	0.4%

• տրանսպորտ	1	0.2%
• ԱԻ և ՔՊ	11	2.1%
• գորակոչ	2	0.4%
• գաղտնի	4	0.8%
• իրավական և մասնագիտական հսկողություն	1	0.2%
• այլ	26	5.0 %

Մարզպետի կարգադրությունները վերաբերում են հետևյալ հարցերին.

• կադրային հարցեր	288	89.5%
• ֆինանսական հարցեր	7	2.2%
• առողջապահություն և սոց. ապահովություն	1	0.3%
• կրթություն	10	3.1%
• գյուղատնտեսություն և բնապահպանություն	3	0.9%
• հողօգտագործում	1	0.3%
• մշակույթ և սպորտ	1	0.3%
• գորակոչի հետ կապված հարցեր, ՔՊ և ԱԻ	1	0.3%
• այլ	10	3.1%

Մշտապես իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, խմբագրման աշխատանքներ, համարակալում, գրանցում գրանցամատյաններում և էլեկտրոնային առաքում շահագրգիռ ստորաբաժանումներին: Մարզպետի որոշումների և կարգադրությունների պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՀՀ օրենսդրության խախտումների հիմնավորմամբ հետ վերադարձված իրավական ակտեր չունենք:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից 2017թ. ընթացքում արձակվել է 351 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ:

2017թ. ընթացքում բաժնի կողմից կազմվել է 245 գրություն (2016թ.՝ 212), որոնցից՝ 32 դիմումի պատասխան (2016թ.՝ 16) և 213 գրություն (2016թ.՝ 196):

Հաշվետու ժամանակաշրջանում գումարի բռնագանձման պահանջով դատական հայցեր են ներկայացվել ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Արևածագ (960000 ՀՀ դրամ), Ծաթեր (260000 ՀՀ դրամ) և Դսեղ (1920000 ՀՀ դրամ) համայնքների ղեկավարների՝ տրամադրված աշնանացան ցորենի դիմաց հետ վերադարձման ենթակա գումարները բռնագանձելու համար: ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ենք ներկայացրել նաև դիմումներ՝ Դսեղ (780000 ՀՀ դրամ), Արծնի (445840 ՀՀ դրամ), Արջուտ (780000 ՀՀ դրամ) համայնքների ղեկավարներից հոգուտ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի գումարներ բռնագանձելու մասին վճարման կարգադրություններ արձակելու խնդրանքով: Արդեն իսկ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանից ստացվել է 04.12.2017թ. արձակված վճարման կարգադրություն, որի դեմ առարկություն չի ներկայացվել և 08.01.2018թ. այն ստացել է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ:

ՀՀ կառավարության 07.12.2017թ. թիվ 1585-Ն որոշմամբ ամբողջությամբ ներվել է ՀՀ Լոռու մարզի Լուսաղբյուր, Արջուտ, Արևածագ, Դսեղ, Ծաթեր, Մեծ Այրում, Ճոճկան, Տաշիր և Ձյունաշող համայնքներին հատկացված առաջին վերարտադրության սերմացուի դիմաց գոյացած պարտքերի գումարները, մասամբ ներվել է նաև ՀՀ Լոռու մարզի Պետրովկա, Արծնի, Շնող և Սարատովկա համայնքներին հատկացված առաջին վերարտադրության սերմացուի դիմաց գոյացած պարտքերի գումարների մի մասը, մասնավորապես՝ Պետրովկայի պարտքը 480000 դրամից դարձել է 320000 դրամ, Արծնիի պարտքը 368000 դրամից դարձել է 208000 դրամ, Շնողինը՝ 1120000 դրամից դարձել է 960000 դրամ, Սարատովկայինը՝ 800000 դրամից դարձել է 640000 դրամ: Այս մասին

գրություն է ուղարկվել ԴԱՀԿ Լոռու մարզային բաժնի պետին՝ նվազեցված գումարների մասով համապատասխան որոշումներ կայացնելու համար:

ՀՀ կառավարության նույն որոշմամբ ամբողջությամբ ներվել է նաև 2015-2016թթ. հատկացված ազոտական պարարտանյութերի դիմաց Սվերդլով, Միխայելովկա, Լուսադայուր և Սարալանջ համայնքների պարտքը:

«Բերրիություն» ՍՊԸ-ն ամբողջությամբ հրաժարվել է հայցից և միջնորդություն է ներկայացրել դատարան վարույթը կարճելու մասին, իսկ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը փոխել է հայցագնի չափը այն 27 միլիոնից նվազեցնելով մինչև 4.368.200 դրամ:

«Լոռու մարզի Ծաղկաբերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի չկատարված հարկային պարտավորությունների հարցով դատաքննությունն ընթացքի մեջ է և առաջիկայում նշանակվել է դատական նիստ:

2017թ. «ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ.Ռաֆայելյանի դեմ Լոռու մարզպետարանը հայց է ներկայացրել հետադարձ պահանջի իրավունքով (2.126.350 ՀՀ դրամ) գումարի բռնագանձման պահանջի մասին: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հայցը բավարարվել է: Կատարողական թերթը ներկայացվել է ԴԱՀԿ՝ համապատասխան ընթացք տալու համար: 27.12.2017թ. կայացվել է որոշում կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին: Նույն որոշման 2-րդ կետով 2277321 ՀՀ դրամի չափով (2.126.350 վնաս + 42.527 պետտուրք + 108.444 կատ. գործող. ծախս) արգելանք է դրվել Գայանե Ռաֆայելյանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա: Նպատակահարմար եմ գտնում, որ գործընթացը վերահսկվի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից, քանի որ գումարը գանձվելու է ԴԱՀԿ կողմից՝ հոգուտ ՊՈԱԿ-ի ,ինչի համար խնդրում եմ Ձեր հանձնարարականը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի կողմից Լոռու մարզի մի շարք դպրոցների վերաբերյալ 28.09.2017թ. կայացվել են պարտավորության գումարների վերաբերյալ գանձման որոշումներ: Ըստ այդ որոշումների Լոռու մարզի թվով 12 դպրոցների պարտավորությունը կազմել է 10.653.703 ՀՀ դրամ: Մարզպետարանը դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին՝ վերը նշված բռնագանձման որոշումներն անվավեր ճանաչելու և բարենպաստ վարչական ակտ կայացնելու խնդրանքով: Գանգատարկման հանձնաժողովի կողմից 12.12.2017թ. կայացվել է թիվ 66/6 որոշումը, որով որոշվել է նվազեցնել ՊՈԱԿ-ների պարտավորությունները ընդհանուր թվով 10.083.872 ՀՀ դրամով (94.7%), ենթակա է վճարման ընդամենը 569.131 ՀՀ դրամ (5.3%):

ՊՈԱԿ-ը	Պարտավորության գումար /ՀՀ դրամ/	ԱԱՀ	Շահութահարկ	սոց. վճար	Նվազեցված գումար	Վճարման ենթակա գումար
Վանաձորի N 15	714084	417877	296207	0	704841	9243
Տաշիրի N 2	412884	412884	0	0	412718	166
Վանաձորի N 13	839656	494488	345168	0	812694	26262
Վանաձորի N 8	678690	406328	272349	0	644992	33698
Վանաձորի N 6	1071349	598976	472373	0	1028854	42495
Վանաձորի N 23	1254930	617229	637701	0	1196938	57992
Վանաձորի N 25	928393	535485	392908	0	911537	16856
Վանաձորի N 11	799105	472348	326757	0	727825	71280
Վանաձորի N 27	920814	543259	373739	3816	893905	26909
Վանաձորի N 2	589963	371346	218617	0	481184	108779
Վանաձորի N	1111394	623758	487636	0	999053	112341

30						
Վանաձորի N 24	1332441	815363	517078	0	1269331	63110
Ընդամենը	10.653.703	6.309.341	4.340.533	3816	10.083.872	569.131
%	100	59.2	40.7	0.03	94.7	5.3

2017թ. իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն նախատեսված 35 համայնքներում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքում կազմվել են ակտեր: Կազմված ակտերը քննարկվել են փոխմարզպետների մոտ և հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների մասին պարբերաբար զեկուցվել է մարզի խորհրդի նիստերում:

2018թ. ընթացքում նախատեսվում է իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնել մարզի 20 համայնքներում:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է շուրջ 120 քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում՝ իրավական խորհրդատվություն:

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա ավարտից հետո արխիվացվում են մարզպետի և աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերի թղթային տարբերակները և հանձնվում մարզպետարանի արխիվ՝ մշտական պահպանության:

Մշտապես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրվում է տեղեկատվություն մարզպետարանի կայքում տեղադրելու համար /մարզպետի որոշումներ և կարգադրություններ, համայնքների ավագանիների որոշումներ, իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում լրացված հարցաշարեր և կազմված արձանագրություններ, վճիռներ, այլ տեղեկատվություն/:

Բաժնի կողմից կատարվել է նաև մարզի համայնքներից մարզպետարան ներկայացված իրավական ակտերի՝ համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և ավագանիների որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ստուգում:

2017թ. ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանուր առմամբ, 2017թ. ընթացքում, Լոռու մարզպետարանում մուտք է արվել **22374 /2016թ.-18724, 2015թ.-16920, 2014թ.-16830/** գործ (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ, հարցումներ, բողոքներ և այլն), ընթացք տրված կամ առաքված գործերի քանակը կազմում է ավելի քան **7011 /2016թ.-6701, 2015թ.- 6600, 2014թ.թիվ 6500/:**

Mulberri համակարգով են ստացվում ՀՀ նախագահի աշխատակազմից, ՀՀ կառավարությունից, համակարգում ներառված այլ պետական մարմիններից քաղաքացիների դիմումներ, բողոքներ, առաջարկություններ, տեղեկատվական հարցումներ, որոնց գրանցումը, փաստաթղթաշարժը, ընթացքը և վերջնական լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մասնավորապես, „Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին,, ՀՀ օրենքի, „Տեղեկատվության ազատության մասին,, ՀՀ օրենքի,

Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում Mulberri համակարգ է մուտքագրվել **5393 /2016թ.-4671, 2015թ.-4320, 2014թ.- 3260/** պաշտոնական գրություն, որից **1167 /2016թ.-1077, 2015թ.-1290, 2014թ.-990/-**ը հսկողական գրություններ են, դրանց կատարման վերահսկողությունը իրականացվել է ապարատաձրագրային և էլեկտրոնային եղանակներով: Դրանցից **1108 /2016թ.-1031, 2015թ.-1205, 2014թ.-940 /** հանձնարարականի պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է:

Հաշվետու ժամանակաշրջանում առցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել **3736 /2016թ.-3549, 2015թ.- 2600, 2014թ.- 2480/** դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում, որոնցից **551 /2016թ.-266, 2015թ.-173, 2014թ.-145 /-ը** ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Կառավարությունից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից: Դրանք բոլորը վերցվել են հսկողության, դիմումներին տրվել են համապատասխան ընթացք, ժամկետների էական խախտումներ և ուշացումներ չեն արձանագրվել:

Քաղաքացիների ընդունելության կարգի պահանջների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետի մոտ ընդունելության գրանցվողների հետ նախնական ընդունելություն թվով մոտ **790 /2016թ.-795, 2015թ.-753, 2014թ.-600/** քաղաքացի, որոնց պարզաբանվել և մեթոդական ու իրավախորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել, բացատրվել է նրանց իրավունքները, ուղղորդվել ըստ դիմումի բովանդակության, տարբեր մարմիններ ու գերատեսչություններ: Նշված քաղաքացիներից թվով **336 /2016թ.-361, 2015թ.- 252, 2014թ.-210/-ը** գրանցվել են մարզպետի մոտ ընդունելության, նրանց բարձրացրած հարցերին տրվել են համապատասխան պարզաբանումներ և ցուցաբերվել համապատասխան աջակցություններ և օժանդակություն:

2017թ-ի ընթացքում Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով / Mulberri համակարգ, առձեռն, էլեկտրոնային փոստ/ մարզային ենթակայության ձեռնարկություններից, հանրապետապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներից, անհատ ձեռներեցներից, հասարակական և այլ կազմակերպություններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է **13245 /2016թ.- 10504, 2015թ.- 10000, 2014թ.-9980 /** գրություն, որոնց տրվել է համապատասխան ընթացք՝ սահմանված կարգի պահպանմամբ:

2017թ. ընթացքում իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով **26 /2016թ.-31, 2015թ.-28, 2014թ.-28/** խորհրդակցությունների, ինչպես նաև Լոռու մարզի խորհրդի թվով **4 /2016թ.-4, 2015թ.-4, 2014թ.-4/** նիստերի արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն:

2017թ. ընթացքում անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել աշխատակազմի ծրագրատեխնիկական և համակարգչային տեխնիկական սպասարկումների աշխատանքների իրականացման ուղղությամբ, մասնավորապես, պարբերաբար և սահմանված ժամկետներում թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, ցանցի ընդլայման աշխատանքները՝ կապված նոր հաստիքների և աշխատատեղերի փոփոխությունների հետ:

Հաշվետու տարում քարտուղարության վարչատնտեսական բաժնի միջոցով իրականացվել է աշխատակազմի վարչական համալիրի շահագործման աշխատանքներ, աշխատակազմի գույքի ձեռքբերման, պահպանման /անհրաժեշտության և հնարավորության դեպքում նաև վերանորոգման/ աշխատանքներ, աշխատակազմի հեռախոսակապի, կապի, ջեռուցման և այլ ենթակառուցվածքների բնականոն աշխատանքի ապահովման, մարզպետարանի պաշտոնատար անձանց մասնակցությամբ անցկացվող արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստման և կազմակերպման ապահովման աշխատանքների իրականացում:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԴԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ